



ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. М. МАШТОЦА “МАТЕНАДАРАН”

ЭММА КОРХМАЗЯН

**МИНИАТЮРА
ВЫСОКОЙ АРМЕНИИ (БАРДЗР ХАЙКА)
XI – XIV вв.**

Подготовили к изданию
Маргарита Дарбинян-Меликян и Стелла Варданян

ЕРЕВАН – 2015

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՄՄԱ ԿՈՐԻՄԱՁՅԱՆ

**ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱ. - ԺԴ. ՊՊ.**

Հրատարակության պատրաստեցին՝
Ստեղա Վարդանյանը և Գեորգ Տեր-Վարդանյանը

Կորխմազյան Էմմա

Կ 780 Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ.-ԺԴ. դդ. է. Կորխմազյան – Եր.: Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան», 2015, 290 էջ:

Գիրքը նվիրված է հայ մշակույթի զարգացման գործում հսկայական դեր ունեցած պատմական Հայաստանի Բարձր Հայք նահանգի գրքարվեստի ԺԱ.-ԺԴ. դդ. հուշարձանների ուսումնասիրությանը: Հեղինակը բացահայտել է Բարձր Հայքի գրչության և մանրանկարչության դպրոցի ակունքները, ձեռագիր մատյանների ձևավորման և հարդարման օրինաչափությունները, այս դպրոցի կապերն ու փոխազդեցությունները հայ գրքարվեստի այլ կենտրոնների՝ Գլաձորի, Տաթևի համալսարանների, Կիլիկիայի, Ղրիմի դպրոցների և բյուզանդական Պալեոլոգյան արվեստի հետ:

Գիրքը հասցեագրված է միջնադարյան հայ արվեստի հարցերով զբաղվող մասնագետներին, հայագետներին, պատմաբաններին, բյուզանդագետներին, ինչպես նաև Հայաստանի արվեստի պատմությանը հետաքրքրվող ընթերցասեր հասարակությանը:

Ռուսերենից բնագիրը թարգմանեց Ամալյա Շահումյանը:

Издано по государственному
заказу

Эмма Корхмазян

Миниатюра Высокой Армении (Бардзр Хайка) XI – XIV вв. – Ер. Институт древних рукописей им. Маштоца “Матенадаран”, 2015, 290ст.

Монография Эммы Корхмазян “Миниатюра Высокой Армении (Бардзр Хайка) XI-XIV вв.” посвящена исследованию книжной живописи одной из провинций исторической Армении, сыгравшей огромную роль в развитии армянской культуры. На основании анализа художественного убранства рукописей Бардзр Хайка классифицированы основные группы памятников в соответствии с их хронологией и выявлены закономерности процесса формирования компонентов художественного оформления средневековой рукописной книги. Прослежены истоки и эволюция школы Бардзр Хайка, ее связи, взаимообогащение и взаимовлияние с другими центрами средневековой армянской письменности и миниатюры, такими как Гладзорский и Татевский университеты, Киликийская и Крымская школы, а также византийское искусство эпохи Палеологовского ренессанса

Книга адресована специалистам в области средневекового армянского искусства, арменоведом, историкам, византинистам, а также широкому кругу читателей, интересующихся историей искусства Армении.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ-ԺԴ. ԴԴ.....	7
ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ.....	9
ԱՌԱՋԱԲԱՆ.....	11
ԳԼՈՒԽ Ա.	
Ա. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԿՆԱՐԿ.....	19
Բ. ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ-ԺԲ. ԴԱՐԵՐՈՒՄ.....	22
ԳԼՈՒԽ Բ.	
ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԳ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	29
Ա. ՄՇՈ ՃԱՌԸՆՏԻՐԻՆ ՈՒ ՆՐԱՆ ՀԱՐՈՂ ՁԵՌԱԳՐԵՐԸ.....	29
Բ. ԺԳ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ԿԱՐԻՆԻ (ԹԵՈԴՈՍԻՈՒՈՒՊՈԼՍԻ) ՁԵՌԱԳՐԵՐԸ.....	39
ԳԼՈՒԽ Գ.	
ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԳ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ.....	46
1269 Թ. ԵՐՋՆԿԱՅԻ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶԸ.....	47
ԳԼՈՒԽ Դ.	
ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԳ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԺԴ. ԴԱՐՈՒՄ.....	56
Ա. ԺԳ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՒ ԺԴ. ԴԱՐԻ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԾԱՆԿԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ.....	57
Բ. ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՐՏԱՑՈԼԵԼ ԵՆ ՊԱԼԵՈԼՈԳՅԱՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ.....	64
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	74
ԲԱՐՁՐ ՀԱՅՔՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ ԺԱ-ԺԴ. ԴԴ.....	88
МИНИАТЮРА ВЫСОКОЙ АРМЕНИИ (БАРДЗР ХАЙКА) XI-XIV ВВ.....	91
ПАМЯТИ ЭММЫ КОРХМАЗЯН.....	93
ПРЕДИСЛОВИЕ.....	95
ГЛАВА I	
А. ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЙ ОЧЕРК.....	103
Б. МИНИАТЮРА ВЫСОКОЙ АРМЕНИИ XI-XII ВВ.....	105
ГЛАВА II	
МИНИАТЮРА ВЫСОКОЙ АРМЕНИИ НАЧАЛА XIII В.....	112
А. МУШСКИЙ ГОМИЛИАРИЙ И ПРИМЫКАЮЩИЕ К НЕМУ РУКОПИСИ.....	112
Б. РУКОПИСИ КАРИНА (ФЕОДОСИОПОЛЯ) НАЧАЛА XIII В.....	121
ГЛАВА III	
МИНИАТЮРА ВЫСОКОЙ АРМЕНИИ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XIII В.....	128
ЕРЗЫНКАЙСКАЯ БИБЛИЯ 1269 Г.	129
ГЛАВА IV	
МИНИАТЮРА ВЫСОКОЙ АРМЕНИИ КОНЦА XIII И XIV ВВ.....	138
А. ИСКУССТВО ГРАФИЧЕСКОГО РИСУНКА В ИЛЛЮСТРИРОВАННЫХ РУКОПИСЯХ ВЫСОКОЙ АРМЕНИИ КОНЦА XIII-XIV ВВ.....	139
Б. ПАМЯТНИКИ КНИЖНОЙ ЖИВОПИСИ ВЫСОКОЙ АРМЕНИИ, ОТРАЗИВШИЕ ТРАДИЦИИ ИСКУССТВА ПАЛЕОЛОГОВСКОГО РЕНЕССАНСА.....	146

КАТАЛОГ ИСПОЛЬЗОВАННЫХ РУКОПИСЕЙ.....	156
СПИСОК РУКОПИСЕЙ ВЫСОКОЙ АРМЕНИИ XI-XIV вв.....	167
SUMMARY.....	170
ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ	
БИБЛИОГРАФИЯ.....	171
СЛОВАРЬ СПЕЦИАЛЬНЫХ ТЕРМИНОВ.....	181
ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ	
СПИСОК ИЛЛЮСТРАЦИЙ.....	186

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱ. - ԺԴ. ղԷ.



Արվեստագիտութեան դոկտոր Էմմա Մուշեղի Կորխմազյանը (մոր կողմից սերունւ է Երզնկայանների տոհմից) պատկանում էր գիտնականների այն փայլուն համաստեղութեանը, որ հիսուն տարի առաջ՝ 1959 թ. ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ղեկավարութեամբ Երևանում հիմնադրեց Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանը՝ իբրև գիտական հաստատութիւն՝ Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ:

Ինչպես գիտութեան բոլոր մշակների կյանքը, նրանք ևս հարուստ չէր արտաքուստ փայլուն իրադարձութիւններով, բայց առանձնանում էր ներաշխարհի խորութեամբ ու գեղեցկութեամբ: Ծնվել է 1930 թ. Մոսկվայում, հայ մտավորականների ընտանիքում: Հայրը գոհվել է Մեծ Հայրենականում, 1941 թ. մոր հետ էվակուացվել է Երևան: Այստեղ հաջողութեամբ ավարտել է Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը, ապա 1954 թ.՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտի գծանկարչութեան բաժինը:

Նա իր ամբողջ ուժը, եռանդը, մտավոր կարողութիւններն անմնացորդ նվիրաբերեց հայ ժողովրդի հոգևոր մշակույթի կարևորագույն ճյուղերից մեկին՝ միջնադարյան մանրանկարչութեան ուսումնասիրութեան գործին: Նրա գրչին են պատկանում Ղրիմի հայ գաղթօջախի, Բարձր Հայքի և միջնադարյան Հայաստանի այլ կենտրոնների գրքարվեստին ու մանրանկարչութեանը նվիրված մի շարք արժեքավոր մենագրութիւններ, գիտական հոդվածներ ու ալբոմներ՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով (մի քանիսն այլ հեղինակների աշխատակցութեամբ): Հիմնվելով Մաշտոցի անվան Մատենադարանի և հայկական ձեռագրական այլ հավաքածուների նյութերի վրա՝ նա առաջինը բացահայտեց և ուսումնասիրեց միջնադարյան այդ դպրոցներն ու նրանց հոգևոր ժառանգութիւնը: Էմմա Կորխմազյանի աշխատութիւններից մի քանիսը, այդ թվում՝ «Ղրիմի հայ մանրանկարչութիւնը» (Երևան, 1978, Սիմֆերոպոլ, 2008) ալբոմը, սույն՝ «Բարձր Հայքի մանրանկարչութիւնը ԺԱ-ԺԴ. դդ.» գիրքը նոր էջեր են բացել միջնադարյան հայ արվեստի պատմութեան ուսումնասիրման բնագավառում: Այդ հարցերին նա անդրադարձել է նաև Երևանում, Թբիլիսիում, Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, Միլանում ու Վիեննայում կայացած միջազգային գիտաժողովներում կարգացած իր գեղուցումներով:

Ամբողջ սրտով նվիրվելով Ղրիմի հայկական հուշարձանների ուսումնասիրմանը՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան ինստիտուտի արչավախմբի (ղեկավար՝ Ֆրինա Բաբայան) հետ նա բազմիցս այցելել է Սուրխաթ և Կաֆա, որպեսզի մասնակցի Սուրբ Խաչ վանքի վերականգնման աշխատանքներին: Երբ 2008 թվականին Ղրիմի հայ համայնքը պետական մակարդակով հանդիսավոր ձևով տոնում էր Սուրբ Խաչ վանքի վերականգնման 650-ամյա հոբելյանը, Էմմա Կորխմազյանի ուսումնասիրութիւններն արժանացան հատուկ մրցանակի: Կյանքի վերջին տարիներին նա անդադար աշխատում էր Բարձր Հայքի մանրանկարչութեանը նվիրված այս մենագրութեան վրա:

Բայց նրա հետաքրքրութիւնների և զբաղմունքների ոլորտը շատ ավելի լայն էր: Էմմա Կորխմազյանը, դեռևս նախորդ դարի հիսունական թվականներին ավարտելով Գեղարվեստի ինստիտուտը, մի խումբ արվեստագետների հետ մասնակցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարի որմնանկարների վերականգնման աշխատանքներին, որը ղեկավարում էր Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովոն, ապա նույն խմբի կազմում ընդօրինակել է Տաթևի վանքի, Լմբատավանքի, Արուճի, Ախթալայի և հայկական մի շարք այլ եկեղեցիների որմնանկարները, որոնց մի մասն այսօր գոյութիւն չունի:

1970-80 թվականներին Վազգեն Ա. Վեհափառի պատվերով էմմա Կորխմազյանը Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի և այլ մեծանուն միջնադարյան վարպետների մանրանկարների հիման վրա ստեղծել է սրբապատկերներ, որոնք այսօր գարդարում են Հայաստանի և սփյուռքի մեր եկեղեցիները:

Նշանավոր շատ հայագետներ բարձր են գնահատել էմմա Կորխմազյանի ներդրումը հայ արվեստի ուսումնասիրման գործում: Սիրարփի Տեր-Ներսեսյանի, Լիդիա Գուլուբովայի և Տատյանա Իզմայլովայի անունների կողքին նրա անունը գրվեց միջնադարյան հայ մանրանկարչության պատմության Ոսկե մատյանում: Երբևէ որևէ մեծարանքի ու փառքի չձգտած այս համեստ կինը սերտ կապերի մեջ էր նշանավոր հայագետների ու արվեստագետների հետ. նրա մտերիմ բարեկամներն էին Անատոլի Յակոբսոնը և Տատյանա Իզմայլովան (Էրմիտաժ), Մխիթարյան միաբանության արքայեր Հ. Գրիգորիս վ. Մանյանը, Հ. Պողոս վ. Գոճանյանը և արվեստագետներ Հայդե և Հելմուտ Բուշհաուզենները (Վիեննա), Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Լյուդմիլա Կիսելյովան, Սիմֆերոպոլի համալսարանի պրոֆեսոր Օլեգ Գաբրիելյանը և շատ ուրիշներ: Նրա խնամակալ և հոգածու հայացքի ներքո աճել է շնորհալի մասնագետների մի ամբողջ սերունդ, որն այսօր շարունակում է նրա նվիրական գործը:

Ներկա պատկերագիրք-ուսումնասիրությունը հրատարակության է պատրաստվել երկարամյա ջանքերով: Այն համալրվել է Մատենադարանի և արտերկրի ձեռագրական նյութերով:

Այս ընթացքում ստացել ենք Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի N 1925 Երզնկայի Աստվածաշնչի անհրաժեշտ էջերի լուսանկարները, որի համար շնորհակալություն ենք հայտնում Երուսաղեմի հայոց պատրիարք Ամենապատիվ Տեր Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին և Շնորհք արքեպ Պալոյանին: Ստացել ենք նաև Մխիթարյան միաբանության Վենետիկի մատենադարանի N 325 Կարնոյ Աւետարանի լուսանկարները, որոնց համար երախտապարտ ենք Մխիթարյան միաբանության ընդհանրական արքայ Հ. Եղիա ծ. վ. Քիլազյանին և լուսանկարիչ Հրայր-Բագե Խաչերյանին: Շնորհակալություն ենք հայտնում Մատենադարանի աշխատակից նկարչուհի Լիլիթ Ամիրջանյանին մանրանկարների ցանկը կազմելուն աջակցելու համար:

Երզնկայի Ավագ վանքի լուսանկարները տրամադրելու համար խորապես շնորհակալ ենք Սամվել Կարապետյանին:

Ստելլա Վարդանյա

ԱՌԱՋԱԲԱՆ

Բարձր Հայքը պատմական Հայաստանի հյուսիս-արևմտյան նահանգներից մեկն է: Այն կազմված էր ինը գավառից. Դարանաղի, Աղյուռն (Առյուծ), Մուզուր (Մընձուր), Եկեղյաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղագոմ, Կարին¹: Հետագայում ամբողջ նահանգը անվանվել է վերջին գավառի և համանուն գլխավոր քաղաքի անունով Կարնո աշխարհ (այժմ՝ Թուրքիայի Էրզրումի վիլայեթ):

Է. դ. «Աշխարհացույցում» նահանգի անվանումը այսպես է բացատրվում. «Հիրավի, ինչպես ցույց է տալիս անունը, Բարձր Հայքը արդարև բարձր է, ոչ միայն Հայաստանի մնացյալ մասերից, այլև ամբողջ Երկրից, որի համար էլ այս աշխարհը կոչեցին Կատար Երկրի» (21, էջ 106):

Տեղադրված լինելով բազմաթիվ լեռնաշղթաներով հատվող բարձրավանդակում՝ այս երկիրը խոշոր ջրբաժան է, որտեղից սկիզբ են առնում բազմաթիվ գետեր. Եփրատը, որը հոսում է դեպի Պարսից ծոցը, Երասխը (Արաքսը), որը թափվում է Կասպից ծովը, Գայլը (Լիկոս), Ճորոխը (Ակամսիս, Վոխ), որոնք հոսում են դեպի Սև ծովը և այլք (40, 44):

Այստեղի հողն աչքի է ընկնում իր հարուստ բուսականությամբ, գյուղատնտեսական մշակաբույսերի բազմազանությամբ, որոնց մշակությամբ այստեղ զբաղվում էին անհիշելի ժամանակներից²: Կենդանական

աշխարհը բազմազան և հարուստ էր (չատորս կար), ընդերքը հարուստ էր օգտակար հանածոներով, իսկ երկրի մակերևույթ էին ելնում բազմաթիվ բուժիչ հանքային ջրեր³: Բարձր Հայքի քաղաքները հնուց ի վեր գտնվում էին առևտրական կարևոր ուղիների խաչմերուկում, որը նպաստում էր արհեստների, առևտրի, մշակույթի ու արվեստների զարգացմանը: Հնագույն շրջանում այստեղ կային հեթանոսական տեղական աստվածությունների պաշտամունքի կենտրոններ. նրանց պատվին տաճարներ էին կառուցվում և կուռքերի արձաններ կանգնեցվում: Դժվար է ասել, թե ինչ տեսք ունեին հեթանոսական Հայաստանի կուստներում դրվող կուռքերը. մեզ են հասել հնագույն արձանների, խճանկարների, կենցաղային իրերի միայն հազվագյուտ նմուշներ: Այժմ պեղումներ են կատարվում միայն Հայաստանի Հանրապետության տարածքում (17, 18, 44, 62, 100, 163, 195, 201, 217), մինչդեռ պատմական Հայաստանի զգալի մասը, ուր գտնվում է նաև Բարձր Հայքը, հայ հնագետներին մատչելի չէ, և այդ պատճառով շատ արժեքավոր են Ֆրանսիացի գիտնական Միշել Թիերիի աշխատությունները, որոնց մեջ ուսումնասիրված են Արևմտյան Հայաստանի մի շարք ճարտարապետական հուշարձաններ, այդ թվում նաև Բարձր Հայքի մի քանի եկեղեցիների մնացորդներ (270, 271):

Հայաստանի հնագույն մշակույթի, նրա տարածքում գտնված հեթանոսական տաճարների մասին շատ արժեքավոր տեղեկություններ կան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Օրինակ՝ նա հայտնում է, որ Արմավիրում կառուցված կուստանը դրված էին Արեգակի և Լուսնի (հայկական Տիր և Անահիտ) աստվածների ար-

¹ Այս գավառին վերաբերող տեղեկությունները տե՛ս հետևյալ աշխատություններում՝ 6, 8, 14, 28, 40, 51, 67, 73, 75, 87, 88, 216 և այլն: Գրքիս մեջ թավ թվերով նշված են մատենագիտության մեջ թվարկված աշխատությունների համարները, իսկ ուղիղ թվերով՝ նրանց էջահամարները:

² Այս նահանգի տարածքը համարվել է բերլիական դրախտի՝ Եդեմի ենթադրյալ վայրերից մեկը: Այստեղից են սկիզբ առնում Տիգրիս, Եփրատ, Փիսոն (Փասիս) և Գեհոն (Երասխ) գետերը: Ըստ պատմիչների տեղեկությունների՝ այս նահանգի բնությունը հնում ավելի հարուստ էր, քան՝ այժմ: Դարերի ընթացքում այն բազմիցս ասպատակվել է բարբարոս ցեղերի կողմից, որոնք գալիս էին Միջին Ասիայի տափաստաններից, մեծ ավերածություններ էին պատճառում նաև այս նահանգում հաճախակի տեղի ունեցող երկրաշարժերը:

³ Մարկո Պոլոն վկայում է Երզնկա քաղաքի մոտ գտնվող նավթի հարուստ պաշարների մասին (165, 56, 1, 298): Կլավիխոն, որը Ժե. դ. եղել է Երզնկայում, ասում է, որ այնտեղ շատ ջերմուկներ կային, իսկ ըստ Ռամոնգոյի (ԺՁ. դ.) տեղեկությունների Բաբերդի շրջակայքում արծաթի հանքեր կային (նույն տեղում, ծ. 1 և 4):

ճանները, որոնցից երկրորդը, սկզբում պաշտվելով որպես մայր-աստվածուհի, իր մեջ էր ներառում մի քանի աստվածուհի-յուհուների՝ սիրո, պողաբերության, այգե-գործության հովանավորի և անգամ պատե-րազմի աստվածուհու գործառությունները (62, 157, 65ա, 135, 92, 173, 195, 217): Խորենացին հին աստվածներից հիշատակում է նաև հունական Զևսին համապատասխանող շանթաձիգ, գերագույն աստված Արամագ-դին, սիրո աստվածուհի Աստղիկին, վիշա-պաքաղ Վահագնին, երկնքի տիրակալ Բարշամինին և այլոց: Որոշ տաճարներում կանգնեցվում էին նաև հայ արքաների նախնիների արձանները. այդ առիթով Մ. Էմինը նկատել է, որ հայերը, ինչպես մա-րերն ու պարսիկները, արքաներին աստվա-ծային ծագում էին վերագրում և սովորութ-յուն ունեին տաճարներում նրանց պատ-կերները զետեղել աստվածությունների պատկերների կողքին (217, 233): Ցավոք, պատմիչներն այդ արձանները չեն նկա-րագրել: Հայտնի է միայն, որ որոշ արձան-ներ պատրաստված էին թանկարժեք քարե-րից ու մետաղներից: Այսպես՝ Խորենացին հայտնում է, որ Բարշամինի արձանը «չին-ված էր փղոսկրից ու բյուրեղից և արծաթով էր զարդարված» (65ա, 167): Հենց այդ պատճառով կուստների գանձերը բազմիցս թալանվել են: Ա. Քյուրտյանը, հղելով Պլի-նիոսին, գրում է, որ Անտոնիոսի զինվորնե-րը կոտրել են Անահիտ աստվածուհու ոսկե արձաններից մեկը, իսկ ոսկին իրար մեջ բաժանել (88, 13):

Ըստ Մովսես Խորենացու «Հայոց Պատ-մության»՝ որոշ կուստներում տեղադրվել էին հունական աստվածների արձաններ, ո-րոնք Հայոց Արտաշես Ա. արքան (մ. թ. ա. Բ. դ.) բերել էր Փոքր Ասիայի նվաճված շրջաններից, ինչպես նաև՝ Հունաստանից: Հունական աստվածների արձանները դրվել էին համապատասխան հայկական աստվա-ծներին նվիրված տաճարներում⁴: Տիգրան

Մեծի ժամանակ (մ. թ. ա. Ա. դ.) այդ ար-ձանների մի մասը տեղափոխվել է Երիզա, Թիլ, Բագաղառիճ ու Աշտիշատ քաղաքներ: Անահիտ աստվածուհուն նվիրված Երիզայի տաճարը սկսել էր բարգավաճել, որովհետև թանկարժեք նվերներ էր ստանում: Անահի-տի պաշտամունքը հին Հայաստանում լայն տարածում էր ստացել, իսկ Եկեղյաց գավա-ռը, ուր գտնվում էին այդ աստվածուհու գլխավոր կուստները, այդ ժամանակ կոչ-վում էր Անահտական⁵:

Հույները հավանաբար շատ ցավազին էին ընկա-լում իրենց աստվածների «գերեվարման» փաստը: Այդ տեսակետից բնորոշ է Ագամեմնոն արքայի դուստր Իփիգենիայի մասին առասպելը. նա իր եղբայր Օրեստոսի հետ անցել էր Եփրատի մյուս ափը՝ Էկիլիսենա երկիրը (Հույներն այսպես էին կոչում Եկեղյաց գավառը), ուր գտնվում էր Անա-հիտ աստվածուհու տաճարը, և ուր դրված էր Ար-տեմիսի արձանը, որը նրանք փախցնում են ու ետ տանում Հունաստան (192, 85):

⁵ Պատմիչների տեղեկությունների համաձայն Ա-նահիտ աստվածուհուն նվիրված Երիզայի տաճա-րի մոտակայքում ցուլեր էին բուծում և դրանք զոհաբերում աստվածուհուն: Այդ ցուլերն ան-ձեռնմխելի էին (23, 79): Ուշադրության է արժա-նի այն փաստը, որ դեռևս շատ վաղ շրջանում ցուլը պաշտամունքի առարկա էր Փոքր Ասիա-յում բնակվող ժողովուրդների համար («ոսկե ցլի-կի» պաշտամունքի ավանդույթը հիշատակվում է նաև Աստվածաշնչում): Բարձր Հայքի տարած-քում գտնվել են բազմաթիվ գավաթներ, որոնց հիմքը ցլի գլուխն է: Գտնվել են նաև ցուլերի և կիսացուլերի ձուլածո արձանիկներ (13, նկ. LIX, LX): Այդ տարածքում ցլի պաշտամունքի տարած-վածությունը արտացոլվել է նաև մի շարք աշ-խարհագրական անվանումներում: Այսպես՝ Բարձր Հայքի գյուղերից մեկն ուներ Եզն անվա-նումը, որոշ հայ պատմիչներ Հայկական Տավրոսը Ցուլ են կոչում, նույն անունն ունի նաև այդ լեռնաշղթայի գագաթներից մեկը (62, 102): Ի դեպ՝ «taurus» բառը հունարեն նույնպես նշանա-կում է «ցուլ»: Ղրիմում հաստատված փոքրա-սիացիները, որոնք շարունակում էին պաշտել նույն կուսքերը, թերակղզին անվանել էին Տավ-րիկա կամ Տավրիդա: Ասատուր Մնացականյանը, անդրադառնալով ցլի պաշտամունքի հարցին, բե-րել է բազմաթիվ փաստեր, որոնք արտացոլում են այդ պաշտամունքի գոյությունը որոշ ծեսերում, ժողովրդական երգերում և նույնիսկ «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպում (64, 534-537): Հե-տաքրքրական է, որ որոշ գիտնականներ Երզնկա քաղաքի անունը ստուգաբանում են հենց «Եզնի կայք» ձևով, որը հուշում է հնում այդ շրջանում ցլի պաշտամունքի տարածված լինելու մասին (23, 79):

⁴ Մ. Էմինը գրում է. «Օրինակ՝ Օլիմպիական Դիոսի արձանը տեղադրել էին աստվածների հորը՝ Արա-մագդին նվիրված Անիի (Անի-Կամախ) տաճա-րում, Աթենասինը՝ Թիլում՝ Բարձր Հայքի Եկեղ-յաց գավառում, Նանե աստվածուհու տաճարում: Արտեմիսի արձանը՝ Երիզայում՝ նույն նահանգի նույն գավառի մեկ այլ գյուղում, ուր գտնվում էր Անահիտ աստվածուհու տաճարը» (217, 38):

Մեծ հետաքրքրություն ունեն կոմմագենեում հայտնաբերված հին կոռքերի ու արքաների հսկա արձանների մնացորդները: Գ. Սարգսյանը համարում է, որ այդպիսի արձաններ պետք է լինեին նաև Հայաստանում, որը կոմմագենեից բաժանվում էր ընդամենը Եփրատ գետով, և այստեղ նրանց բացակայությունը բացատրում է պատմական Հայաստանի տարածքում հնագիտական աշխատանքների անբավարար վիճակով (195, 34, 202, 112-113):

Հունական աստվածների արձանների հայտնվելը Հայաստանում չէր կարող չազդել տեղական մշակույթի վրա: Բ. Առաքելյանը նշում է, որ հունական մշակույթի ազդեցությունը նպաստել է հայկական մշակույթի հելլենական ուղղությունից զարգացմանը (99, 36): Հայաստանի տարածքում գտնված հելլենական մշակույթին վերաբերող նյութի մասին այլ կարծիք է հայտնել Լ. Ազարյանը. այդ նյութի սակավությունը նրան առիթ էր տվել կասկածելու, որ երկրի մշակույթի վրա հելլենական արվեստի ազդեցությունը զգալի է եղել: Ավելին՝ ելնելով մեզ հասած ծիսական հին արձանների բնույթից՝ նա նկատել է, որ դրանք պատրաստված են էսթետիկական լիովին այլ սկզբունքների, այլ աշխարհընկալման հիմունքներով, և որ Հայաստանի տարածքում հայտնաբերված արձանների հազվագյուտ բեկորները (Անահիտ աստվածուհու գլուխը, կին աստվածուհու մարմինը և կիրառական արվեստի սակավաթիվ իրերը) այն արձանների մնացորդներն են, որոնք՝ որպես ռազմավար, Հայաստան էին բերվում Հունաստանից կամ Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից (5, 13-31):

Այսօր մենք կարող ենք միայն մոտավոր պատկերացում ունենալ հին հեթանոսական տաճարների բնույթի, նրանց սպասքի ու զարդերի մասին: Ագաթանգեղոսը (Ե. դ.) իր «Հայոց Պատմության» մեջ պատկերավոր կերպով նկարագրում է, թե ինչպես քրիստոնեությունը հաստատման շրջանում ոչնչացվում էին հեթանոսական տաճարներում պահվող անհամար գանձերը. Տրդատ Գ. արքան ու Գրիգոր Լուսավորիչը «ի բազում տեղեաց բառնային զգայթակղեցուցիչսն, անմռունչս, զձուլեալսն, կռեալսն, կոփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, ա-

նօգուտսն, վնասակարսն, արարեալսն անմտութեամբ ցնորելոց մարդկան...» (2ա, 410): Այս բառերը պերճախոս կերպով վկայում են, որ հին Հայաստանում կային բազմաթիվ նման հուշարձաններ (Ագաթանգեղոսի խոսքերով՝ «գայթակղիչ, վնասակար» կոռքեր), որոնք պատրաստված էին տարբեր եղանակներով և տարբեր նյութերից՝ փայտից, քարից, բրոնզից, պղնձից, արծաթից, ոսկուց, մարմարից, փղոսկրից և այլն⁶:

Քրիստոնեության հաստատման ընթացքում ավերվող հեթանոսական կռատների տեղում սկզբում խաչեր էին տեղադրվում, իսկ հետո նույն վայրում եկեղեցիներ էին կառուցվում՝ հաճախ օգտագործելով քանդված հեթանոսական տաճարների քարերը: Այսպես՝ Երիզա քաղաքում Անահիտ աստվածուհու տաճարի տեղում կառուցվել է Աստվածամոր տաճարը⁷:

Քրիստոնեություն ընդունելուց (301 թ.) հետո Բարձր Հայքի քաղաքները դառնում են նոր վարդապետության կենտրոններ: Պատմիչների տեղեկությունների համաձայն եկեղյաց գավառը հանդիսացել է քրիստոնեության օրրանը Հայաստանում (88, 51): Դ. դարի վերջում Գրիգոր Լուսա-

⁶ Կ. Տրեկերը Լուկիանոսի երկխոսություններից բերում է մի հատված, ուր ասված է, որ երբ Զևսը Հերմեսին հրամայեց աստվածներին տեղավորել ոչ թե ըստ ծագման, այլ ըստ հարստության, պարզվեց, որ առաջին տեղերին կարող էին հավակնել միայն «բարբարոսների աստվածները», որոնք պատրաստված էին ոսկուց և այլ թանկարժեք նյութերից, մինչդեռ հելլենական աստվածները, որոնք պատրաստված էին մարմարից, փղոսկրից, փայտից, հայտնվում էին ետին շարքերում: Հերմեսը վրդովվում էր. «Ահա Բենդիդան և Աթիսը, իսկ նրանց կողքին Միհրն ու Մենը, որոնք լրիվ պատրաստվել են ոսկուց, դրանք ծանր են և իսկապես արժեք ունեն» (204, 92):

⁷ Կ. Մելիք-Փաշայանն ուղղակի կապ է տեսնում Անահիտ աստվածուհու և Աստվածամոր պաշտամունքների միջև. «Անահիտին նվիրված տոները շարունակում էին կատարվել Աստվածամորը նվիրված եկեղեցիների շուրջ նույն օրերին, սակայն արդեն Աստվածամոր անվան տակ: Այս ամենը վկայում է այն մասին, որ Աստվածամայրը հանդիսանում է Անահիտի հետնորդը, և վերջինիս պաշտամունքի մնացորդները պետք է փնտրել Աստվածամոր պաշտամունքի մեջ» (62, 160): Ըստ ավանդության՝ երզնկա քաղաքի Աստվածամոր եկեղեցու շուրջը ցուլեր էին թափառում ինչպես նախկինում, երբ եկեղեցու տեղում կանգնած էր Անահիտին նվիրված տաճարը:

վորիչն այստեղ հիմնադրել է Թադևոս առաքյալին⁸ ու Հովհաննես Մկրտչին⁹ նվիրված եկեղեցիներ: Իսկ Երզնկա քաղաքից ոչ հեռու՝ Թորգան գյուղում, նույն ժամանակներում հիմնադրվել է մի վանք, ուր գտնվում էր Տրդատ Գ.ի և նրա շառավիղների հանգստարանը. հետագայում այնտեղ է տարվել նաև Գրիգոր Լուսավորչի աճյուղը (88, 46):

Մեսրոպ Մաշտոցը 405 թ. ստեղծեց հայոց այբուբենը և սկսվեց հայկական մշակույթի նոր դարաշրջան, դրվեց ազգային գրականության հիմքը¹⁰: Մեսրոպի աշակերտների ու համախոհների շարքերում էին նաև վանականներ Բարձր Հայքից: Այսպես՝ Մեսրոպ Մաշտոցի աշակերտ ու նրա Վարքի հեղինակ Կորյունը գրում է, որ Մաշտոցը Սամոսատում եղած ժամանակ «ձեռնամուխ եղավ թարգմանչական աշխատանքներին իր երկու աշակերտների հետ, որոնցից առաջինը Հովհանն էր՝ Եկեղյաց գավառից, և երկրորդը՝ Հովսեփը՝ Պաղանական տնից» (38): Այդ կապակցությամբ Հարություն Քյուրտյանը նկատում է, որ Հովհան Եկեղեցացին հմուտ էր գրչության արվեստին և կարող է համարվել ծագումով Բարձր Հայքից առաջին գրիչը (88, 64)¹¹: Այստեղ ստեղծվող

⁸ Թադևոսն ու Բարդուղիմեոսը եղել են Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչներից, այդ պատճառով հայոց եկեղեցին առաքելական է կոչվում: Քրիստոնեության պաշտոնական ընդունումը Հայաստանում տեղի է ունեցել Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ. արքայի օրոք:

⁹ Համաձայն ավանդության՝ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից բերեց Հովհաննես Կարապետի մասունքները:

¹⁰ Որոշ գիտնականներ համարում են, որ Հայաստանում գիր գոյություն է ունեցել մեսրոպյան գյուտից առաջ (217, 204-230, 184, 221, 173, 250, ծ. 476): Ըստ Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցը սկզբում փորձել է օգտագործել ավելի հին՝ այսպես կոչված Դանիելյան գրերը (38, 46): Նորաբաց եկեղեցական դպրոցներում որոշ ժամանակ այդ գրերով ուսուցանելով պատանիներին՝ շուտով համոզվել են, որ դրանք բավարար չեն և չեն արտահայտում հայոց լեզվի բոլոր հնչյունները, ուստի և անհրաժեշտ է ստեղծել նոր այբուբեն, ինչը և իրագործեց Մեսրոպ Մաշտոցը:

¹¹ Մ. Խորենացու «Հայոց Պատմության» մեջ ևս հիշատակություններ կան Մեսրոպ Մաշտոցի աշակերտների մասին. «Եվ իսկույն ձեռնարկեցին թարգմանության, խորհրդաբար սկսելով (Սողոմոնի) Առակներից... Նույնպես և նրա աշակերտները, Հոհան Եկեղեցացին և Հովսեփ Պաղանացին...» (65ա, 293):

դպրոցներին կից գործում էին գրչատներ: Սակայն այդ վաղ շրջանից ամբողջական ոչ մի ձեռագիր մեզ չի հասել¹²:

Երկրի հոգևոր կյանքի վերելքը չէր ուղեկցվում քաղաքական կյանքի հաջողություններով: Դեռևս Դ. դ. վերջում Հայաստանի հզոր հարևաններ Բյուզանդիայի և Իրանի ռազմատենչ քաղաքականությունը հանգեցրեց երկրի բաժանմանը (387 թ.): Այդ ժամանակ Բարձր Հայքի գրեթե բոլոր գավառներն անցան Բյուզանդիայի տիրապետության տակ: Աղբյուրների ուսումնասիրության հիման վրա Ն. Ադոնցը եզրակացրել է. «... նախկին Մեծ Հայքի գավառները Սատրապությունները և Ներքին Հայքը (վերջինիս կազմի մեջ էին մտնում նաև Բարձր Հայքի որոշ գավառներ – է. Կ.) իրենց բնույթով ազատ տիրույթներ էին. նրանք, թեև արտաքնապես կցված էին կայսրությանը, բայց ներքին կյանքով ու կառուցվածքով միանգամայն ինքնուրույն էին» (94, 104): Այսպես կոչված հռոմեական Հայաստանի կենտրոնը դարձավ Կարին քաղաքը, որը կարևոր սահմանային հենակետի դեր էր կատարում: Բյուզանդիայի կայսր Թեոդոսիոս Ա.ի թագավորության ժամանակ՝ 421 թ., քաղաքը կառուցապատվում և նոր անուն է ստանում՝ Թեոդոսիոպոլիս (79, 63-69):

Է-Ը. դդ. Հայաստանը նվաճում են արաբները: Թ. դ. համառ ու երկարատև պայքարից հետո երկիրը թոթափում է արաբական լուծը և Ժ-ԺԱ. դդ. սկզբում տնտեսական ու մշակութային զարթոնք է ապրում: Այդ ժամանակաշրջանում միջազգային առևտրում աշխուժացած Բարձր Հայքի քաղաքները կարևոր դեր էին կատարում: Մասնավորապես՝ մեծ նշանակություն է ձեռք բերում Արճեշից Մանագիկերտով՝ Խնուսով, Երզնկայով դեպի Սեբաստիա տանող ճանապարհը (162, 237): Աշխուժանում է շինարարական գործունեությունը, վերականգնվում և կառուցվում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ պաշտամունքային շինություններ, մեծ զարգացում են ապրում հոգևոր

¹² Զ-Թ. դդ. ձեռագրերի պատահիկներ պահպանվել են պահպանակների տեսքով, որոնց գրչության ժամանակի ու վայրի որոշումը դժվար է:

մշակույթի կենտրոնները՝ եկեղեցական դպրոցներն ու համալսարանները, աշխուժանում է գրչատների գործունեությունը: Այդ ժամանակաշրջանից մեզ են հասել գրչության և մանրանկարչության առանձին հուշարձաններ, մի մասը՝ Բարձր Հայքի գրչության կենտրոններից, որոնց կանդրադառնանք ստորև:

ԺԱ. դ. 20-ական թվականներից իրավիճակը Հայաստանում վատթարանում է. Բյուզանդական էքսպանսիան արևմուտքից և սելջուկների արշավանքներն արևելքից կտրուկ կերպով փոխում են երկրի քաղաքական քարտեզը: Հայոց թագավորություններն ու իշխանությունները մեկը մյուսի ետևից ընկնում են: ԺԲ. դ. սկսվում են մոնղոլ-թաթարների արշավանքները: Նրանց առաջին հայտնությունը որոշ վայրերում այնքան էլ ողբերգական ձևով չի ընկալվում, քանի որ դեռևս մահմեդականություն չընդունած մոնղոլները պայքարի մեջ են մտնում սելջուկ ամիրաների՝ հայ ժողովրդի դաժան կեղեքիչների հետ: ԺԳ. դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին այդ կապակցությամբ գրում է. «Նրանց մասին սուտ լուրեր էին հասնում, թե մոգեր են, հավատով քրիստոնյաներ ու հրաշագործներ և եկել են՝ քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների գործած չարիքների վրեժը լուծելու: Եվ ասում էին, թե վրանի եկեղեցի ու հրաշագործ խաչ ունեն... Եվ այդպիսի սուտ համբավը տարածվեց երկրում: Այս էր պատճառը, որ մեր երկրի բնակիչները չամրացան... Եվ այսպես շատերին անհոգ գտնելով՝ կոտորեցին ու ավերեցին բազմաթիվ տեղեր...» (37, 148)¹³: Սակայն

¹³ Այդ համբավը բավական տարածում էր ստացել: Հետաքրքրական է այդ տեսակետից Լ. Խաչիկյանի ենթադրությունը Հայասնի կրիկյան մանրանկարիչ Թորոս Ռոսլինի հեղինակած մի մանրանկարի կապակցությամբ: Նրա ծաղկած Ավետարաններից մեկում (Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից մատենադարան ձեռ. Հ³ 251, 14բ) մոգերի երկրպագության տեսարանում մոգերի հետ միասին պատկերված են ևս երեք անձ, որոնց դեմքերը տարբերվում են իրենց գույնով. դրանք մուգ վարդագույն երանգ ունեն: Ինչպես տեղեկանում ենք մանրանկարի արձանագրությունից, նրանք թաթար-մոնղոլներ են: Նման պատկերի գոյությունը Լ. Խաչիկյանը բացատրում է մոնղոլներին՝ որպես սելջուկներից փրկիչների ընկալմամբ (29, 127, տե՛ս նաև 117, 112-113):

նոր գավթիչների կատարած ավերածություններն ու թալանը շատ շուտ ցրեցին այդ պատրանքները:

Նվաճած տարածքում հզոր կենտրոնացված պետություն ստեղծելու մոնղոլների ձգտումը պահանջում էր երկրի տնտեսական ամրապնդում, որն անհնարին էր առանց տեղական ուժերի ներգրավման (104, 127-142, 163, 202-221): Այդ կապակցությամբ Հ. Մանանդյանը գրում է. «Պահպանելով Հայաստանի ավատատիրական կարգը և ավատատերերին վերապահելով իրենց նախկին իրավունքների ու տիրույթների մի մասը, մոնղոլներն օգտագործեցին այդ կարգը որպես տեղական կառավարման պատրաստի ապարատ, ինչպես նաև օգտագործեցին ավատատիրական Հայաստանի ռազմական ներուժը Փոքր Ասիայի սելջուկների, Բաղդադի խալիֆայության, մամլուքների ասորեգիպտական պետության ու Ռսկե Հորդայի խաների դեմ, հետագայում՝ իրենց իրականացրած նվաճողական արշավներում» (162, 268):

Բնակչությունը համառ դիմադրություն էր ցույց տալիս նոր նվաճողներին, սակայն ուժերն անհավասար էին: Երկու հարյուրամյակ տևած սելջուկյան լուծը վերջնականապես թուլացրել էր երկիրն, ու այդ պատճառով բնակչության պայքարը մոնղոլ անհամար հորդաների դեմ դատապարտված էր անհաջողության: ԺԳ. դ. հայ պատմիչ Վարդանը իր «Հայոց Պատմության» մեջ գրում է, որ Երզնկա քաղաքի բնակիչները «անխիղճ կերպով բնաջնջվել էին, որովհետև դիմադրություն էին ցույց տվել, և բազմաթիվ շրջաններ, ուր ապրում էր մեր բազմաչարչար ժողովուրդը, ավերվել էին»¹⁴:

Հայկական տարբեր գրավոր աղբյուրներում մոնղոլներին տարբեր գնահատական է տրվում, և յուրաքանչյուր դեպքում այդ

¹⁴ Խոսելով հայերի տխուր ճակատագրի մասին՝ Վարդան պատմիչը, ինչպես և միջնադարյան այլ հեղինակներ, ճակատագրական նշանակություն էին վերագրում Երզնկայի ավերման տարվա տառային գրությունը. «Այդ տարվա տառերն են ՈՂԲ», և իսկապես այդ օրերին տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնք արժանի են արցունքի ու ողբի» (136, 8):

զնահատականը կախված է այս կամ այն մոնղոլ տիրակալի՝ տեղական բնակչուության նկատմամբ ցուցաբերած դաժանության կամ հանդուրժողականության աստիճանից (104, 146):

Նվաճած տարածքները մոնղոլները բաժանել էին լայնարձակ կուսակալությունների, որոնցից մեկի մեջ էին մտնում Հայաստանը, Վրաստանը, Առանը, Շիրվանն ու Ատրպատականը: Այդ կուսակալությունն իր հերթին բաժանվում էր հինգ վիլայեթների, ընդ որում՝ Հայաստանը կիսվում էր. Վրաստանն ու Հայաստանի մի մասը (Այրարատ, Սյունիք, Արցախ, Գուգարք, Կարս) կազմում էին մի վիլայեթ, որն անվանվել էր Գյուրջիստան: Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները մտնում էին մեկ այլ վիլայեթի մեջ, որը կոչվել էր Մեծ Հայք, և որի կազմի մեջ էին նաև Բարձր Հայքի գավառները:

Օտարազգի բռնապետների հաճախակի փոփոխման և տեղական բնակչության պարբերական կողոպուտի ու բնաջնջման պայմաններում Բարձր Հայքի տարածքը, թեև աստիճանաբար բնակեցվում էր ասպատակող ժողովուրդների գանգվածներով, սակայն դեռ երկար ժամանակ, ընդհուպ մինչև փ. դ., բնակեցված էր հիմնականում հայերով: Այստեղ գտնվող հայկական հողերը կենտրոնները շարունակում էին գործել՝ մնալով ազգային մշակույթի գարգացման ու պահպանման կարևոր օջախներ: Ազգային ինքնապահպանման խնդիրը իր արտահայտությունն է ստացել առաջին հերթին դարավոր պատմություն ունեցող սեփական մշակույթի ու արվեստի պահպանման ու զարգացման մեջ: Եվ չնայած նրան, որ ուշ միջնադարյան գրավոր աղբյուրներում Բարձր Հայք եզրը հազվադեպ է հանդիպում, մենք պահպանել ենք այդ շրջանի հին անվանումը, որը շարունակում էր ապրել իր սովորություններով ու ավանդույթներով, որոնք իրենց վառ արտացոլումն են գտել այդտեղ ստեղծված արվեստի ու, մասնավորապես, մանրանկարչության մեջ: Պետական իշխանության բացակայության պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում եկեղեցին, որը երկար դարերի ընթացքում

դառնում է ազգային միավորման հիմնական ու կարևոր գործոն՝ կատարելով ոչ միայն հողեր, այլև աշխարհիկ իշխանությունների:

Մոնղոլները բավական նենգ քաղաքականություն էին վարում՝ հետևողականորեն թուլացնելով տեղական ավատական տները և աստիճանաբար զավթելով նրանց տիրույթները: Հասկանալով իրենց սպառնացող վտանգը՝ հայկական իշխանական ընտանիքների շատ ներկայացուցիչներ այդ ժամանակ թաքնվում էին վանական փարաջայի տակ, ինչը նրանց հնարավորություն էր տալիս պահպանել իրենց տիրույթների գոնե մի մասը: Նրանք այն հանձնում էին եկեղեցուն և այդպիսով ավելի քիչ էին կողոպտվում (46, 26, IX-XV, 104, 146): Սակայն եկեղեցու ստացած արտոնությունները շատ փոփոխական բնույթ էին կրում: Տեղական հայ ազնվականության և կղերականության ներկայացուցիչները ստիպված էին նորից ու նորից թանկարժեք ընծաների և բարդ դիվանագիտական բանակցությունների միջոցով իրավունք ստանալ տիրելու սեփական հողերին՝ ապահովելու եկեղեցու անձեռնմխելիությունը և այն ազատել հարկերից¹⁵:

Այդ ժամանակի որոշ հայ գործիչներ երբեմն համարձակվում էին պաշտպան կանգնել ժողովրդին: Այսպես՝ Վարդան պատմիչի տվյալներով Հուլաղու խանի կինը, որը քրիստոնյա էր, իր ամուսնու մահվանից հետո դիմել է հայ քահանաներին (նրանց մեջ էր նաև պատմիչը)՝ հարցնելով, թե արդյո՞ք պետք է պատարագ մատուցել մահացածի պատվին: Քահանաները պատասխանել են այնպես, ինչպես պահանջում էին հայ ժողովրդի շահերը. «Մենք ասացինք, որ

¹⁵ Այդ կապակցությամբ հետաքրքիր է Ստեփանոս Օրբելյանի հաղորդած մի պատմություն Սյունյաց Դավիթ իշխանի մասին. վերջինս ուներ չափազանց փայլուն, կարմիր գույնի թանկագին մի գոհար, որից ճառագայթներ էին ցայտում, ինչպես կրակից. գիշերն այն տունը լուսավորում էր ջահի նման: Դավիթը գոհարն ուղարկում է Սմբատ Օրբելյանին, որը, նվերը ստանալով, մտքում խորհում է. «Եթե սա պահեմ, ինձ վատ կլինի», ուստի գոհարը տանում է մեծ խանին, և Մանգու խանը Սմբատին վերադարձնում է իր բոլոր տիրույթները (72, 325-326):

պետք է պատարագ մատուցել, այլ ավելի լավ կլիներ ողորմություն բաժանել և թեթևացնել հարկերի բեռը» (136, 24):

Սկզբնական շրջանում մոնղոլների հանդուրժողական վերաբերմունքը եկեղեցունկատմամբ նպաստեց նրան, որ որոշ վայրերում վանքերի ներքին կյանքն աշխուժացավ. և դրանք, առավել քան երբևէ, դարձան ազգային մշակույթի կարևորագույն կենտրոններ: Ինչ վերաբերում է Բարձր Հայքի գրչուկյան օջախներին, ապա դրանց աշխուժացումը ԺԳ-ԺԴ. դդ. սերտորեն կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ նահանգի գավառներն այդ ժամանակ հարաբերական ինքնավարություն էին ստացել. որոշ տեղերում, ընդհուպ մինչև ԺԵ. դ., կառավարիչները տեղական հայ իշխաններն էին: Այդպիսին էր վիճակը, մասնավորապես Եկեղյաց գավառում, որի մայրաքաղաքն էր Երզնկան: Այդ կապակցությամբ է. Բաղդասարյանը գրում է. «Փաստերի համակողմանի և սպառիչ ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզմունքի, որ Երզնկայի հայկական իշխանության վերականգնումը հանդիսանում էր գերազանցապես հայ-մոնղոլական ռազմաքաղաքական դաշինքի հետևանք և մոնղոլների կողմից հայերի ռազմական ուժի ճանաչման ապացույց» (14, 44):

ԺԳ. դ. վերջից մինչև ԺԵ. դ. կեսերը այս գավառում համեմատաբար խաղաղ իրավիճակ էր, որը նպաստում էր ստեղծագործ կյանքին, մշակույթի ու արվեստի զարգացմանը: Այդ ժամանակաշրջանում կրկին աշխուժանում են առևտրական կապերը արևմուտքի ու արևելքի տարբեր երկրների միջև, և Բարձր Հայքի քաղաքները դրանց մեջ կարևոր դեր էին կատարում: Ֆլորենտինացի Բալդուչի Պեգոլոտին (ԺԵ. դ. սկիզբ), նկարագրելով Այասից Հայաստանով Թավրիզ գնացող առևտրական ճանապարհը, նշում է, որ այն անցնում էր Սեբաստիա-Երզնկա-Էրզրում քաղաքներով: Այդ նույն քաղաքներով էր անցնում Տրապիզոն տանող մեկ այլ քարավանային ուղի (162, 237): Այստեղ տեղին է մեջբերել Մարկո Պոլոյի ճանապարհորդության նկարագրության հայտնի տողերը. «Մեծ Հայքը տարածուն երկիր է. այն սկսվում է Արզնկա (Երզնկա) քաղաքից, ուր արտադրվում է աշխարհի ամենալավ բոկարանը (բրդյա գործվածք): Այստեղ կան նաև ընտիր բաղ-

նիքներ և շատ լավ ջերմուկներ: Ապրում են այնտեղ հայերը և ենթարկվում են թաթարներին: Շատ են այնտեղ քաղաքները և ավանները: Ամենալավ քաղաքը Արզնկան (Երզնկան) է: Այնտեղ է ապրում արքեպիսկոպոսը: Կա նաև Արգիրոն (Էրզրում) քաղաքը և Արգիսը (Առճեշ)» (165, 27-28):

ԺԴ. դ. արաբ ճանապարհորդ Իբն Բատուտայի վկայությամբ Երզնկա քաղաքում հոյակապ կերպաներ էին արտադրվում, իսկ տեղական պղնձից պատրաստում էին գավաթներ և հատուկ ձևի մոմակալներ, այնտեղ կային նաև «հոյակապ շուկաներ» (162, 305):

Մ. Աբեղյանն իր աշխատության մեջ բերում է մի հատված Բյուրի Գոնգալես դե Կլավիխոյի (ԺԵ. դ. սկիզբ). «Թամուրի արքունիք կատարած ճանապարհորդության օրագրից». «Երզնկա, Սուրմալու (Սուրմաբի), Իգդիր և Խոյ քաղաքներն այն ժամանակ կարևոր քաղաքական և առևտրական կենտրոններ էին... Երզնկա քաղաքը հայերն են կառուցել: Քաղաքի այգիներում և այլ վայրերում կարելի է տեսնել քարի վրա փորագրված խաչի նշան... Քաղաքը մարդաշատ է և այնտեղ կարելի է տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներ: Այստեղ են ապրում շատ պաշտոնավոր անձինք, որոնց մեծ մասը հարուստ է, և կան շատ հարուստ առևտրականներ» (1, 298):

Չնայած անհանգիստ ժամանակներին՝ շարունակվում էր խոշոր առևտրական քաղաքների զարգացումը: Վ. Բարտոլդը նշում է, որ քարավանային առևտուրը Առաջավոր Ասիայի և Չինաստանի միջև ԺԳ. դարում այնպիսի զարգացում էր ապրում, «ինչպիսին այն չէր ունեցել մինչ այդ, և հետո այդ քարավանային ուղիներից օգտվել են նաև եվրոպացիները՝ սկսած վենետիկյան Պոլո առևտրականներից» (107, 84): Բնական է, որ այդ պարագայում հասարակական կյանքում նշանակալի դեր են սկսում խաղալ միջին դասի ներկայացուցիչները՝ վաճառականներ, արհեստավորներ: Վերջիններս միավորվում էին հատուկ միությունների՝ այսպես կոչված համաբարությունների մեջ, որոնք միավորում էին ընդհանուր զբաղմունք և նույն սոցիալատեսական դիրք ունեցող մարդկանց: Հետազոտությունները ցույց են տվել, որ արհեստավորների միավորումները Հայաստանում գոյություն են ունեցել արդեն Թ-Ժ. դդ. (2, 564-565):

Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներում կային փողոցներ, որոնք կոչվում էին Դարբինների, Կոշկակարների, Ջուլհակների և այլոց անուններով: Համաքարուկություններն ունեին իրենց կանոնադրությունը: Մեզ է հասել Երզնկայում գոյություն ունեցած երիտասարդական կազմակերպության կանոնադրությունը, որն իր շատ կողմերով նմանվում էր համաքարուկություններին (27, 73-84, 28, 365-377): Լինելով եկեղեցու հետ սերտ կապված՝ այդ կազմակերպությունը միավորում էր նույն զբաղմունք ունեցող մարդկանց և կոչվում էր «Եղբայրություն»¹⁶: Չնայած որոշ տարբերությունների առկայությանը՝ եղբայրություններն իրենց շատ կողմերով նման էին համաքարուկություններին: Այդ պատճառով Երզնկայի եղբայրության կանոնադրության հիման վրա կարելի է մոտավոր պատկերացում կազմել համաքարուկությունների՝ արհեստավորների միությունների կանոնների և կանոնադրությունների մասին: Գրավոր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա Լ. Խաչիկյանը նկատել է, որ այդ երիտասարդական կազմակերպությունները (եղբայրությունները) ԺԳ-ԺԴ դարերի Հայաստանի պայմաններում որոշ առանձնահատկություններ ունեին, որոնք կապված էին ոչ միայն իրենց շահերը, այլև, շատ հաճախ, հարազատ քաղաքի շահերն ու անվտանգությունը պաշտպանելու հետ, հատկապես օտար նվաճողների արշավանքների և պաշարումների ժամանակ: Այդ եղբայրությունները «միաժամանակ կարևոր դեր էին խաղում որպես զինված ուժ» (27, 80): Այդպիսի եղբայրությունների մշակած կանոններում նշանակալի տեղ էր հատկացվում փոխօգնությունը տարբեր

քաղաքների եղբայրությունների միջև, ինչը շատ կարևոր էր Հայաստանում պետականության բացակայության պայմաններում:

Որպես քաղաքների զարգացման արդյունք՝ մասնագետները նշում են նաև այդ դարաշրջանի աշխարհընկալման որոշակի աշխարհականացում: Եկեղեցական գրականության ու բանաստեղծության հետ զուգահեռ մեծ զարգացում է ապրում նաև աշխարհիկ գրականությունն ու քնարերգությունը, որն արտացոլում է իրական կյանքի առանձին կողմերը: Հետաքրքրական է նաև այն, որ այդ ժամանակաշրջանի քնարերգությունը հասու է դառնում ընթերցողների ավելի լայն շրջանակների, այդ թվում՝ նաև արհեստավորներին: Լ. Խաչիկյանն իր հոդվածում բերում է աշխարհիկ բանաստեղծության մի շարք օրինակներ, որոնք ստեղծվել էին եղբայրությունների անդամների պատվերով: Այդպիսի ստեղծագործությունների հեղինակների շարքում էին ծագումով Բարձր Հայքից միջնադարյան հուշակավոր բանաստեղծներ՝ Երզնկացի մականունով Հովհաննեսը (ԺԳ. դ.) և Կոնստանդինը (ԺԴ. դ.)¹⁷:

¹⁶ Նման եղբայրություններ (քաղաքային արհեստավորների միություններ) գոյություն ունեին նաև այդ ժամանակաշրջանի եվրոպական քաղաքներում: Դրանք հետապնդում էին կրոնական և բարեգործական նպատակներ և հանդիսանում փոխօգնության կազմակերպություններ: Հայկական եղբայրություններին ավելի մոտ էին ԺՅ. դ. բելոռուսական և ուկրաինական եղբայրությունները. դրանք ազգային-կրոնական հասարակական կազմակերպություններ էին, որոնք ստեղծվում էին այլազգիների ճնշման դեմ պայքարելու նպատակով:

¹⁷ Խոսելով Հովհաննես և Կոնստանդին Երզնկացիների քնարերգության մասին՝ Վալերի Բրյուսովը գրում է. «Հովհաննես Երզնկացու և Ֆրիկի բանաստեղծություններում հայկական քնարերգությունն ազատվում է կղերականության կապանքներից և աստվածաշնչական պատկերներից: Մնում էր միայն մեկ քայլ անել զուտ սուբյեկտիվ քնարերգությանն անցնելու համար: Այդ քայլն է անում Հովհաննեսը և Ֆրիկի կրտսեր ժամանակակիցը՝ Կոնստանդին Երզնկացին, որը խոսում է ոչ միայն կյանքի լեզվով (բանաստեղծի ժամանակակից խոսակցական լեզվով), այլև բուն կյանքի մասին ավելի մոտ և մտերմիկ, քան Ֆրիկը...» (109, 54):

Ա. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՆԱՐԿ

Աշխարհը նկարագրված է որպես միտումները նկատելի են նաև ժամանակի կերպարվեստում, մասնավորապես՝ մանրանկարչության ասպարեզում: Ստորև կանդորադառնանք այդ խնդրին:

Բարձր Հայքի գրչատներում ստեղծվել են մանրանկարչության արվեստի այնպիսի գլուխգործոցներ, որոնք հատկանշվում են կատարողական բարձր մակարդակով, դեկորատիվ ձևավորման հարստությամբ ու բազմազանությամբ, հորինվածքների ստեղծագործական լուծումների ինքնատիպությամբ, տեխնիկական հնարքների կատարելությունությամբ, իսկ որոշ դեպքերում էլ ներկերի հոյակապ պահպանվածությամբ, ինչը վկայում է նրանց պատրաստման բարձր տեխնիկական մակարդակի մասին:

Չնայած նրան, որ այդ շրջանի պատմությունը չի նպաստել այդտեղ ստեղծված հայկական արվեստի հուշարձանների պահպանմանը, սակայն այն, ինչ մեզ է հասել, վկայում է ԺԱ-ԺԳ. դդ. մշակույթի բարձր զարգացման մասին:

Որքան բարդ և իրադարձություններով հագեցած էր Բարձր Հայքի պատմությունը, նույնքան բարդ և միատարր չէր այդ շրջանում ստեղծված արվեստը, որի մասին մենք կարող ենք դատել մասնավորապես մանրանկարչության նմուշների հիման վրա: Ցավոք, մեզ հասու չեն այդ նահանգի պահպանված մոնումենտալ արվեստի սակավաթիվ հուշարձանները: Առանձին եկեղեցիների ու վանքերի մասին մեզ են հասել գրավոր տեղեկություններ ձեռագրերի հիշատակարաններում, ինչպես նաև՝ այդ կողմերն ուղևորություններ կատարած տարբեր ժամանակների ճանապարհորդությունների նկարագրություններում: Առանձնահատուկ արժեք ունի Հակոբ Կարնեցու ԺԵ. դ. առաջին կեսին գրված գիրքը (39), որը պարունակում է երկրի աշխարհագրությունը և տնտեսությունը վերաբերող արժեքավոր շատ տեղեկություններ: Հեղինակը պատ-

մում է այդ նահանգի բնակչության և նրա զբաղմունքների մասին: Նշելով երկրի բնության գեղեցկությունը՝ նա ցավով գրում է, որ հողերի մեծ մասը պատկանում է թուրք փաշաներին, որոնք անխնա կեղեքում էին հայ ժողովրդին:

Գիրքն ունի նաև եկեղեցիներին ու վանքերին վերաբերող տեղեկություններ, ընդ որում՝ մի քանիսի մասին բերվում են նրանց հետ կապված ավանդությունները: Կարնեցու ժամանակ նրանցից շատերը վերափոխված էին մզկիթների: ԺԹ. դարի երկրորդ կեսին իր «Թորոս Աղբար» գրքում այդ հարցերին անդրադարձել է նաև Գ. Սրվանձտյանը (74):

Նահանգի եկեղեցիների մասին ավելի մանրամասն տեղեկություններ կան ԺԹ. դարի վերջի և Ի. դ. սկզբի առանձին հայ հեղինակների գործերում: Դրանցից կարևորագույնը Հ. Ոսկյանի «Բարձր Հայքի վանքերը» աշխատությունն է (67): Մեզ հետաքրքրող նահանգում նա հիշատակել է ավելի քան 100 եկեղեցի ու վանք: Որոշ դեպքերում նա տալիս է դրանց սեղմ նկարագրություններ, երբեմն նշելով, որ ժամանակին դրանք զարդարված են եղել բարձրաքանդակներով և որմնանկարներով, տեղեկություններ ունի նաև այնտեղ պահված թանկարժեք իրերի և ձեռագրերի մասին: Այսպես՝ խոշորագույն հոգևոր կենտրոն հանդիսացող Ավագ վանքի մասին Հ. Ոսկյանը գրում է. «Տաճարը հոյակապ է եւ սիրուն, ազգային սուրբերու ընծայուած սեղաններով եւ գեղեցիկ նկարներով զարդարուած, նոյնիսկ սրբավայրին հիւսիսային եւ հարավային պատերը¹⁸: Այս մենաստանը իր նմանը չունի նոյնիսկ Եկեղեցաց գաւառի բազմաթիւ վանքերու մեջ»: (67, 4): Նկարագրելով Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, որը գտնվում էր Սեպուհ լեռան լանջին՝ Հ. Ոսկյանը հիշատակում է եկեղեցու ներքին պատերին եղած որմնանկարները, որոնց վրա պատկերված էր Լուսավորչի չարչա-

¹⁸ Ավելի հաճախ զարդարում էին եկեղեցիների արևելյան խորանն ու արևմտյան պատը:

րանքների նկարաչարը (67, 33): Երգնկա քաղաքից (ձիով) չորս ժամվա ճանապարհի վրա գտնվող սուրբ Նիկողայոս վանքը զարդարված էր բազմաթիվ բարձրաքանդակներով և որմնանկարներով (67, 98): Տիրաչենի վանքը հայտնի էր նաև Ս. Ներսեսի անունով, որի մասունքները ԺԳ. դարում գտնվեցին այստեղ¹⁹ (67, 105-106): Հ. Ոսկյանը վկայում է, որ վանքի պատերը զարդարված էին բիբլիական թեմաներին առնչվող որմնանկարներով: Այն ուներ նաև քանդակազարդ փայտե դուռ (67, 175): Ինչպես վկայում է Հ. Ոսկյանը, լավ վիճակում է մեզ հասել էոչքա վանքը, որը դրսից և ներսից ճոխ զարդարված էր բարձրաքանդակներով (67): Սակայն Հ. Ոսկյանի նկարագրող թյուրմտություններից հնարավոր չէ հասկանալ, թե եկեղեցիների որմնանկարներն ու քանդակազարդերը որ ժամանակաշրջանին են պատկանում, միշտ չէ, որ նշվում է պատկերների բովանդակությունը, էլ չենք խոսում դրանց գեղարվեստական արժանիքների բնութագրման մասին: Այդ տարածաշրջանում հաճախակի պատահող երկրաշարժերի պատճառով Բարձր Հայքի եկեղեցիներն ու վանքերը կրում են հետագա վերափոխումների բազում հետքեր:

Թուրքիայի տարածքում գտնվող հայկական ճարտարապետական որոշ հուշարձաններ, այդ թվում նաև՝ Բարձր Հայքի մի շարք շինություններ, ուսումնասիրել և հրապարակել են, ինչպես վերը նշեցինք, Նիկոլ և Միշել Թիերիները (270, 271): Գիտնականների ուսումնասիրած հուշարձանների մեծ մասը կիսավեր վիճակում են: Միշել Թիերինի հոգևածները պարունակում են հուշարձանների մանրամասն նկարագրությունները, լուսանկարները և առանձին եկեղեցիների հատակագծերը: Որոշ եկեղեցիների պատերին պահպանվել են որմնանկարների հետքեր: Երախտագիտությամբ նշենք, որ պ. Թիերին մեզ է տրամադրել Թիլ գյուղի եկեղեցու որմնանկարների երկու լուսապատճեն:

Բարձր Հայքը բազմիցս ենթարկվել է տարբեր նվաճողների ավերումների, ինչի մասին վկայում են կիսավեր վիճակում մեզ

հասած ճարտարապետական շինությունների մնացորդները: Այստեղ զարգացող կերպարվեստի մասին բավական լավ պատկերացում հնարավոր է կազմել միայն նկարազարդված ձեռագրերի մանրանկարներից: Պատերազմների կամ օտարագրիների ավերիչ արշավանքների ժամանակ ձեռագրերը հնարավոր էր փրկել մեծ ջանքերի շնորհիվ. մարդիկ դրանք պահում էին հատուկ թաքստոցներում, իսկ եթե ստիպված էին լինում լքել իրենց տները, աշխատում էին ձեռագրերը տանել իրենց հետ: Հայ ժողովրդի համար ձեռագիր մատյանը եղել է սրբություն, հավատքի խորհրդանիշ: Այն երբեմն ընկալվել է որպես թալիսման, որը կարող էր ապաքինել հիվանդին, օգնել օտարությունից մեջ. դրա շնորհիվ ձեռագրերի զգալի մասը հասել է մինչև մեր օրերը: Եթե ձեռագիրը գերի էր ընկնում, աշխատում էին նա զատել ինչ գնով էլ, որ լինի: Այդ տեսակետից շատ բնորոշ է Բարձր Հայքում ստեղծած մանրանկարչական գլուխգործոցներից մեկի՝ Մշո ձառնտրի պատմությունը: Ձեռագրի գրությունը նոր էր ավարտվել (1202 թ.), երբ սկսվեց Իկոնիայի տիրակալ Ռուքն-էդ-Դինի արշավանքը: Ձեռագիրն ընկավ Խալթի մի տաճիկ դատավորի ձեռքը: Մշո Առաքելոց վանքի միաբանները դրամ հանգանակեցին և ձեռագիրը գերությունից փրկագնեցին: Երկրորդ անգամ ձեռագիրը փրկվեց Մեծ եղեռնի օրերին՝ 1915 թ.²⁰:

Պատմական Հայաստանի այս տարածաշրջանում ստեղծվել են մանրանկարչության բազմաթիվ գլուխգործոցներ, որոնց մի մասը պահպանվել է: Դրանց շարքում են ԺԱ. դ. վերջի երկու հոյակապ Ավետարան (Մատենադարանի ձեռ. Հ^Վ 2877 և Հ^Վ 6264), 1200-1202 թթ. գրված հուշակավոր Մշո ձառնտրը, որն ամենամեծ հայերեն ձեռագիրն է (70×55,5 սմ.), ոչ պակաս հայտնի են 1269 թ. Երգնկայի Աստվածաշունչը (Երուսաղեմի ձեռ. Հ^Վ 1925), ԺԲ-ԺԳ. դդ. Կարնո (Էրզրումի) ձեռագրերը, որոնք մանրանկարչության հոյակապ նմուշ-

¹⁹ Ներսես Մեծը Դ. դարի հայոց կաթողիկոս (329-373 թթ.), հայտնի եկեղեցական և հասարակական գործիչ:

²⁰ Մշո ձառնտրի ավելի հանգամանալի պատմությունը տրված է սույն աշխատության հետագա էջերում առանձին ենթագլխով:

ներ են, և, վերջապես, նույն դարավերջի և ԺԴ. դարի մի խումբ ձեռագրեր, որոնք արտացոլում են տեղական ավանդույթների հիման վրա Հայաստանի արևմտյան շրջաններում ծնունդ առած գեղարվեստական նոր ոճը, որը ձևավորվել էր կիլիկյան և պալեոլոգյան գեղանկարչության որոշ ազդեցությունների վրա: Այս ամենը պերճախոս կերպով վկայում է մեզ հետաքրքրող նահանգի մշակույթի ու արվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

Միջնադարյան հայ մշակույթի և արվեստի ականավոր հետազոտող Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը մտադիր էր զբաղվել այս նահանգի մանրանկարչության ուսումնասիրություններով: Իր հոդվածներից մեկում նա շարադրել էր իր սկսած աշխատության սեղմ ծրագիրը, որի մեջ թվարկված են Բարձր Հայքի գրչատներում գրված և նկարազարդված՝ հեղինակին հայտնի ձեռագրերը, նշված են նաև նրա իմացած մի շարք վարպետների անուններ, որոնց գործունեությունը կապված էր հատկապես Եկեղյաց գավառի հետ (48, 618-625):

Մատենադարանում գտնվող, Բարձր Հայքում նկարազարդված մի քանի նշանավոր հուշարձաններ առաջին անգամ հրատարակել է Լ. Դոուդնոլդն (121, 206-213, նկ. 121-123): Այստեղ ստեղծված երկու ձեռագիր դարձել են Սիրարփի Տեր-Ներսեսյանի գիտական ուսումնասիրության առարկան. ա 1269 թ. Երզնկայի Աստվածաշունչը (77, 28-39) և բ. 1334 թ. Խաղտիքի շրջանի Վահանաշեն գյուղում ընդօրինակված և նկարազարդված ձառոցը (237, 653): Վերջին աշխատության մեջ հեղինակը նշում է, որ եթե Կիլիկիայի և Սյունիքի (ավելացնենք՝ նաև Վասպուրականի) ձեռագրերն արդեն քաջ հայտնի են և բազմիցս հրատարակվել են, ապա դրանց համեմատությամբ Մեծ Հայքի արևմտյան գավառների գրիչների ու ծաղկողների գործունեության մասին քիչ բան է հայտնի: Իր «L'Art Armenien» աշխատության մեջ Ս. Տեր-Ներսեսյանը տալիս է Բարձր Հայքի գրչատների հետ կապված և իրեն հայտնի մի քանի ձեռագրերի համառոտ բնութագիրը (240, 212-214):

Այդ նահանգի վաղ շրջանի նկարազարդ ձեռագրերով զբաղվել է նաև Տ. Իզմայլովյան, որը հրատարակել է մի շարք հոդվածներ, ուր հատուկ ուշադրություն է դարձրել պատկերագրության հարցերին (127, 77-97, 128, 159-168, 129, 154-168, 130, 206-220, 133, 95, 247, 149):

Մ. Ծանաշյանի հրատարակած «Հայկական մանրանկարչություն» ալբոմում ներկայացված են Մխիթարյան միաբանության Վենետիկի մատենադարանի հավաքածուի պատկերազարդ ձեռագրերը, որոնց մեջ կան ԺԲ-ԺԳ. դդ. Բարձր Հայքում ստեղծված հուշարձաններ: Տրված է նրանց նկարագրությունը և մանրանկարների հաջողված գունավոր վերարտադրությունները (55):

Բարձր Հայքում ստեղծված և մեզ հայտնի ձեռագրերի ընդհանուր թիվն անցնում է հարյուրից: Սույն աշխատության վերջում դրված է ԺԱ-ԺԴ. դդ. Բարձր Հայքում նկարազարդված և իրենց գեղարվեստական հարդարանքով առանձնահատուկ հետաքրքրություն ունեցող քառասուն ձեռագրի համառոտ նկարագրություն, ինչպես նաև, առանձին ցուցակով տրվում են տվյալ ժամանակաշրջանում այդ նահանգում գրված՝ մեզ հայտնի բոլոր ձեռագրերին վերաբերող համառոտ տեղեկություններ: Կասկածից վեր է, որ տվյալ վայրում ստեղծվել են անհամեմատ ավելի մեծ քանակությամբ ձեռագրեր: Պատմական Հայաստանի այս երբեմնի բուն նահանգը հետագայում բազմիցս ենթարկվել է հարձակումների և ավերածությունների: Այն տուժել է նաև այդ շրջանում հաճախակի տեղի ունեցած երկրաշարժերից: Ժամանակի ընթացքում այստեղ նվազել է նաև հայ ազգաբնակչությունը: Եվ զարմանալի չէ, որ հայերի կողմից այդ տարածաշրջանում ստեղծած մշակութային արժեքներից մեզ հասել են միայն խղճուկ բեկորներ: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ժամանակի ավերիչ ազդեցությունից զատ այդ նահանգի տարածքներում գտնվող հայկական հուշարձանները հաճախ ենթարկվել են կանխամտածված ոչնչացման: Ինչ վերաբերում է գրչության հուշարձաններին և նկարազարդ ձեռագրերին, ապա պահպան-

վել են դրանց հիմնականում այն նմուշները, որոնք հայերը ժամանակին դուրս են բերել ավելի խաղաղ թվացող այլ տեղեր, իսկ երբեմն նաև այլ երկրներ, ուր հայերը գաղթօջախներ էին ստեղծում: Բարձր Հայքի ձեռագրերի նշանակալի մասը տարվել է Ղրիմ, այնտեղից՝ Նոր Նախիջևան (այժմ՝ Դոնի Ռոստով քաղաքի շրջաններից մեկը),

Բ. ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ-ԺԲ. ԴԱՐԵՐՈՒՄ

Բարձր Հայքի գրչատներում պատրաստված ձեռագրերի մանրանկարների հետ ծանոթութունը ցույց է տալիս, որ դրանք բավականաչափ տարբեր են իրենց գեղարվեստական արժանիքներով, գեղագիտական սկզբունքներով ու չափանիշներով, պատրաստման ձևով և ոճով: Սա զարմանալի է, եթե նկատի ունենանք այդ նահանգի կենտրոնների բազմազան կապերը բուն Հայաստանի տարբեր շրջանների և Կիլիկիայի հետ: Օտար գավթիչների արշավանքների հետևանքով առաջացած անկայուն քաղաքական իրավիճակը դարձավ Հայաստանի արևելյան և կենտրոնական շրջաններից հայերի՝ դեպի արևմտյան տարածքներ, ինչպես նաև երկրի սահմաններից դուրս տեղափոխվելու պատճառ: ԺԱ. դարից սկսած Բարձր Հայքում հայտնվում են գաղթականներ Անիից, Տարոնից, Վասպուրականից և այլ վայրերից: Դա, անկասկած, նպաստում էր միջնադարյան Հայաստանի գեղարվեստական այլ դպրոցների ավանդույթների ներթափանցմանը դեպի Բարձր Հայք: Սակայն բուն տեղական ավանդույթները, որոնք գալիս էին վաղնջական ժամանակներից, ուժեղ էին և առանձնանում էին մի շարք հատկանիշներով: Այդ ավանդույթների առանձնահատկությունները պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ գավառի մանրանկարչական հուշարձանների հնագույն նմուշներին:

Բարձր Հայքից մեզ հասած հնագույն նկարազարդ ձեռագրերը ԺԱ. դարի վերջի մատյաններն են: Մաշտոցի անվան Մատենադարանում, ինչպես ասել ենք, կա այդպիսի երկու ձեռագիր՝ Հ^մ 2877 և Հ^մ 6264 ավետարանները: Նրանց խորանները, երկ-

ապա՝ 1922 թ. տեղափոխվել են Երևան և այժմ՝ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում:

Առկա հրապարակումների և դեռևս չուսումնասիրված նյութերի հիման վրա այստեղ ներկայացնում ենք ԺԱ-ԺԲ. դդ. միջնադարյան Հայաստանի ևս մեկ մանրանկարչական դպրոց:

ըրրդի՝ նաև տիտղոսաթերթերը ճոխ հարդարված են բուսական ու երկրաչափական զարդերով: Առաջինն ունի նաև թեմատիկ մանրանկարներ և արդեն գրավել է մասնագետների ուշադրությունը: Բնագիրը Գարեգին Հովսեփյանը թվագրում է Ժ-ԺԱ. դարերով (49, 493), Լ. Դուրանովն համարում է, որ նկարազարդումները (8 խորան և 3 թեմատիկ մանրանկար) թվագրվում են ԺԱ-ԺԲ. դդ. սահմանագծով (121, 26): Ըստ Տ. Իգմայլովայի կարծիքի՝ մանրանկարներն ավելացվել են ԺԲ. դարի վերջին (132, 97):

Առկա հիշատակարանի համաձայն՝ մեզ հետաքրքրող Ավետարանը 1183 թ. մեծ գումարով ետ են գնել բարեպաշտ տիկնայք՝ Գոհարը և Խոսրովիդուխտը, ինչպես նաև Սուքիաս և Մարգարե քահանաները, որոնք ավելացրել են «գումարի» պակասող «մասը», ապա ձեռագիրը նվիրաբերվել է Երեզ (Երզնկա) քաղաքի Աստվածամոր եկեղեցուն: Առ այս հիշատակարանում կարդում ենք. «Եղբարքս... կրաւնաւորեալ... Մարգարէս եւ Սուքիաս, միաշունչ եւ միախորհուրդ քննեալ ի բովս Աստուածային եւ գտեալ եւ յստակ եւ առանց խառնուածոյ յամենայն չարեաց, սակաւիկ ինչս կալեալ եւ զկարիս ամենայն ի բաց եղեալ, եւ... գնեալ զԱւետարանս զայս՝ զբարբառս աստուածային սքանչելեաց, յաղագս աւկտակարութեան հոգւոյ և մարմնոյ, եւ յանուն Աստուածածնին, զոր եւ անուն տեղոյն էրեզ անուանի: Արդ, կանայք ե[ր]կուք բարե[պաշտ] եւ սրբասնեալք, որոց անուանք նոցա կոչին Գոհարս եւ Խոսրովիդուխտ, սոքա բարի խորհուրդ յանձն առեալ վասն հոգւոյ աւգտի եւ անուն յաւիտենական արարեալ վասն յիշատակի իւրեանց եւ

ծնողաց իւրեանց եւ ազգականաց իւրեանց, գնեցին զԱւետարանս զայս Գոհարս եւ Խոսրովիդուխտն՝ տուեալ զբազումս զգինս կանայքս այս, եւ զսակաւըն Մարգարէն եւ Սուքիասն, եւ ետուն յանուն Աստուածածնի[ին] առաջի բազում [վկա]յից... Արդ նորոգեցաւ Աւետարանս այս ի թուականութեանն Հայոց ՈԼԲ. (1183), յամս աստուածապատիւ տեառն Գրիգորի... եւ նորանշեցելոցն, եւ ինձ՝ նորոգաւորի գրոցս, եւ իմոցն... Յիսո՛ւս, լույս փառաց, ողորմեա՛ Վարդաւաանա, զի գործ մի բարի գործեաց յիս. ամէն» (ձեռ. Հ^ն 2877, թ. 217բ. 58ա, 239-40): Տեղեկանում ենք նաև, որ Սուքիաս քահանան ձեռագիրը նորոգել է տվել և այդ նորոգման հետքերը պարզ երևում են. ձեռագրին ավելացվել են այդ ժամանակ արդեն կորած Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին և համաբարբառի առաջին կանոն-խորանը, որը գրված է երկրորդ կանոնի հակառակ կողմում: Տարբերվում է նաև դրանց ձևավորումը. ի տարբերություն մնացած խորանների շքեղ զարդանախշերի՝ ավելացված էջերն ընդամենը երիզված են նեղ կարմիր ժապավենաձև գոտիով, իսկ բնագիրը գրված է 1183 թ. հիշատակարանի թանաքով: Ընդ որում՝ Եվսեբիոսի նամակի երկրորդ էջում կա ձեռագիրը նորոգման տված Սուքիաս քահանայի հավելումը, ինչպես նաև բնագրի՝ պակասող մասերը լրացրած Վարդաւաան գրչի անունը: Հետևաբար, զարդանկարված խորանները և թեմատիկ մանրանկարները բնագրի հետ միասին ստեղծվել են 1183 թ. շատ առաջ:

Այս Ավետարանի թվագրությունն ճշգրիտման համար կարևոր է պարզել վերը հիշատակված Հ^ն 6264 Ավետարանի թվականը, քանի որ այս երկու ձեռագրերի զարդանախշերը ոճականորեն մոտ են, և դա թույլ է տալիս ենթադրելու, որ սրանք ստեղծվել են մոտավորապես նույն ժամանակաշրջանում և նույն վայրում: Հ^ն 6264 ձեռագրի հիշատակարանում ասված է, որ այն գրվել է Կարինի մոտ գտնվող Խաչկա վանքում, նշված է նաև ձեռագրի ստեղծման տարեթիվը հայկական տոմարով և հայերեն տառերով, որոնք, սակայն, կիսով չափ ջնջված են, հարյուրավորի տառը լրիվ ջնջվել է: Գ.

Հովսեփյանը կարողացել է տեսնել միայն տասնավորը՝ «Լ.» (30) և, ենթադրելով, որ առաջին՝ հարյուրավորի ջնջված տառը կարող էր լինել «Ո.»-ն (600), առաջարկել է ընդօրինակման տարեթիվը համարել հայոց տոմարի 630 թ., որը համապատասխանում է 1181 թ. (49, 489): Սակայն ձեռագրի հիշատակարանում հիշատակվում են Գրիգոր կաթողիկոսը և բռնակալ տաճիկ Մահմադը: Հայտնի է, որ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի հայրապետությունն ժամանակ (1065-1105 թթ.) Բարձր Հայք գավառում տեր ու տիրակալ էր Մահմուդ (Մահմադ) Ա. Նասիր էդ-Դինը (իշխանություն է եկել 1090 թ., սակայն ասպատակումներ էր անում դրանից շատ առաջ): Սրանից ելնելով՝ Հ^ն 6264 Ավետարանի ստեղծման ամենահավանական ժամանակաշրջանը կլինի ԺԱ. դարի վերջը, այդ դեպքում ջնջված առաջին տառը, հավանաբար, «Շ.» էր (500). մեզ հանդիպեց կարգալ երրորդ տառը, որ «Ը.» է (8): Հետևաբար, ձեռագրի գրչությունն տարին կարելի է համարել հայոց տոմարի ՇԼԸ՝ 538 թ., որը համապատասխանում է 1089 թ.: Երկու ձեռագրերն էլ (Հ^ն 2877 և Հ^ն 6462), ինչպես արդեն նշեցինք, իրենց գեղարվեստական ձևավորման բնույթով բացահայտ նմանություն ունեն և կարող են դիտարկվել՝ որպես միևնույն ժամանակաշրջանում և նույն գավառի սահմաններում ստեղծված հուշարձաններ: Առաջինը ստեղծվել է հավանաբար Երզնկա քաղաքի շրջակայքում, ուր այն գնվել էր, իսկ երկրորդը՝ Կարին քաղաքի մոտ:

Հ^ն 2877 Ավետարանում պահպանվել են երեք թեմատիկ մանրանկար. չորս ավետարանիչների դիմանկարներն ու «Ավետման» և «Ծննդյան» տեսարանները: Վաղ քրիստոնեական պատկերազրույթյան համաձայն չորս ավետարանիչները պատկերված են միասին՝ կողք կողքի կանգնած (նկ. 1): Տ. Իգմայլովան, որը ձեռագիրը թվագրում է ԺԲ. դարով, նկատում է, որ չորս ավետարանիչներին մեկ էջի վրա դիմահայաց պատկերումը արխայիկ առանձնահատկություն է (247, 97): Սակայն քանի որ տվյալ Ավետարանն ընդօրինակվել է, ինչպես մենք ճշտեցինք, ԺԱ. դարի վերջին, ա-

պա նրանց ներկայացման պատկերագրութ-
յունը համապատասխանում է այն ժամա-
նակ ընդունված չափանիշներին: Ավետա-
րանիչների նման՝ դիմահայաց, պատկերնե-
րի օրինակներ կարելի է հանդիպել ԺԱ. դ.
պատկերագարդ այն ավետարաններում, ո-
րոնք հրատարակված են Լ. Գուռնովոյի, Ս.
Տեր-Ներսեսյանի, Հ. Հակոբյանի, Տ. Իզմայ-
լովայի ալբոմներում, և սա մեկ անգամ ևս
հաստատում է, որ ուսումնասիրության ա-
ռարկա Ավետարանը և նրա նկարագար-
դումները վերաբերում են ԺԱ. դ.:

«Ավետման» տեսարանում Աստվածամոր
և Գաբրիել հրեշտակապետի խոշոր պատ-
կերները ներկայացված են առանց ճարտա-
րապետական կուլիսների, իսկ ետնամասը
հորիզոնական կտրվածքով բաժանված է
երկու կեսի. վերին մասը կապուլյո է
(խորհրդանշում է «հաստատություն երկ-
նից»), իսկ ստորինը՝ մուգ կանաչ (հող):
Այդ հենքի վրա առանձնանում են Աստվա-
ծամոր ու հրեշտակապետի խոշոր պատկեր-
ները: Հատկապես տպավորիչ է Աստվածա-
մոր կերպարը՝ վառ արտահայտված արևել-
յան դիմագծերով, երկարավուն կոր քթով,
կարմիր այտերով գեղջկուհու տիպար (նկ. 2):

Կերպարների մեկնաբանությունը, նաև՝
հենքի գունային երկու գոտու բաժանվա-
ծությունը հիշեցնում են կապադովկյան ե-
կեղեցիների որմնանկարները: Օրինակ՝ մեր
ձեռագրի Մարիամի կերպարը նման է ԺԱ.
դ. Գարանյեկ քիլիսի Աստվածամոր պատ-
կերին (246, աղ. 106):

«Ծննդյան» տեսարանը նկարված է ար-
դեն ձևավորված պատկերագրությամբ, ուր
Աստվածամոր դիրքը նախնական տարբե-
րակներից մեկն է. նա կողքի է պառկած,
իսկ այտը հենել է աջ ձեռքին: Անձավի
վերևում սխեմատիկ կերպով պատկերված
են լեռներ (սրանց ծալքերն ընկալվում են
որպես զարդանախշ), որոնց հենքի վրա
երևում են ավետող երկու հրեշտակ և հո-
վիվն իր հոտի հետ: Յածում լողանքի տե-
սարանն է, իսկ աջ կողմում պատկերված է
Հովսեփը (նկ. 3): Պատկերագրական տեսա-
կետից նման մի հորինվածք կարելի է տես-
նել դարձյալ կապադովկյան հուշարձաննե-
րի մեջ (246, աղ. 106): Կապադովկյան ար-

վեստի հետ որոշակի պատկերագրական գու-
գահեռների առկայությունը հետ միասին այս
Ավետարանի մանրանկարները ոճական բազ-
մաթիվ տարբերություններ ունեն. դրանք
նկարված են տվյալ ժամանակաշրջանում
հայկական արվեստին հատուկ կերպարների
մեկնաբանությամբ, ուր բացահայտվում է
դեմքերի ազգային տիպը: Տարբերվում է
նաև Ավետարանի կոլորիտը, որը ավելի
գունեղ է ու հագեցած:

Հայկական մանրանկարչական որոշ հու-
շարձանների և Կապադովկիայի քարանձա-
վային տաճարների որմնանկարների միջև
գոյություն ունեցող կապը նկատելի է նաև
Ժ. Լաֆոնտեն-Դոգոնյը, որը ենթադրել է,
որ վերջիններիս ստեղծմանը մասնակցել են
նաև հայ նկարիչներ (152, 78-93):

Երկու ձեռագրերի գեղարվեստական ձևա-
վորման մեջ առանձնակի տեղ ունի զարդա-
յին հարդարանքը: Այն օգտագործված է,
առաջին հերթին՝ խորաններում, իսկ Հ^ր
6462 ձեռագրում նաև՝ տիտղոսաթերթե-
րում: Նշենք, որ մեզ հասած ամենավաղ ձե-
ռագիր Ավետարաններում արդեն կան խո-
րաններ՝ համաբարբառի գեղարվեստական
ձևավորում ունեցող աղյուսակներ: Հին ձե-
ռագրերում հատկապես ընդգծված է դրանց
ճարտարակերտությունը. խոյակներ և խա-
րիսխներ ունեցող սյուների վրա հանգչող
մեկ կամ երկու կամար՝ համաբարբառի աղ-
յուսակներով²¹: Խորան բառը, որը նշանա-
կում է բեմ, տաճար, վրան, իր իմաստով
կապվում է Աստվածաշնչի վկայության
խորանի հետ, որը պետք է կառուցեր Մով-
սեսը (Ելք, ԻԶ): Այդ կապակցությամբ Ա.
Մնացականյանը գրել է. «Խորանները տա-
ճարային կառույցների վերարտադրութ-
յունն են մանրանկարչության մեջ», իսկ
այդ պատկերների ակունքները «պետք է
փնտրել, առաջին հերթին, խորանները
գծագրած ու մշակած հուշակավոր եկեղեցա-
կան գործիչ Եվսեբիոս Կեսարացու աշխա-
տություն մեջ» (64, 45): Փ. Անթաբյանը

²¹ Ռ. Ամիրխանյանը գրում է. «Այդ պատկերի նա-
խատիպերը ստեղծվում էին Պաղեստինի գրչա-
տներում Գ. դ. Կեսարիայի եպիսկոպոս Եվսեբիոս
Պամփիլիոսի ղեկավարությամբ, որը, ինչպես
հայտնի է, չորս ավետարանների համաբարբառ-
ների համակարգի հեղինակն է» (97, 179):

խորանների մեկնությանը նվիրված իր հոգևածու ուսումնասիրել է մի ձեռագիր, որն ունի հետևյալ վերնագիրը. «Ավետարանների խորանների մասին, որոնք կազմել է Եվսեբիոսը՝ Կարպիանոս եպիսկոպոսի խնդրանքով, այն մասին, թե ինչու էին սահմանվել 10 կանոնները» (10, 84-86, 75ա, 41-51): Հենց այդ բնագրի հիման վրա կազմվում էին միջնադարյան տարբեր հայ հեղինակների խորանների մեկնություններ:

Հայկական մատենագրությունից պատմության մեջ, ինչպես հայտնի է, խորանների մեկնությունների հնագույն նմուշը պատկանում է Լ. դարի եկեղեցական գործիչ Ստեփանոս Սյունեցու գրչին (53): Ս. Տեր-Ներսեսյանը համարում է, որ վերջինս, ամենայն հավանականությամբ, օրինակ է ծառայել հետագայում կազմվող մեկնությունների համար (234, 16)²²:

Մեզ հասած հայկական միջնադարյան խորանների և նրանց մեկնությունների բազմաթիվ տարբերակները ուսումնասիրել, համակարգել և հրատարակել է Վ. Ղազարյանը, որը դրանք բնութագրում է՝ որպես այլալեզու մատենագրության մեջ իրենց համանմանը չունեցող ստեղծագործություններ (138, 132-134): Նա բացահայտել և ուսումնասիրել է տարբեր ժամանակաշրջանների (Ը-ժէ. դդ.) խորանների մեկնությունների 13 բնագիր: Լուսաբանված են այդ մեկնությունների գեղագիտական, գույների տեսություն, զարդանախշային և ճարտարապետական մոտիվների նշանաբանությունը վերաբերող հարցեր: Վ. Ղազարյանը համարում է, որ խորանների մեկնությունները «բացառիկ արժեք են ներկայացնում գեղանկարչության տեսությունից պատմության տեսակետից: Դրանք հանդիսանում են միջնադարյան արվեստի ինքնատիպ «գեղագիտությունը», որը փայլուն կերպով կիրառվել է խորանների պատկերման ասպարեզում» (138, 132-4):

²² Ս. Տեր-Ներսեսյանը նկատել է, որ Ստեփանոս Սյունեցու «Մեկնություն» շարադրանքը, ի տարբերություն ավելի ուշ շրջանի բնագրերի, ավելի սեղմ է և համեմատաբար քիչ իմաստաբանական մեկնություններ ունի: Ավելի մանրամասն և հիմնովին նա ուսումնասիրել է Ներսես Շնորհալու (ժԲ. դ.) կազմած խորանների մեկնությունը, ուր տրվում է նախընտրյալ տարրերի խորհրդանշական իմաստների բնորոշումը (232, 59-60):

Զուտ տեղական մեկնաբանությունն ունենալով հանդերձ դրանք հենվում են հիմնականում համաքրիստոնեական ավանդույթների վրա: Ավելի ուշ ժամանակաշրջանի մեկնությունները որոշակիորեն տարբերվում են նախորդներից, քանի որ յուրաքանչյուր դարաշրջանում ավելանում և բարդանում էին խորանների զարդանախշերը, կենդանական ու բուսական մոտիվների քանակն ու նրանց նկարման եղանակները: Ընդ որում՝ ամեն դարաշրջանում նրանց տրվում էին ժամանակի գաղափարախոսությունը համապատասխան բացատրություններ, ընդարձակվում էր նրանց խորհրդանշական իմաստի ասպեկտը: Դա միանգամայն օրինաչափ է, քանի որ արվեստի առաջընթաց զարգացմանը զուգահեռ ընդլայնվում ու բարդանում էին գեղարվեստական ըմբռնումներն ու նրանց արտահայտչամիջոցները: Այդ պատճառով հին Մեկնությունները չէին կարող սպառիչ պատասխան տալ այն բոլոր նորամուծություններին, որոնք բերում էին նոր ժամանակները՝ իրենց ավելի բարդ պատկերացումներով ու ընկալումներով: Հենց այդ էվոլյուցիոն ընթացքով կարելի է բացատրել նոր դարաշրջաններին համապատասխանող նոր Մեկնությունների ի հայտ գալը²³:

Խորանները զարգարող բուսական և կենդանական աշխարհի իրական ու երևակայական կերպարների տարրերից կազմված նախընտրյալ բազմազան մոտիվներին մեկ-

²³ Զեռագրերի ղեկորատիվ նոր, ավելի բազմազան հորինվածքների ի հայտ գալով է պայմանավորված նոր մեկնաբանությունների անհրաժեշտությունը: Սրբապատկերների պատկերման հարցերը հետազոտելիս Հանս Բելտինգը նշել է, որ «աստվածաբանները սրբապատկերների պաշտամունքի հարցում կարող էին տեսություն ստեղծել՝ միայն ելնելով գոյություն ունեցող պրակտիկայից» (108, 13): Նմանապես խորանների նոր մեկնությունների հայտնվելը պայմանավորված էր զարդանախշերի նոր բարդացված տարրերի հայտնվելով, որոնք յուրաքանչյուր ժամանակաշրջանում հարստանում էին նախընտրյալ նոր տարրերակներով և նրանց մեկնաբանություններով: Ս. Տեր-Ներսեսյանը այս կապակցությամբ նկատել է. «Արդեն գոյություն ունեցող ղեկորը կարող էր ծնունդ տալ այդ մեկնաբանություններին, որոնք հետագայում ոգեշնչում էին նկարիչներին ստեղծելու նոր հորինվածքներ» (233, 57):

նություններում տրվող բացատրությունները կիրառելի են նաև ձեռագրերի ողջ զարդային հարդարանքի համար: ԺԱ-ԺԲ. դարերում արդեն վերջնականապես ձևավորվում են ձեռագիր մատյանների գեղարվեստական հարդարման բաղադրատարրերը՝ տիտղոսաթերթերը, գլխագարգերը, լուսանցազարդերը: Հիմնվելով քրիստոնեական նշանաբանությունը նվիրված աշխատությունների, ինչպես նաև Ս. Տեր-Ներսեսյանի և Վ. Ղազարյանի ուսումնասիրությունների վրա՝ այստեղ տեղին է բերել մեկնություններում առկա պատկերների բացատրությունների մի քանի օրինակ: Այսպես՝ աղբյուրի մոտ պատկերված թռչունները խորհրդանշում են ավետարանիչներին, որոնք Սուրբ Հոգու աղբյուրից հագեցնում են իրենց հոգևոր ծարավը (սրանք երբեմն խորհրդանշում են նաև բոլոր նրանց, որոնք, հաղորդակցվելով քրիստոնեական գաղափարներով, հագեցնում են իրենց հոգևոր ծարավը): Փաթաթվող պարանոցներով սիրամարգերը Հին և Նոր Կտակարանների միասնությունն են: Նուսենիների մասին ասված է, որ նրանց պտուղների քաղցրությունը թաքնված է կեղևի տակ, ինչպես մարգարեների իմաստնությունը՝ առականների մեջ: Արմավենու մասին ասվում է, որ նրա ճյուղերը վեր են ձգվում՝ խորհրդանշելով «Ճշմարտութիւնը, [որը] կբուսնի երկրից, արդարութիւնը, [որը] վայր կնայի երկնքից» (Սաղմ. 26, 11): Քանի որ հավալուսանը ձկնորս թռչուն է, ապա նրանով խորհրդանշվում էին առաքյալները՝ մարդկային հոգիների ձկնորսները: Միևնույն ժամանակ հավալուսան կերպարի հետ կապված է մի հավատալիք, ըստ որի նա իր ծտերին կերակրում է սեփական մարմնով՝ իր կյանքը զոհաբերելով նրանց: Այդ պատճառով հավալուսանը խորհրդանշում էր նաև Քրիստոսին, որը նույնպես իրեն զոհաբերել է հանուն մարդկության փրկության: Խաչի կողքերին պատկերված աքաղաղները խորհրդանշում էին Հարությունը, որին մարդիկ պետք է արժանանան սուրբ խաչի գորությունը: Այգաբացի ազդարար աքաղաղը զուգորդվում էր մարգարեների՝ ապագայի նախագուշակների հետ: Միև-

նույն ժամանակ աքաղաղը Պետրոսի ուրացման խորհրդանշն էր, իսկ խաղողը Քրիստոսի խորհրդանշներից մեկն է, որովհետև Հովհաննեսի ավետարանում ասված է. «Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրը մշակն է» (Յովհ. ԺԵ. 1), խաչը, նիզակը և փշերը Քրիստոսի չարչարանքների խորհրդանշերն են և այլն:

Եթե պատկերազրական մոտիվների հիմնական բաղադրատարրը ընդհանրացնող բնույթ ունեն, ապա նրանց նկարումը աչքի է ընկնում մեծ բազմազանությունը, որ պայմանավորված է ստեղծող վարպետների գեղարվեստական մտածողության բազմազանությունը և գեղագիտական պատկերացումների առանձնահատկություններով: Դրանք այն հատկանիշներն են, որոնք բնորոշ էին յուրաքանչյուր գրչության կենտրոնին, յուրաքանչյուր անհատ նկարչին, որոնք առանձնանում էին գեղարվեստական մտածողության մակարդակով և ստեղծագործական հնարավորություններով:

Միջնադարյան զարդանկարչության մեջ բազմազան զարդամոտիվներից բացի, կան նաև բազմապիսի ու բազում կենդանական պատկերներ: Հնագույն հուշարձաններում՝ թե՛ քանդակազարդերում, թե՛ մանրանկարչության մեջ կենդանիների ու բույսերի պատկերներն աչքի են ընկնում որոշակի բնականությունով, և դրանց տիպերը հեշտությամբ կարելի է ճանաչել: Այսպես՝ այստեղ ուսումնասիրվող ձեռագրերում բավական իրական ձևով են պատկերված թռչունները՝ աքաղաղները, բազերը, կաքավները, փասիանները: Նույնքան բնական են բույսերը. կարելի է ճանաչել թուզը, պատատուկը, նուսենին, տանձենին՝ իր պտուղներով և այլն (նկ. 4-9): Սակայն հետագայում, աստիճանաբար, իրական բնություն պատկերները ձեռք են բերում պայմանական, ոճավորված նախի ձև:

Զարդարվեստում իրական աշխարհի ձևերից ոճավորմանն անցնելը բնական գործընթաց է, որ կապված է առարկաների կամ կերպարների պատկերման ընթացքում ընդհանրացման ձգտման հետ, որի հետևանքով ընդգծվում էին ներկայացվող առարկայի կամ կերպարի առավել տիպական և արտահայտիչ կողմերը. «առարկան փո-

խակերպվում է խորհրդանիշի, գաղափարագրային նշանի՝ այն պատճառով, որ անհրաժեշտ է լինում վերարտադրել ոչ թե դրա արտաքին կաղապարը, որը վարպետորեն անում էին անտիկ արվեստագետները, այլ դրա էությունը, որը տեսանելի է միայն հոգևոր հայացքին» (153, 56):

Վաղ շրջանի Ավետարաններում հատուկ տեղ էր հատկացվում պատվանդանի վրա կանգնած խոշոր խաչի պատկերմանը, որը հարդարվում էր գարդանախչերով և երբեմն ձեռագրի սկզբում զբաղեցնում մեկ ամբողջ էջ (տե՛ս նկ. 11): Այդպիսի խոշոր խաչերի պատկերներ կարելի է տեսնել նաև վաղ շրջանի ասորական (Ը-Թ. դդ., տե՛ս 255), ինչպես նաև վրացական ձեռագրերում (Ժ-ԺԱ. դդ., տե՛ս 193, 214, 215): Սակայն միջնադարյան Հայաստանում խաչի պաշտամունքը առանձնահատուկ տեղ ուներ: Գեղանկարչության ինչպես և բարձրագույն արվեստում խաչի պատկերումը արտացոլում է հայ իրականության համար բնորոշ ևս մեկ երևույթ՝ խաչի պաշտամունքը, որը արտահայտվել է խաչքարերի պատրաստման արվեստի մեջ²⁴:

Մեծ ուշադրություն էր դարձվում տիտղոսաթերթերի ձևավորմանը: Վաղ շրջանի ձեռագրերում դրանք պատկերվում էին մեծ չափերի բաղադրատարրերով: Այսպես՝ սկզբնատառը զբաղեցնում էր էջի գրեթե քառորդ մասը: Այն հավասարակշռվում էր ո՛չ պակաս, գրեթե համամասն խոշոր լուսանցազարդով, իսկ բնագրի առաջին տողերը գրվում էին երկաթագիր տառերով, ինչը նպաստում էր դրանց ոճական որոշակի կոթողայնությունը, ինչպես օրինակ՝ վերը նկարագրված Հ^{ՅԵ} 6264 ձեռագրում (նկ. 11, 12): Ընդհանրապես, այս տարածաշրջանում գրված և մեզ հասած վաղ շրջանի ձեռագրերի մեծ մասը աչքի է ընկնում խոշոր չափերով, ինչը նպաստում էր ամբողջ հորինվածքի կոթողայնությունը:

²⁴ Հայկական խաչքարերի հարցը քննարկվել է հայկական միջնադարյան ճարտարապետությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում: Կան նաև առանձին ուսումնասիրություններ, որոնց թվին են պատկանում Ա. Շահինյանի (212), Լ. Ազարյանի (4), Ա. Յակոբսոնի (220), Ա. Սահակյանի (194), Գ. Պետրոսյանի (69) և այլոց աշխատությունները:

Զարդանկարային նախշերում գերակշռում են տերևային մոտիվները, որոնք կազմված են սրածայր մանգաղաձև տերևներից և արմավիկներով պարուրազարդերից, որոնք բնորոշ են նաև այդ դարաշրջանի դեկորատիվ բարձրաքանդակային հուշարձաններին, ինչպես նաև կիրառական արվեստի գործերին: Զարդանկարի այդ տեսակը գրավել է Ա. Յակոբսոնի ուշադրությունը. նա նկատել է, որ «ԺԲ-ԺԳ. դդ. այդ տիպի զարդանախչերը շատ մեծ տարածում են ստանում Մերձավոր Արևելքում, հատկապես՝ Հայաստանի ճարտարապետական զարդանկարման արվեստում: Հենց հայ վարպետների հատիչի տակ է, որ այդ բուսական նախշն իր փայլուն զարգացումն է ստացել, ինչի մասին են վկայում ԺԲ-ԺԳ. դդ. հուշարձանները» (221, 242):

Այդ նախշերի նախատիպերը՝ պակաս ուժավորված տեսքով, հանդիպում են Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, այդ թվում նաև՝ Բարձր Հայքի տարածքում գտնվող հուշարձաններում, որոնք վերաբերում են հեթանոսական շրջանին: Այսպես՝ որոշ մետաղե անոթներ ու գավաթներ, որոնք թվագրվում են մ. թ. ա. 2-ե. դդ. և գտնվել են Երզնկայի մոտակայքում, ունեն տերևների և ճյուղերի տեսքով զարդեր, որոնք հիշեցնում են այդ տարածքում նկարագրված վաղ շրջանի ձեռագրերի զարդանախչերը (100, աղ. I, III, 132, նկ. 138):

Զարդանախչերի մեծ մասը մեզ է փոխանցվել ավելի վաղ հեթանոսական մշակույթից: Ա. Մնացականյանը գրել է. «Փաստերը ցույց են տալիս, որ զարդանախչերը ծնունդ են առել նախնադարյան հասարակության ծոցում, և դրանց հիմքում ընկած են կարևորագույն բնական, ինչպես նաև հասարակական ուժերի և երևույթների ինքնատիպ, գերազանցապես միամիտ մատերիալիստական ճանաչումն ու ընկալումը: Այդ մոտիվները որոշակի իմաստ ունենին և միայն հետագայում փոխակերպվել են, կորցրել նախկին իմաստը, փոփոխվել են... Ընդ որում՝ տարբեր դարաշրջաններում դրանք տարբեր կերպ էին ընկալվում և օգտագործվում» (64, 603):

Քրիստոնեական դարաշրջանը հանդիսացավ ողջ հին մշակույթի և նրա բոլոր ասպարեզների, այդ թվում՝ նաև արվեստի, վե-

րաիմաստավորման ժամանակը, և որը պետք է համապատասխաներ նոր գաղափարախոսությունը, եկեղեցու կողմից սահմանվող նոր կանոններին, որոնք «խիստ կանոնակարգում էին պատկերների բովանդակությունն ու ձևը» (206, 55): Չնայած ամեն ինչ խիստ կանոնների ենթարկելու այդ միտումին՝ նոր ժամանակների արվեստը չէր կարող չհենվել անցյալի ձեռքբերումների վրա: «Մի դարաշրջանից մյուսին անցումը գործընթաց է, որը դարեր է տևում, երբ նոր մշակութային արժեքները և նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունները աստիճանաբար ձևավորվում ու հասունանում են հին կարգերի ծոցում» (91, 11): Ինչ վերաբերում է արվեստին, ապա այս բնագավառում առավել ակնառու օրինակներ կարելի է բերել զարգանկարչությունից: Ինչպես եկեղեցիները զարգարելու համար օգտվում էին դարերի ընթացքում մշակված և ավանդական դարձած հարդարման հնարքներից, այնպես էլ մանրանկարչության մեջ շարունակում էին ապրել հին արվեստի պատկերները, որոնք այժմ ընկալվում էին նոր իմաստավորմամբ և, համապատասխանաբար, փոփոխվում էին:

Շատ հետաքրքրական են հին արվեստից արված առանձին նմուշների փոխառությունից փաստերը: Ինչպես հայտնի է, քրիստոնեական պաշտամունքային բազմաթիվ շինություններ կառուցվում էին հին կռատների տեղում, ընդ որում՝ հին շինությունների մասերն օգտագործվում էին նորերի պահանջների համար և հարմարեցվում էին դրանց: Այդ տեսակետից ուշագրավ է Ա. Մնացականյանի հետաքրքիր ենթադրությունն Աղթամարի կենդանական կիսարձանների ծագման մասին: Արված լինելով որպես բարձրաքանդակներ՝ դրանք ոճականորեն տարբերվում էին մնացածներից, որոնք արված էին հարթաքանդակային եղանակով: Կիսարձանները տարբերվում էին նաև նրանով, որ ավելի վատ են պահպանվել: Ա. Մնացականյանն այդ կիսարձանները համարում է հին հեթանոսական հարդարանքի վերապրուկներ, որոնք օգտագործվել են քրիստոնեական եկեղեցի կառուցելիս (172): Աղթամարում եկեղեցի կառուցելիս հին

տաճարի քարերի օգտագործման փաստը վկայում է նաև Ժ. դ. պատմիչ Թովմա Արծրունին (25):

Նոր մշակույթի ձևավորման գործում Արևելքը շատ կարևոր տեղ ունի: «Տիգրիս և Եփրատ գետերի միջև ու Տիգրիսից այն կողմ ընդհարվում են շատ տարբեր գեղարվեստական հոսանքներ, որոնք զգալի կերպով նպաստել են ուշ հելլենիզմի փոխակերպմանը նոր ոճի, որը բնորոշել է միջնադարյան ողջ արվեստի բնույթը», - գրել է Վ. Լազարևը (149, I, 39): Միջագետքի ակունքներում գտնվող Բարձր Հայք նահանգը այն կենտրոններից էր, որը նշանակալի դեր է խաղացել այդ արվեստի ձևավորման ու զարգացման գործում:

Մեր խնդրո նյութ տարածաշրջանի վաղ միջնադարյան արվեստը պատկերացնելու հարցում մեզ մասամբ օգնում են առկա նկարագրող ձեռագրերը, որոնց հարդարանքում պահպանվել են հեթանոսական պատկերացումների վերապրուկների հետ կապված հին նախշերի տարրեր:

Քրիստոնեական դարաշրջանում հին գաղափարների հիման վրա զարգանում էր նրանց խորհրդանշական նոր ընկալման ամբողջ մի համակարգ: Զարդային խորհրդանշական նշանների միջոցով արտահայտվում էին աշխարհաճանաչողական բարդ գաղափարներ, ինչը, հատկապես, բնորոշ էր Հին Արևելքի մշակույթին: Նրանց մեջ արտացոլվել են նաև հին դիցաբանական և տոտեմիստական պատկերացումների արձագանքները, որոնք, թափանցելով միջնադարյան արվեստի գինանոց, դրոշմվում էին կերպարների մեջ: Բնական ուժերը մարմնավորող հին տոտեմական պատկերացումների վերարտադրություններն այժմ օգտագործվում էին նոր ընկալմամբ, նոր վարդապետությունից գաղափարների հետ խորհրդանշական կապի միջոցով: Գաղափարների, երևույթների, ինչպես նաև հենց Ավետարանի շարադրանքի խորհրդանշական մեկնությունից այդ ձգտմամբ էր թելադրված հեթանոսական հին արվեստի հարուստ ավանդույթի օգտագործումը, որը վերաիմաստավորվում և հարմարեցվում էր նոր գաղափարախոսությունը:

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺԳ. ԴԱՐԻ ՍԿՋԲԻՆ

ԺԳ. դ. սկզբին Բարձր Հայքում ստեղծված ձեռագրերը հիմնականում կապված են Դարանաղի և Եկեղյաց գավառների գրչատների հետ, որոնց խոշորագույն հոգևոր կենտրոնը գտնվում էր Ավագ վանքում, որն անվանվում էր նաև Գրիգոր Լուսավորիչ մենաստան: Ըստ ավանդույթյան՝ վանքը մ.թ. 35 թ. հիմնել է Թադևոս առաքյալը, իսկ Դ. դարի սկզբին որոշ շինություններ վերականգնել է Գրիգոր Լուսավորիչը: Այդ վանքը գտնվում է Դարանաղի գավառում, Սեպուհ լեռան ստորոտին, Եկեղյաց գավառի սահմանագծին՝ Երզնկա քաղաքից ոչ հեռու: Երկու գավառների սահմանագծին գտնվելով՝ այն տարբեր աղբյուրներում կապվում է մերթ մեկ, մերթ մյուս գավառի հետ (ի դեպ՝ այդ երկու գավառների միջև հստակ սահման չկար): Արդեն ԺԲ. դ. այն եղել է թեմի առաջնորդարան և, հետևաբար, հոգևոր և գրչության կենտրոն (48, 618-625): Վանական համալիրն ուներ չորս եկեղեցի՝ Աստվածամոր, Հովհաննես Մկրտչի, Թադևոս առաքյալի և Ստեփանոս նախավկայի: Այդ եկեղեցիներին վերաբերող տեղեկությունները պահպանվել են ձեռագրերի հիշատակարաններում: Վանքում գործող բարձրագույն տիպի դպրոցը հավասարազոր էր Գլաձորի համալսարանին: Ավագ վանքը այժմ ավերված է (տե՛ս նկ. I-VIII – Ս. Վ.):

Հոգևոր մշակույթի կենտրոններ կային նաև գավառի խոշոր քաղաքների հետ կապված այլ վանական համալիրներում: Այդ քաղաքների տերերն ու բարեկեցիկ քաղաքացիները հաճախ հանդես էին գալիս որպես հովանավորներ, մեկենասներ, և նրանց միջոցներով կառուցվում էին եկեղեցիներ, վանքեր, հիմնադրվում էին դպրոցներ, գրչատներ: Այսպիսի կենտրոններ կային Կարինում, Բաբերդում, Երզնկայում, Թորգանում, Թիլում և այլուր: Հատկապես գործուն էին Երզնկա քաղաքի գրչության կենտրոնները: Մ. Պոտուրյանը գրել է. «Երզնկան, որ վանքերով շրջապատուած ԺԳ-ԺԴ. դարուն փայլուն անուն մը ունէր, Հայաստանի մէջ գիտական ճեմարան մը կը ներկայացնէր. կարծես ճիգ մ'ունէր մրցելու Կլիլիկոյ հետ, որ ուսումնական վարդապետներուն կեդրոնավայրն էր» (70, 19): Հ. Քյուրտյանն այդ ժամանակաշրջանն անվանում է ոչ միայն Երզնկա քաղաքի, այլև ողջ Եկեղյաց գավառի մշակույթի ծաղկման ժամանակաշրջան (88, 151): Բարձր Հայքում են ստեղծվել գրչության և մանրանկարչության արվեստի իսկական գլուխգործոցներ, որոնց շարքում հատուկ տեղ է գրավում հռչակավոր Մշո ձառնատիրը, որը չափազանց կարևոր և մեծ չափով վճռական նշանակություն ունի հայ գրչության արվեստի պատմության մեջ:

Ա. ՄՇՈ ՁԱՌՆՏԻՐՆ ՈՒ ՆՐԱՆ ՀԱՐՈՂ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մշո ձառնատիրն իր անունն է ստացել իր պահպանման վայրի՝ Մշո Սուրբ Առաքելոց վանքի (հարավարևելյան Հայաստան) անունով: Հսկա չափեր (70,5×55,5) ունեցող մատյանը ամենամեծ հայերեն ձեռագիրն է: Մշո ձառնատիրն ուղազրավ է ոչ միայն իր չափերով, այլև պարունակած նյութերով²⁵,

գրչության արվեստով, գեղարվեստական

²⁵ Ձեռագրում կան ներբողներ, ճառեր, քարոզներ, ուղերձներ, պատմական բովանդակություն ունե-

ցող շարադրանքների հատվածներ: Հատկապես մեծ արժեք ունեն որոշ նյութեր, որոնք պահպանվել են միայն այս ձեռագրում. Սեբեոս պատմիչի (է. դ.) ստեղծագործությունների հնագույն հատվածներ, Աբրահամ Եփեսացու ներբողը՝ նվիրված Աստվածամոր ավետմանը, Սահակ Գ. կաթողիկոսի ճառը, Ավարայրի ճակատամարտից առաջ իր գինվորների առջև Վարդան Մամիկոնյանի արտասանած ճառը:

ձևավորման ինքնատիպությամբ (ինչի մասին կխոսենք հետագայում), ինչպես նաև իր պատմությամբ, որն իր շատ կողմերով համահունչ է հայ ժողովրդի պատմությանը: Ինչպես նվաճողների կողմից ասպատակված Հայաստանի քաղաքների և գյուղերի բնակչությունը, այնպես էլ այս ձեռագիրը գերեվարվել է, օտարության մեջ է եղել և զարմանալիորեն փրկվել (49, 699-726, 56, 137-163, 34, 66-74):

Ճառընտիրը Ժ. Գ. վերջին պատվիրել է Բաբերդի տեր պարոն Աստվածատուրը: Հսկա ձեռագիրը գրելու համար մշակվել են համապատասխան չափեր ունեցող մագաղաթե թերթեր, որոնցից յուրաքանչյուրի համար օգտագործվել է մեկ հորթի կաշի²⁶: Ձեռագիրն երկու տարվա ընթացքում կրկնօրինակել է «գրչության արվեստում հմուտ և գիտակ» գրիչ Վարդան Կարնեցին: 1202 թ. ձեռագիրը հիմնականում պատրաստ էր, ավարտված չէր միայն հիշատակարանը: Այդ ժամանակ սկսվում է Իկոնիայի սուլթան Ռուքն-էդ-Դինի արշավանքը, որի ժամանակ ավերվում է Բաբերդը: Ձեռագրի պատվիրատու՝ Բաբերդի տանուտեր Աստվածատուրը սպանվում է, նրա ունեցվածքը թալանվում է, իսկ նրա պատվերով գրված ձեռագիրն ընկնում է Խլաթի թուրք դատավորի ձեռքը: Վերջինս այն տանում է Խլաթ և հայտարարում ձեռագիրը վաճառելու իր մտադրություն մասին: Մշո Առաքելոց վանքի վանականները ձեռագիրը փրկագնելու համար հանգանակություն են սկսում, որի համար նրանք շուրջ մեկ տարի շրջում են գյուղերում և դրամ ժողովում (հիշատակարանում պահպանվել են հանգանակության մասնակից բազմաթիվ մարդկանց անուններ): Չորս հազար արծաթ դրամով (այն ժամանակի համար շատ մեծ գումար) ձեռագիրը փրկագնվել է և տարվել Մշո Սուրբ Առաքելոց վանք: Այստեղ 1205 թ. ձեռագիրը կազմվել է, և գրվել հիշատակարանը, ուր

շարադրվել է վերը բերված պատմությունը: Սակայն հետագայում ևս ձեռագիրն ունեցել է ոչ պակաս ողբերգական ճակատագիր: 1915 թ. Օսմանյան Թուրքիայում Մեծ Եղեռնի ժամանակ երկու մասի բաժանված ձեռագիրը²⁷ փրկվել է. մի մասը գաղթական երկու հայ կանանց մեջքին, որոնք մեծ դժվարություններով այն հասցրել են էջմիածին, երկրորդ մասը գտել է ռուսական բանակի սպա Նիկոլայ դե Ռոբերտին, որ այն տարել է Թիֆլիս և նվիրել հայկական բարեգործական ընկերության թանգարանին ու դարձել ընկերության պատվավոր անդամ²⁸: Հետագայում՝ ձեռագրի երկու կեսը հանձնվել է էջմիածնի ձեռագրատանը և Երևանի Գրական թանգարանին: Այժմ երկու կեսն էլ 7729 համարի ներքո գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում:

Մշո ճառընտիրը մենք ներկայացնում ենք՝ գնահատելով սոսկ նրա գեղարվեստական ձևավորումը: Ձեռագիրն ունի չորս թեմատիկ մանրանկար, բազմաթիվ գլխազարդեր, լուսանցազարդեր և սկզբնատառեր: Սրանց առանձին նմուշներ արդեն հրատարակվել են հայկական մանրանկարչությունը նվիրված ալբոմներում (122, նկ. 13, 124, նկ. 29-32, 251, նկ. 1, 2, 240, նկ. 160):

Այս ձեռագիրը, ամենայն հավանականությամբ, պատկերազարդել են երկու մանրանկարիչ. առաջինը թեմատիկ մանրանկարների և մի շարք նկարազարդումների, այդ թվում նաև՝ տիտղոսաթերթի հեղինակն է, սակայն ձեռագրի զարդահարդարման մեծ մասը ոճական տեսակետից ակնհայտորեն տարբեր է նախորդից, և, անկասկած, նկարված այլ մանրանկարիչի ձեռքով:

Նախ՝ դիտարկենք ծաղկողի նկարած թեմատիկ նկարազարդումները, որը նաև տիտղոսաթերթի հեղինակն է: Վերջինիս վրա պահպանվել է արձանագրություն, ուր հիշատակվում է ձեռագրի պատվիրատու Աստվածատուրը և նկարիչ Ստեփանոսը:

²⁶ Այսօր ձեռագիրն ունի 607+17+1=625 թերթ. նրա 17 թերթը Մխիթարյան միաբանության Վենետիկի, 1 թերթը նույն միաբանության Վիեննայի մատենադարաններում են. 1958 թ. ձեռագրի երկու թերթ ձեռք է բերել Ռուսաստանի պետական (նախկին՝ Լենինի անվ.) գրադարանը և փոխանակման կարգով 1979 թ. հանձնել Մաշտոցյան Մատենադարանին:

²⁷ Ձեռագրից հեշտությամբ օգտվելու համար Մշո Սուրբ Առաքելոց վանքի վանականները 1828 թ. այն բաժանել են երկու մասի (56, 139):

²⁸ Այս սպա Ռուսաստանի ԳԱ հուշարձանների պահպանության հանձնաժողովի անդամ էր: Նա 1916 թ. այցելել է Արևմտյան Հայաստանի ջարդերից տուժած շրջաններ (նույն տեղում, 162):

Ձեռագրի սկզբում կա երեք հորինվածք պարունակող մի մանրանկար (նկ. 13): էջի վերին մասում պատկերված է Քրիստոսը՝ պատվիրատուի հետ և Մկրտույթյան տեսարանը, իսկ ստորին մասում՝ Ծնունդը և Մոգերի երկրպագությունը: Թերթը, որի վրա նկարված են այդ երեք պատկերները, վնասված է. վերին ձախ եզրը պատռված է: Այստեղ պատկերված է երկնային գահին բազմած Քրիստոսը: Մի ձեռքով նա բացված գիրք է պահել, որի վրա կարելի է կարդալ. «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Լ. 12), մյուս ձեռքով օրհնում է: Քրիստոսից ձախ եղել է դեմ դիմաց կանգնած մի անձ, պահպանվել է միայն նրա ձեռքի դաստակը, որով նա գիրք է մեկնում: Ըստ երևույթին՝ այստեղ պատկերված է եղել ձեռագրի պատվիրատու Աստվածատուրը²⁹: Քրիստոսից աջ, նրանից շրջանակով զատված, պատկերված է Մկրտույթյան տեսարանը: Այդ հորինվածքի որոշ մանրամասներ, ինչպես օրինակ՝ Հովհաննես Մկրտչի հագուստը (նա պատկերված է ոչ թե քուրձով, այլ գիմատիայով և քիտոնով), ինչպես նաև նրա ետևում շենքի առկայությունը վկայում են, որ նկարիչն օգտագործել է այդ տեսարանի պատկերման եզակի վաղ տարբերակներից մեկը: Հորինվածքը կառուցված է ըստ Հովհաննու ավետարանի շարադրանքի. «Այս բանը պատահեց Բեթաբարայում, Յորդանանի միևս կողմում, ուր գտնվում էր Յովհաննեսը եւ մկրտում» (Յովհ. Ա. 28): Մանրանկարի ետին պլանում պատկերված շինությունն ակնարկում է Բեթաբարա քաղաքը: Այս տեսարանի նման հորինվածքը հանդիպում է վաղ քրիստոնեական հուշարձաններում, օրինակ, Մաքսիմիլիանոսի հայտնի գահը գարդարող Զ. դ. բարձրաքանդակի վրա (266, նկ. 361): Դիտարկվող մանրանկարում Քրիստոսի ոտքերի տակ պատկերված է

տապալված վիշապ, ինչը, սկսած ԺԳ. դ., հայկական արվեստում բնորոշ է դառնում Մկրտույթյան տեսարանի պատկերագրության մեջ: Տապալված օձ-վիշապի կերպարը հայտնվել է գովերգագրական գրականության ազդեցության ներքո (186, 73-85, 132): Շարահնոցի ութերորդ օրվա կանոնում ասվում է. «Հորդանան գետում Փրկիչը խորտակեց վիշապի գլուխը և իր զորություններ փրկեց բոլորին» (218, 30): Ինչպես ցույց է տալիս Մ. էմինը, այդ կանոնի հիմքում ընկած է Սաղմոսարանի հետևյալ շարադրանքը. «Դու քո զորություններ ծովը ճեղքեցիր, եւ վիշապների գլուխները ջրերի մեջ ջարդեցիր» (Սաղմ. ՀԴ. 13): Այս շարադրանքի հիման վրա հայկական մանրանկարչության մեջ հայտնվեց Մկրտույթյան տեսարանի նոր տարբերակ, ուր հանդես է գալիս օձ-վիշապը, երբեմն էլ նաև՝ մի քանի վիշապ³⁰: Բյուզանդական արվեստում գերակշռում է այդ տեսարանի մեկ այլ տարբերակ. սովորաբար՝ ջրի մեջ պատկերվում է խաչը՝ պատվանդանի վրա, որպես քրիստոնեության հաստատման խորհրդանիշ, կամ էլ Հորդանանի հին մարմնավորումները ջրային աստվածության տեսքով՝ որպես անդր-չիրիմյան աշխարհի խորհրդանիշներ և այլն (34, 68, 86, 21-2, 262, 137):

էջի ստորին մասում պատկերված է Հիսուսի ծննդյան տեսարանը՝ Մոգերի երկրպագության ուղեկցությամբ: Այստեղ նույնպես տեսնում ենք այդ թեմայի բավականին վաղ տարբերակը: Աստվածամայրը պատկերված է մսուրի մոտ նստած՝ ձեռքերը գուրգուրանքով խանձարուրի մեջ փաթաթված մանկանը մեկնած, կարծես նրան գրկելու համար: Նրա խոշոր կերպարը հորինվածքում կենտրոնական տեղ է գրավում: Անձավի վրա, ուր գտնվում են Աստվածամայրն ու մանուկը, վեր է խոյանում սիմետրիկ տեղադրված ժայռերի զանգվածը,

²⁹ Ս. Տեր-Ներսեսյանը համարում է, որ Քրիստոսի ձախ կողմում կարող էր պատկերված լինել Ավետման տեսարանը: Սակայն պարզորոշ կերպով երևացող ձեռքը, որը գիրք է մեկնել, վկայում է, որ այնտեղ, ամենայն հավանականությամբ, պատկերված է եղել ձեռագրի պատվիրատուն՝ պարոն Աստվածատուրը, որի ձեռքում պատվիրված գիրքն է:

³⁰ Վիշապի հայտնվելը Մկրտույթյան տեսարանում կապված է նաև պարականոն մի գրվածքի հետ, որի համաձայն օձը հանդես է գալիս ոչ միայն որպես Ադամի և Եվայի գայթակղիչ, այլև որպես նենգ դև, որը նրանց ստիպում է խոստանալ հլու լինել իր կամքին: Վիշապի (դևի, սատանայի) իշխանությունն ավարտվում է Փրկչի գալստյան հետ (24, I, 312, 146):

որոնց եզրագծերը ոլորված են և, արտասովոր ձև ստանալով, հիշեցնում են նախազարդային շրջանակ: Լոգանքի տեսարանից պահպանվել է միայն ծառայող կնոջ պատկերի մի մասը և Հիսուս մանկան գլուխը: Հորինվածքի ձախ մասը պատռված է: Այնտեղ պատկերված են եղել Հովսեփը և երկրպագող մոգերը (նրանցից մեկի թագով պսակված գլուխը պահպանվել է):

Այս հորինվածքի մեջ առավել բնորոշ է Ծննդյան տեսարանում նստած Աստվածամոր կեցվածքը: Այս տարբերակը կապված է նրա անցավ ծննդաբերության գաղափարի հետ (188, 73, 187, 171): Այդպիսի պատկերագրությունն առավել վաղ նմուշներ մեզ են հասել Դ-Ե. դդ. քարատապանների բարձրաքանդակներում, օրինակ՝ Մանտուայի քարատապանում (142, 28, նկ. 8): Բազմաթիվ օրինակներ առկա են նաև ավելի ուշ հուշարձաններում՝ Թ-Ժ դդ. Կենսինգստոնի թանգարանի Թ. դ. փղոսկրյա կազմում (նույն տեղում 226, նկ. 147), Խոզիաս Լուկասի և Պալատինյան կապելայի խճանկարներում Պալերմոյում (266, նկ. 157, 159, 268, նկ. 79, 80, 230, նկ. 130), ինչպես նաև Կապադովկիայի որմնանկարներ, մասնավորապես՝ Ղարաբաղ քիլիսեի և Գարանլեկ քիլիսեի քարանձավային տաճարներում (երկու հուշարձաններն էլ պատկանում են ԺԱ. դ., տե՛ս 246, ալբոմ III, նկ. 198ա)³¹: Հայկական մանրանկարչության մեջ նման պատկերագրության հնագույն նմուշները հանդիպում են հիմնականում ԺԱ. դ. հուշարձաններում, օրինակ՝ 1057 թ. Մելիտենեի Ավետարանում (Մատ. ձեռ. Հ^մ 378A, 152, 85): ԺԳ. դ. սկզբին Ծննդի նման սխեմա ի հայտ է գալիս ոչ միայն Հայաստանում, սրան մենք հանդիպում ենք նաև վրացական հուշարձաններում, օրինակ՝ Թիմոթեոսուբանի տաճարի որմնանկարներում (1205-1215 թթ., տե՛ս 193, 55), ինչպես նաև ԺԲ-ԺԳ. դդ. ասորական ձեռագրերում (255, 115):

³¹ Համեմատությունը Կապադովկիայի տաճարների հետ առավել ևս բնական է, քանի որ, ինչպես արդեն նշել են մասնագետները, այնտեղ հնուց գոյություն ունեին հայկական բնակավայրեր, և մի շարք անձավային տաճարներ կառուցվել և հարգարվել են հայ վարպետների մասնակցությամբ (152, 89):

325բ էջին պատկերված է «Մուտք Երուսաղեմ» պատկերը (նկ. 14), որը զբաղեցնում է էջի միայն մի մասը: Այս տեսարանի պատկերագրությունն աչքի է ընկնում լակոնիզմով. Քրիստոսին հետևում են ընդամենը երկու աշակերտ, իսկ դիմավորողների խումբը կազմված է երեք մարդուց. ներկայացված են մի ծերունի, միջին տարիքի մարդ՝ արմավենու ճյուղերը ձեռքին և մի կին, որ մարմնավորում է այսպես կոչված «Սիոնի» կամ «Երուսաղեմի» դստերը³²: Պատկերված են նաև չորս պատանի՝ երկուսը հագուստ են փռում Երուսաղեմ մուտք գործող Հիսուսի առջև, իսկ մնացած երկուսը ճյուղեր են հատում ծառից: Հետաքրքիր է ներկայացված Երուսաղեմը. տիպական միջնադարյան քաղաք՝ շրջապատված աշտարակներ ունեցող քարե պարսպով, որի կենտրոնում վեր է խոյանում սյուների վրա հանգչող ռոտոնդան, որը խորհրդանշում է տաճարը: Քաղաքի նման պատկերումը դառնում է կանոնական և հանդիպում է արվեստում սկսած Զ. դ., օրինակ՝ Վիեննայի Գենեգիսի նկարագրողումներում (273, աղ. 21):

Մշո ձառնարի մանրանկարների ոճը աչքի է ընկնում ձևերի մեկնաբանության որոշակի պայմանականությամբ, առանձնահատկություն, որը, ընդհանուր առմամբ, բնորոշ է միջնադարյան արվեստին և հատկապես վառ կերպով բացահայտվել է քրիստոնեական արվեստի հուշարձաններում: Մշո ձառնարի մանրանկարներում այդ միտումը արտահայտվել է պատկերների ընդգծված հարթապատկերայնության մեջ՝ ամեն ինչ դեկորատիվ ռիթմին ենթարկելու եղանակով: Շենքերը, բնանկարի մանրամասները, ինչպես նաև կերպարները գծագր-

³² Հովհաննեսի Ավետարանում ասված է. «Եւ Յիսուս մի էջ գտնելով, նստեց նրա վրայ, ինչպէս որ գրուած է. «Մի՛ վախեցիր, ո՛վ դուստրդ Սիոնի, ահա քո թագաւորը գալիս է՝ էջի քուռակի վրայ նստած» (Յովհ. ԺԲ. 15): Այստեղ ակնարկվում է Զաքարիայի մարգարեությունը, ուր կա. «Ուրախացի՛ր խնդութեամբ, դու՛ստրդ Սիոնի, կանչի՛ր ցնծութեամբ, դու՛ստրդ Երուսաղէմի, ահա գալիս է քո թագաւորը քեզ մօտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագաւորը՝ հեծած էջի, էջի քուռակի վրայ» (Զաք. Բ. 10): Երուսաղեմի դուստրը երբեմն պատկերվում է երեսան գրկին:

ված են առավելապես ուրվագծով, որի գծերը երբեմն ընկալվում են որպես զարգանախ: Այդ ամենով հանդերձ պատկերված անձանց դեմքերը զուրկ չեն արտահայտչականութունից: Հատկանշանական է հատկապես Աստվածամոր դեմքը Մննդյան տեսարանում. դեմքը գեղեցիկ է, իսկ մեծ և տխուր աչքերը նրան ոգեղենութուն են հաղորդում: Չնայած որ վարպետի գծանկարը մի քիչ կաշկանդված է, սակայն զգացվում է, որ նա օգտվել է լավ նմուշից: Դրա մասին վկայում են հորինվածքի հստակութունը և երբեմն բարդ ճարտարապետական կուլիսների ավանդական տեսքի պահպանումը:

Մեծ տպավորութուն է գործում տիտղոսաթերթի շքեղ ձևավորումը, ուր շարադրանքը սոսկ աննշան մասն է (նկ. 15): Այստեղ մենք, փաստորեն, տեսնում ենք սյուներով խորան՝ նուրբ հյուսկեն զարգանախ՝ զարգարված գլխազարդով: Գլխազարդի կենտրոնը զբաղեցնում է խոշոր վարդյակը՝ երկու կողային կիսավարդյակներով, որոնց մեջ տեղադրված են հերալդիկ կենդանիների պատկերներ (մի կողմից՝ իրական՝ առյուծներ, իսկ մյուս կողմից՝ երեւակայական կենդանիներ՝ սֆինքսներ): Գլխազարդը հենվում է բարձր նրբագեղ սյունների վրա, որոնք նույնպես պատված են հյուսկեն նախշով: Սյուներից մեկը կազմում է «Ի» սկզբնատառի առանցքը, իսկ կողմնային լուսանցազարդի տեղում պատկերված է երկար նեցուկի վրա մեծ խաչը՝ պսակված ավելի փոքր հավասարակողմ խաչով:

Տիտղոսաթերթի նախշերը նկարված են նուրբ գծանկարային ոճով, դրանց բարդ հյուսքերը, ինչպես և քանդակագործության մեջ, աչքի են ընկնում կառուցվածքային հստակությամբ: Տիտղոսաթերթի եզրերում՝ ուղղահայաց վերից վար, նրբագեղ տառերով գրված է արձանագրութուն, ուր հիշատակվում են պատվիրատու Աստվածատուրն ու նկարիչ Ստեփանոսը: Ծառնտրի մի շարք լուսանցազարդեր նկարված են նման գծագրական ոճով. դրանց մեջ նույնպես գերակշռում են բարդ հյուսկեն նախշերը, որոնք նկարված են նուրբ պլաստիկ

գծերով: Ինչպես տիտղոսաթերթը, այնպես էլ ոճականորեն նրան մոտ լուսանցազարդերը, ներկված են ավելի նուրբ, թափանցիկ ներկերով (նկ. 16, 17):

Սակայն ձեռագրի զարդանախշերի մեծ մասը նկարված է այլ ոճով: Սրանց անանուն հեղինակն ավելի վառ անհատականութուն է. նա համարձակ ձևով ձեռագրի լուսանցքները պատել է բազմազան, վառ գունազարդումներով բուսական նախշերով, որոնց մեջ ներմուծել է ինչպես իրական, այնպես էլ երեւակայական թռչունների և կենդանիների պատկերներ: Գունային զուգադրումները նա կառուցել է երանգների հակադրության սկզբունքով: Այսպես՝ նարնջագույնի երանգները համադրվել են մուգ շագանակագույնի հետ, երբեմն, գրեթե սևի հետ, որից նարնջագույնը բոցավառվում է կրակի պես. երկնագույնը նա ստվերարկում է մուգ կապույտի (ուլտրամարինի) թավիշով: Երեւակայական նախշերը վարպետի վրձնի տակ ձեռք են բերում գալարվող և Ֆլաշացնող դեքերի, երբեմն էլ զարմանալի հեքիաթային թռչունների կերպարանք: Նրանց շարժումների պլաստիկան ընդգծվում է ուրվագծերով: Այս վարպետի անունն անհայտ է մնում: Նրա նկարած գլխազարդերը, լուսանցազարդերն ու սկզբնատառերը, ինչպես իրենց ձևերով, այնպես էլ իրենց կոլորիտի գունագեղությամբ շատ մեծ տպավորութուն են թողնում և ձեռագրին զարգարուն տեսք են տալիս (նկ. 18, 19, 20): Վառ և բազմերանգ այդ նկարազարդումներն այնպիսի մեծ ուշադրութուն են գրավում, որ արվեստի «երկրպագուների» կողմից բազմաթիվ լուսանցազարդեր կտրվել և հանվել են ձեռագրից:

Մշո ծառնտրի էջերը զարգարող նախշերի մեջ ոճավորված բույսերից բացի մենք տեսնում ենք իրականությանը բավական մոտ պատկերված տարբեր ծաղիկների, թփերի և ծառերի պատկերներ: Այսպես՝ մի տեղ տեսնում ենք հյուսթեղ, վառ պտուղներով նուննի, կարելի է ճանաչել նաև թուզը, խաղողը, մեխակը և այլն: Որոշ դեպքերում տրվում է բույսի ամբողջական պատկերը, երբեմն արմատի հետ միասին (նկ. 21): Դա առիթ է տվել ենթադրելու, որ ձեռագրի նմուշների շարքում կարող էին լինել և դե-

ղաբուսակներ: Ս. Տեր-Ներսեսյանն այդ կապակցութեամբ գրել է. «Մշո Ճառընտրի լուսանցազարդերը ներշնչվել են անկասկած ինչ-որ բժշկական ժողովածուից, որի ամենահին օրինակը հանդիսանում է մի ձեռագիր, որը պարունակում է Դիոսկորիդեսի աշխատութունը...» (240, 214): Սակայն Մշո Ճառընտրի ոչ բոլոր լուսանցազարդերը կարելի է կապել նման ժողովածուների հետ: Բուսական նախշերի մեծ մասը երևակայական են կամ այնքան են ոճավորված, որ դրանց իրական նախատիպերն անհնարին է կռահել: Նույնը կարելի է ասել կենդանական աշխարհին վերաբերող պատկերների մասին: Այստեղ նույնպես հանդիպում են ինչպես իրական, այնպես էլ երևակայական կենդանիների պատկերներ: Առաջինների թվին են պատկանում հաճախակի հանդիպող առյուծները, օձերը, որոնք երբեմն պատկերված են հերալդիկ դիրքերով: Կարելի է ճանաչել նաև որոշ թռչուններ՝ սիրամարգեր, աքաղաղներ, թռվածակներ, արագիլներ, կաքավներ, թռնձեր և այլն: Ավելի շատ են անճանաչելիորեն ոճավորված, իսկ երբեմն էլ կենդանական աշխարհի պարզապես երևակայական ներկայացուցիչներ: Այդ կենդանական աշխարհը մեկուսացված չէ. ներմուծված լինելով բուսական բարդ պարուրազարդերի և հյուսվածքների մեջ՝ այդ կերպարները, անկասկած, ունենին խորհրդանշական իմաստ, որը միշտ չէ որ հնարավոր է լինում բացատրել:

Հայկական պատկերարազարդ ձեռագրերում հանդիպող բուսական ու կենդանական աշխարհների այսպիսի բազմազանությունը կապակցությունը Ս. Տեր-Ներսեսյանը գրել է. «Հայկական դեկորատիվ արվեստի ակունքները գտնվում են խոր անցյալում: Դա իրանն է, որը Հայաստանին է տվել երևակայական կենդանիների և որոշ բույսերի ձևեր, դա հին Միջագետքի արվեստն է, որտեղից Հայաստանը փոխառել է երկրաչափական նախշերի մեծամասնությունը, և որոնք Հայերի միջոցով փոխանցվել են Փոքր Ասիային ու Ասորիքին: Հետագայում՝ դարձյալ Հայերը, որոնք Բյուզանդիա էին գալիս, մեծ դեր են խաղացել այնտեղ արևելյան ազդեցությունների ի հայտ գալու գործում, որոնք պատկերամարտություն ժամանակաշրջանում փոխել են բյուզանդական արվեստի բնույթը» (232, 49):

Հայերեն ձեռագրերում հանդիպող երևակայական կենդանիների պատկերները կապված են ոչ միայն իրանական արվեստի հետ: Ամեն տեսակի հրեշների ի հայտ գալը աշխարհի շատ ժողովուրդների միջնադարյան արվեստի համար բնորոշ երևույթ էր դարձել: Այսպիսի պատկերների նկատմամբ նաև ռուսական և ռումանական արվեստում ԺԲ-ԺԳ. դդ. հայտնված հակումը Լ. Լեյկովը կապում է Մերձավոր Արևելքի և Միջագետքի ավանդույթների հետ (153, 57): Հին հավատալիքների արտացոլք լինելով՝ այդ կերպարները միջնադարում ընկալվում էին որպես չարի խորհրդանիշ: Հետաքրքիր է, որ Ագաթանգեղոսը, նկարագրելով Գրիգոր Լուսավորչի կողմից հին կռատների ավերումը, ամեն անգամ ավելացնում է, որ այնտեղից հալածում էին դեերին (2ա, 409, 65ա): Վաղ քրիստոնյաները դրանք նույնացնում էին հեթանոսական կուռքերի, կեղծ աստվածների հետ, որոնց հալածել ու հաղթել էր նոր դավանանքը: Քրիստոնեական արվեստի զինանոց ներմուծվելով՝ հին ոգիների ու աստվածների կերպարներն ընկալվում էին կա՛մ որպես մուլթ ուժերի խորհրդանիշ, կա՛մ էլ վերաիմաստավորվում էին՝ համապատասխանեցվելով նոր գաղափարախոսությունը³³: Դրան նպաստում էր յուրօրինակ մի մտածելակերպ, որի համաձայն հեթանոսական ուժերն ու գաղափարները ոչ միայն պարտվել էին, այլև նվաճվել և ծառայում էին քրիստոնեական գաղափարներին (64, 65, 7-48, 172, 367)³⁴: Այդ միտումը ուղղակիորեն ազդեցվում էր Աստվածաշնչի գրքերի մեկնությունների հետ, որոնք կապ էին տեսնում Հին և Նոր

³³ Այդ տեսակետից շատ բնորոշ են «Բարոյախոսները», որոնք շատ մեծ տարածում են գտել միջնադարյան գրականության մեջ: «Բարոյախոսների» առանձին տարբերակներ պահպանվել են նաև հայ մատենագրության մեջ (166, 168): Դրանցում տրվում է տարբեր կենդանիների ու թռչունների (ոչ միայն իրական) նկարագրություններ, ինչպես նաև խոսվում է դրանց խորհրդանշական որոշ առանձնահատկությունների մասին, որոնք համապատասխանում են այդ ժամանակաշրջանի պատկերացումներին:

³⁴ Հին դավանանքների պարտությունը և նոր վարդապետության հաղթանակը յուրօրինակ ձևով արտացոլվել է Ռոմանական Արևմուտքի արվեստում: ԺԲ-ԺԳ. դդ. ռոմանական տաճարների պատերին, ինչպես նաև ձեռագրերում հայտնվում են զանազան հրեշների պատկերներ, որոնք հին հավատալիքների ու տոտեմական պատկերացումների արձագանքն են: (178, 154, 53):

Կտակարանների միջև, և այսպիսով նոր ուղիներ էր բացվում տեղական հին հավատալիքների ու պատկերացումների մեկնությունների համար:

Մշո ձառնարի լուսանցազարդերը, ըստ սովորության, տեղադրված են գլուխների կամ շարադրանքի առանձին հատվածների սկզբում: Մեծ բաժինների կամ գրքերի սկիզբը զարդարված է կամ գլխազարդով, կամ խոշոր սկզբնատառով:

Լուսանցազարդերում հաճախ են կրկնվում հատկապես մեզ ծանոթ կիսարմավիկներից, սրածայր մանգաղաձև տերևներից և գալարվող ցողունների պարուրազարդերից կազմված նախշերը: Բազմազան տարբերակներով ներկայացված այդ զարդանախշերի տարրերն աստիճանաբար կազմում են լուսանցազարդի դասական նշանը, որը դառնում է հայկական միջնադարյան ձեռագրի հարդարանքի ամենաբնորոշ բաղադրատարրը: Այդ լուսանցազարդերի ամենավաղ նմուշները հանդիպում են Արևմտյան Հայաստանի հուշարձաններում, հատկապես, Բարձր Հայքի գրչատներից դուրս եկած ձեռագրերում: Մեզ հասած նյութը թույլ է տալիս հետևել լուսանցազարդերի հիմնական տիպերի զարգացման փուլերին (նկ 22, 23):

Մշո ձառնարի արտակարգ խոշոր չափերը կանխորոշել են նրա դեկորատիվ հարդարանքի կոթողային բնույթը: Ընդ որում՝ այստեղ մենք տեսնում ենք ոչ միայն զարդանախշի խոշորացված տարբերակներ. եթե այդպես լիներ, ապա մենք կունենայինք ծանոթ նախշերի ընդամենը պարզեցված և ավելի կոպիտ պատկերները: Սակայն Մշո ձառնարի զարդանախշերը առանձնանում են ինչպես հարդարանքի ընտրության, այնպես էլ նրա մեկնության որոշակի նորույթներով: Այդ լուսանցազարդերը նկարած ծաղկողները ստեղծագործաբար են մոտեցել իրենց առջև դրված գերխնդրին՝ ձեռագիր հսկային արժանի նկարազարդում ստեղծելուն: Ամեն ինչ՝ և՛ մագաղաթի, թանաքի, ներկերի որակը, և՛ գրի վայելչությունը, և՛ զարդանախշերի հարստությունը բարձրակարգ վարպետության արդյունք են: Ձեռագրի զարդանախշերի մեջ հանդիպում են այնպիսիք, որոնք միայն իրենց ընդհանուր բնույթով են կապված ավանդական հար-

դարման ձևերի հետ և, ըստ էության, գրքի ձևավորման արվեստի ինքնատիպ նմուշներ են³⁵:

Զարդանախշային հարդարման բնույթով Մշո ձառնարին հարում են ԺԳ. դ. սկզբի մի շարք ձեռագրեր, որոնց մեծ մասն ընդօրինակվել է նույն Ավագ վանքում: Բոլորն էլ Ավետարաններ են. մեկը Բրիտանական գրադարանի Հ^մ 13654-ն է՝ 1200 թ., մյուսը՝ Մատենադարանի Հ^մ 10359-ը՝ 1201 թ.: Հետաքրքրական են Մխիթարայան միաբանության Վիեննայի մատենադարանի ավետարանական պատառիկը (ձեռ. Հ^մ 456, ԺԲ-ԺԳ. դ. սկիզբ) և Հ^մ 218 ձեռագիրը՝ Սեբաստիայի Ավետարան, 1222 թ., և այլն: Թվարկված ձեռագրերից ուշագրավ են հատկապես առաջին երկուսը: Ընդօրինակված լինելով Ավագ վանքի գրատանը Մշո ձառնարի հետ գրեթե միաժամանակ՝ նրանք վերջինիս հետ շատ ընդհանրություններ ունեն: Ա. Մաթևոսյանը ենթադրել է, որ այդ երեք ձեռագրերը, այսինքն՝ Մշո ձառնարի, 1200 և 1201 թթ. Ավետարանները, ընդօրինակել են միևնույն Վարդան Կարնեցի գրչի և նկարազարդվել են նույն Ստեփանոս մանրանկարչի ձեռքով (57): Սակայն նշված մատյանների գրչությունն ընդհանրություններ ունի միայն առանձին հատվածներում, ինչը կարելի է բացատրել հետևյալ կերպ. Վարդան Կարնեցին ու Ստեփանոսը միասին աշխատել են Մշո ձա-

³⁵ Չնայած ներկայիս տեխնիկայի բոլոր առավելություններին՝ վերատպությունների մեջ, ցավոք, մանրանկարչական հուշարձանների որակների գզալի մասը կորսվում է, ուստի և գրչության արվեստի շատ նրբերանգներ հասանելի են մնում մասնագետների նեղ շրջանակներին, որոնք հնարավորություն ունեն թերթել միջնադարյան ձեռագրերը: Ինչ վերաբերում է Մշո ձառնարին, ապա ոչ մի տպագրություն չի կարող ամբողջովին վերարտադրել հսկայական չափեր ունեցող ձեռագրի էջերը, և տպագրության դեպքում կարելի է հիանալ միայն նրա առանձին մանրամասներով, որը, անկասկած, խոչընդոտում է հուշարձանի ամբողջական ընկալմանը: Սակայն այդպիսի հնարավորությունը թույլ է տալիս գտնել որոշ չափով գնահատել ձեռագիրը ծաղկած նկարիչների մասնագիտական բարձր վարպետությունը և գրքերի նկարազարդման արվեստի բոլոր նրբությունների նրանց իմացությունը:

ուրնտրի բնագրի վրա, 1200 թ. Ավետարանի շարադրանքը, ըստ հիշատակարանի, ընդօրինակել է Վարդանը, իսկ 1201 թ. Ավետարանը՝ Ստեփանոսը: Ինչ վերաբերում է երեք ձեռագրերի գեղարվեստական ձևավորմանը, ապա դրանք պակաս գուգահեռներ ունեն. որոշակի հստակ կետեր կարելի է նկատել միայն երկուսի՝ Մշո ճառընտրի և 1201 թ. Ավետարանի գեղարվեստական ձևավորման մեջ: Մենք արդեն գիտենք, որ Ստեփանոսը ոչ միայն գրիչ էր, այլև մանրանկարիչ, որը արել է Մշո ճառընտրի նկարազարդումների մի մասը: Նրա անունը նշված է նաև 1201 թ. Ավետարանի հիշատակարանում: Վարդան Կարնեցին հիշատակվում է որպես գրիչ. նա ընդօրինակել է 1200 թ. Ավետարանը, որի գեղարվեստական հարդարանքը մյուսներից տարբերվում է իր ավելի նրբագեղ և նրբին ոճով, որն իր բնույթով ավելի մոտ է կիրիկյան մանրանկարչության նմուշներին, ինչը նշել է Տ. Իգմայլովան (130, 208):

Նույն գրչատնից դուրս գալով, հետևելով նույն ավանդույթներին՝ այդ ձեռագրերը, այդուհանդերձ, յուրովի են արտահայտել այդ ավանդույթները: Յուրահատկությունները ցայտուն են հատկապես տիտղոսաթերթերում, որոնք բոլոր երեք ձեռագրերում էլ տարբեր են: Այսպես՝ Մշո ճառընտրի միակ տիտղոսաթերթը, ինչպես տեսանք, խորան է, որը զարդարված է նուրբ հյուսկեն զարդանախշով, իսկ շարադրանքը տեղադրված է սյուների միջև: Նույն հյուսկեն զարդանախշը զարդարում է նաև սկզբնատառը, որի առանցքը միաձուլվում է սյանը: 1201 թ. Ավետարանի տիտղոսաթերթերի զարդագրերը (ինչպես և խորանների գլխազարդերը) միշտ չէ, որ սահմանափակված են շրջանակներով և զարդարված են խոշոր կիսարմավիկներով ու բուսական պարուրազարդերով: Իսկ 1200 թ. Ավետարանի տիտղոսաթերթերի գլխազարդերը նկարված են նուրբ ծաղկային զարդանախշով: Ձեռագրի զարդագրերն իրենց բնույթով մերձենում են այն տարբերակներին, որոնք սկսած ԺԲ. դ. մեծ տարածում էին ստացել կենտրոնական և Արևմտյան Հայաստանի գրչատնե-

րում. դրանք կազմված են լայն, շքեղ զարդանախշված երիզներից, ուր ոսկին շատ է:

Նախ դիտարկենք 1200 թ. Ավետարանը. երկար տարիներ այն պահվել է Կոնստանդնուպոլսի Ղալաթիա թաղի հայոց Ազգային մատենադարանում, ապա դարձել է Հ. Գևորգյանի սեփականությունը և որոշ ժամանակ գտնվել է Նյու Յորքում, ուր այն տեսել ու նկարագրել է Գ. Հովսեփյանը³⁶: 1975 թ. ձեռագիրը հայտնվել է Լոնդոնում և աճուրդում վաճառվել, գնել է Բրիտանական գրադարանը, ուր և այժմ պահվում է 13654 համարի ներքո (261, 20, 21, 46): Պահպանվել են ձեռագրի խորաններն ու տիտղոսաթերթերը, որոնց մեջ զարդանախշված խոշոր գլխատառերի կողքին պատկերված են ավետարանիչների խորհրդանիշները՝ իրենց այսպես կոչված «երկրային» տեսքով, այսինքն՝ առանց լուսապսակի, թևերի ու մատյանների: Տ. Իգմայլովան այս Ավետարանը դիտարկում է որպես մի հուշարձան, որն արտացոլում է ավետարանիչների խորհրդանիշների պատկերման պատմության միջանկյալ փուլ (130, 208): Սկզբում դրանք պատկերվում էին որպես սովորական երկրային կենդանիներ, բայց հետագայում ստացան սրբությանը բնորոշ հատկանիշներ՝ լուսապսակներ և թևեր, իսկ Մատթեոսի խորհրդանիշ մարդը վերածվեց հրեշտակի: Տ. Իգմայլովան ուշադրություն է դարձրել ևս մի շատ կարևոր առանձնահատկության վրա. 1220 թ. Ավետարանում Մատթեոս ավետարանի խորհրդանիշը ներկայացված է «խառը» հրեշտակ և մորուսով մարդ, այսինքն՝ թևավոր, մորուսավոր մարդու տեսքով³⁷: Այս ձեռագրում ավետարանիչների խորհրդանիշները նկարել է պակաս հմուտ ծաղկող և, անկասկած, գրչությանից ավելի ուշ, ինչը նկատել է ձեռագրի առաջին նկարագրող Բ. Կյուլեսերյանը (80, 28): Ավետարանի հիմնական,

³⁶ Գ. Հովսեփյանի գրքում, (49, 639-648) որպես այս ձեռագրի էջեր, սխալմամբ տրված են այլ Ձերթի արվեստի թանգարանի ՀՊ 50.3 ձեռագրի պատկերները:

³⁷ Ավետարանիչների երկրային շարքի ավանդույթը շատ հին է: Կ. Նորդենֆալդը դրանք կապում է Դիաթեսարոնի բոլոր չորս ավետարանների միավորման փորձի հետ. տե՛ս 262, 119-140, 80, 28: Թևավոր խորհրդանիշների հայտնվելը վերաբերում է ԺԳ. դ.:

առաջին նկարագարգումը, որը կատարվել է բնագրի ընդօրինակմանը զուգահեռ, հատկանշվում է կատարողական բարձր վարպետությամբ, գեղարվեստական ճաշակի նրբագեղությամբ, իսկ զարդանախշերի տիպերը վկայում են, որ ծաղկողը ծանոթ է եղել բյուզանդական գրքարվեստին: Եվ եթե Ավետարանի հարգարանքը որոշ նմանություն ունի կիլիկյան արվեստին, ապա դա ամենևին էլ վերջինիս ազդեցություն հետևանքը է: Այստեղ, ավելի շուտ, տեղի է ունեցել հակառակ երևույթ. այստեղ գործ ունենք մի արվեստի հետ, որը խոր արմատներ է ունեցել Բարձր Հայքում և նշանակալի դեր է ունեցել հենց կիլիկյան արվեստի ձևավորման մեջ: Արևմտյան Հայաստանի և, մասնավորապես, Բարձր Հայքի գրչատներին վիճակված էր կարևոր դեր խաղալ կիլիկյան մանրանկարչության ձևավորման գործում: Երբ Ժ. Գ. Կիլիկիայում նոր-նոր հիմնադրվում էին վանական դպրոցներ և գրչատներ, Արևմտյան Հայաստանի հոգևոր մշակույթի օջախներն արդեն զարգացման հիմնավոր ուղի էին անցել:

1200 թ. Ավետարանի տիտղոսաթերթերի ձևավորմանը համանման օրինակներ ենք տեսնում ԺԲ-ԺԳ. դդ. մի շարք չթվագրված ձեռագրերում, օրինակ՝ Երուսաղեմի հավաքածուի Հ^մ 1796 Ավետարանում (61, 146-150): Ս. Տեր-Ներսեսյանն այն համարում է ԺԲ. դ. վերջի կիլիկյան վարպետի աշխատանք (241, 129): Զևավորման նման օրինակներ կարելի է տեսնել Ֆրիդի պատկերասրահի Հ^մ 50.3 ԺԲ. դարով թվագրվող ձեռագրում (234, նկ. 18, 20, 22, 23), ԺԲ. դ. Խարբերդի Ավետարանում (129, 165) և այլն: Այս բոլոր ձեռագրերը վկայում են տիտղոսաթերթերի ձևավորման այդ տեսակի տարածվածության մասին, ընդ որում՝ այդպիսի ձեռագրերի մեծ մասը դուրս է եկել Արևմտյան Հայաստանի գրչատներից: Այս տեսակը կապված է այսպես կոչված «Մուղնու նմուշի» հետ, որի մասին կխոսենք հետագայում:

Մշո ձառնարի զարդանախշային հարդարանքի հետ ավելի շատ ընդհանրություններ ունի մի այլ՝ արդեն հիշատակված Հ^մ 10359 Ավետարանը (1201 թ.), որը Ռա-

ֆայել Մարկոսյանի կտակած հավաքածուի մեջ Մաշտոցյան Մատենադարանը ստացել է համեմատաբար վերջերս՝ 1968 թ.: Զեռագրի նկարագարգումներից պահպանվել են Կարպիանոսին ուղղված եվսեբիոսի թղթի մեկ էջը, վեց խորան, չորս ավետարանիչների դիմանկարները, տիտղոսաթերթերը և պատվանդանով գեղեցիկ խաչը, որը զբաղեցնում է մի ամբողջ էջ և որից հետո սկսվում է Ավետարանի բնագիրը (նկ. 10):

Հ^մ 10359 Ավետարանի հարգարման մեջ գերակշռում են մեզ արդեն ծանոթ սրածայր, մանգաղաձև տերևներից և պարուրազարդերից բաղկացած զարդանախշի տարրերը: Այդ զարդանախշերն այստեղ առկա են ավելի պարզեցված տարբերակով: Ինքնատիպ են նկարված տիտղոսաթերթերի զարդագրերը: Այսպես՝ Մատթեոսի ավետարանի «Գ» սկզբնատառն ավարտվում է բավականին բնական պատկերված մարդկային գլխով (Մատթեոս ավետարանի խորհրդանիշ), իսկ տառի հորիզոնական աջ ելուստը ցուցամատ է (նկ. 24): Մարկոսի ավետարանի «Ս» սկզբնատառի մեջ տեղադրված է արևի մարմնավորումը, որը պատկերված է նույնպես իբրև շատ իրական մարդկային գլուխ, որից հրեղեն ճառագայթներ են տարածվում (նկ. 25): Արևի մարմնավորման պատկերն այստեղ մի քիչ անսովոր է, այն կապված է Մարկոսի ավետարանի սկսվածքի հետ՝ «Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի, Որդւոյ Աստուծոյ...»: Սակայն, ըստ Հովհաննու Հայտնության, Հիսուսի և Հայր Աստծու դեմքերը նույնական են և նման են արևի. «Եւ երեսք նորա իբրև զարեգակն ճառագայթեալ երեւէր» (Յայտ. Ա. 16): Հավանաբար, Աստծու դեմքի այս ընկալումն է դրված Մարկոսի ավետարանի սկզբնատառի մեջ արևի խորհրդանիշը պատկերելու հիմքում:

Ավետարանիչների այժմ առկա դիմանկարները ձեռագրի մեջ ավելացվել են հետագա՝ 1250 թ. նորոգման ժամանակ, ուստի սրանք վերաբերում են Բարձր Հայքի մանրանկարչության պատմության արդեն հաջորդ շրջանին, ուրեմն և կղիտարկվեն իրենց կարգին:

Զեռագրի հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է Կոզմա հռետորի «ընտիր եւ

ստոյգ» օրինակից: Հայտնի գրիչ և մանրանկարիչ Կոզման աշխատել է հիմնականում Խարբերդում, և նա է ընդօրինակել ժ. դ. վերջի և ժ. Գ. դ. սկզբի մի շարք Ավետարաններ, որոնց մեջ նա օգտագործել է արդեն հիշատակված Մուղնու նմուշը: Մատենադարանն ունի 1227 թ. գրված երկու ձառընտիր՝ ձեռ. Հ^{5v} 3779 և Հ^{5v} 6196, որոնք հարդարված են գեղարվեստորեն առանձնապես մեծ արժեք չունեցող փոքրաքանակ լուսանցազարդերով:

Հայերեն ձեռագրերի այլ հավաքածուներում ևս կան Բարձր Հայքի գրչատներում ժ. Գ. դ. սկզբին ստեղծված մի քանի ձեռագրեր: Երուսաղեմի հայոց պատրիարքարանի մատենադարանում պահվում է Ավագ վանքում 1201 թ. ընդօրինակված երկու Ավետարան (Հ^{5v} 3274 և Հ^{5v} 3349), որոնք, ըստ նկարագրության, ունեն միայն զարդանախչված տիտղոսաթերթեր, խորաններ, լուսանցազարդեր և սկզբնատառեր: Ցավոք, վերատպույթյունների բացակայության պատճառով նրանց նկարագրուման բնույթի մասին անհնար է խոսել: Հ. Քյուրտյանը հիշատակել է ժ. Գ. դ. Երզնկա քաղաքի և նրա մերձակայքի գրչատներում ընդօրինակված ևս մի քանի ձեռագիր՝ 1207 թ. Ավետարանը, 1214 թ. Մաշտոցը, 1220 թ. Գանձարանը և 1223 թ. Ղուկասի Ավետարանի Մեկնությունը (88, 88-91): Մխիթարյան միաբանության Վենետիկի Մատենադարանն ունի 1224 թ. մի ձառընտիր (Հ^{5v} 17/200)*, որի գեղարվեստական ձևավորման մասին մենք պատկերացում չունենք:

Մեր դիտարկած ժ. Գ. դ. Բարձր Հայքում ընդօրինակված բոլոր ձեռագրերը ունեն որոշ ընդհանուր գծեր. դրանք մեծ մասամբ խոշոր մատյաններ են, գրված դասական՝ բոլորգիծ երկաթագրով, զարդարված հիմնականում բուսական զարդանախչերով, որոնց մեջ հաճախ ներհյուսվում են կենդանական զարդանախչեր: Այդ ժամանակաշրջանի ձեռագրերի գեղարվեստական ձևավորման նկարագիրն աչքի է ընկնում կոթողայնություններ և հանդիսավորություններ, որ ազդել է նախչերի խոշոր չափերի, նրանց մեկնաբանության ընդհանրակա-

նացված ոճի, ինչպես նաև պատկերման ոճի ինքնատիպության վրա: Գերակշռում է պարզ և մեղմ գույները հակադիր զուգակցումը: Թեև թեմատիկ մանրանկարները հազվադեպ են, սակայն նրանց ընտրությունն ու պատկերագրության առանձնահատկությունները վկայում են թեմատիկ պատկերների արդեն ձևավորված տեղական ավանդույթի մասին, որը հիմնված է վաղքրիստոնեական արվեստի նմուշների վրա և որոշ դեպքերում պահպանել է ավետարանական տեսարանների հնագույն տարբերակների տարրերը:

Առանձին խումբ են կազմում 1200 թ. Ավետարանի տիպի հուշարձանները, որոնք արտացոլում են ժ. Բ. դ. վերջի և ժ. Գ. դ. սկզբի հայկական մանրանկարչության այն ուղղությունը, որ շատ կարևոր դեր է խաղացել կլիկյան մանրանկարչական դպրոցի ձևավորման մեջ: Նման հուշարձանները հիմք են դարձել նոր ոճի զարգացման համար, որն իր մեջ է ներառել ինչպես տեղական բուն ավանդույթը, այնպես էլ բյուզանդական արվեստի որոշակի ազդեցությունը:

* Մխիթարյան Վենետիկի մատենադարանի ձեռագրերը հիշատակված են գույքահամար/ցուցակի համար կարգով – Գ. Տ-Վ.:

Բ. ԺԳ. ԴԱՐԻ ՍԿՋԲԻ ԿԱՐԻՆԻ (ԹԵՈՂՈՍԻՈՒՊՈԼՍԻ) ԶԵՌԱԳՐԵՐԸ

ԺԳ. դ. սկզբին Դարանաղի և Եկեղյաց գավառների գրչության կենտրոնների հետ զուգահեռ բուռն գործունեություն են ծավալել նաև Կարինի (Թեոդոսիոպոլիս) գրչատները: Այստեղ ձևավորվող արվեստը, զարգացման ընդհանուր ուղուց չհեղվելով հանդերձ, գտնվում էր բյուզանդական արվեստի ազդեցության ոլորտում: Դա պայմանավորված էր նրանով, որ Կարին քաղաքը, ժամանակ առ ժամանակ մտնելով կայսրության կազմի մեջ, կարևոր դեր էր խաղում՝ որպես նրա արևելյան սահմանների առաջավոր պահակակետ: Այստեղ էին գտնվում ինչպես բյուզանդական բանակի ստորաբաժանումները, այնպես էլ հույն վերաբնակիչների որոշակի քանակ, որոնք քաղաքում ունեին իրենց թաղերն ու եկեղեցիները:

Դեռևս Ե. դ.՝ Թեոդոսիոս կայսեր օրոք, Կարինի շուրջը նոր պարիսպներ էին կառուցվել, իսկ քաղաքը վերանվանվել, դարձել էր Թեոդոսիոպոլիս և այդ անվան տակ այն հիշատակվում է հայկական ձեռագրերի հիշատակարաններում մինչև ԺԴ. դ.:

Կարինին կարևոր ռազմավարական նշանակություն տվող կայսրությունը շահագրգռված էր տեղական բնակչությանն իր ազդեցության ոլորտը ներառելու մեջ: Կայսրության միջոցներով այստեղ ոչ միայն ամրացվում և վերակառուցվում էին պարիսպները, այլև կառուցվում էին եկեղեցիներ ու վանքեր, որոնք պետք է դառնային քաղկեդոնության պատվար, այլ խոսքով, նույնահավատ լինելն ուղղափառ բյուզանդական եկեղեցու հետ³⁸: Ինչպես գիտենք, հայկական պաշտոնական եկեղեցին Քաղկեդոնի տիեզերական ժողովի (451 թ.) որոշումները չճանաչեց, սակայն կային

նաև այդ որոշումներն ընդունած «քաղկեդոնական» հայեր, որոնք զգալի տոկոս էին կազմում Հայաստանի այն շրջաններում, որոնք ժամանակ առ ժամանակ հայտնվում էին բյուզանդական ազդեցության ոլորտում, միաժամանակ՝ հետագայում հայ քաղկեդոնականներն աստիճանաբար տեղաշարժվում էին դեպի արևմուտք³⁹: Բարձր Հայքի, մասնավորապես Կարինի գավառի հայ ազգաբնակչության մի մասը հարում էր քաղկեդոնականությանը. սա արտացոլվել է այդ գավառում նկարագարված որոշ ձեռագրերում: Բյուզանդական արվեստի ազդեցությունը զգացվում է գործող անձանց պատկերման տարբեր սկզբունքի մեջ: Դրանք ներկայացված են բազմաչերտ տեխնիկայի կիրառմամբ, որը հատկապես զգացվում է դեմքերի և հագուստի ծալքերի պատկերման մեջ, իսկ զարդանախշերում երբեմն հայտնվում են բյուզանդական ձեռագրերին բնորոշ՝ երեքնուկներից կազմված ծաղկային նախշեր:

Կարինում ստեղծված ձեռագրերի մեջ աչքի է ընկնում 1230-32 թթ. Ավետարանը, որն այժմ գտնվում է Մխիթարյան միաբանության Վենետիկի մատենադարանում (ձեռ. Հ^մ 325/129): Զեռագիրն ունի շքեղ տիտղոսաթերթեր, լուսանցազարդեր և զարդանախշված սկզբնատառեր: Դիմանկարներ չեն պահպանվել, այդուհանդերձ, Մատթեոսի ավետարանի տիտղոսաթերթին պատկերված նրա խորհրդանիշ հրեշտակը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել նոր միջոցներով դեմքերը և հագուստի ծալքերը պատկերելու նկարչի հմտության և նրանց ծավալային տեսք տալու ձգտման մասին:

Հիշատակարանը պահպանել է գրչի՝ Խաչատուրի որդի Գրիգորի անունը, որը, ըստ ամենայնի, նաև մանրանկարիչ էր: Բացի ընդհանուր տեղեկություններից ընդարձակ հիշատակարանում շատ արժեքավոր տվյալ-

³⁸ Հայոց եկեղեցին ճանաչել է տիեզերական առաջին երեք ժողովների որոշումները, սակայն սկսած Քաղկեդոնի ժողովից, ուր քրիստոնեական վարդապետության դավանանքը վերախմբագրվեց, բյուզանդական և արևելյան, այդ թվում նաև՝ հայոց եկեղեցիների միջև առաջացավ դավանաբանական խզում (168, 223-236, 152, 87, 102, 87, 103, 51-75, 94, 364):

³⁹ Արևելյան Հայաստանում հայ քաղկեդոնականները հարեցին վրաց եկեղեցուն (175, 325):

ներ կան վարպետի աշխատանքի մասին. «ի վաղուց ժամու ցանկացեալ էի այսմ անգիւտ մարգարտիս եւ ամենալաւ աւրինակիս, որ կոչի Գրիգորի Մուրղանեցոյ՝ ճարտարագիծ գրչի եւ անյաղթ գիտնականի: Եւ ըստ յաջողելոյն Աստուծոյ եղեւ ըստ կամաց իմոց, եւ ես ըստ կարի իմում բազում աշխատութեամբ գծագրեցի իմով ձեռամբ եւ ծաղկազարդեալ յաւրիների ոսկւով պատուականաւ, հրով փորձեալ եւ զտեալ, եւ երփն-երփն երանգաւք եւ պայծառ դեղովք՝ դրոշմեալ ներգործեցի ի սմա ազգի-ազգի քանդակս՝ խորանածեւս եւ երկնանմանս, եւ այլ մանրամասն ինչ ծաղկաւք, ըստ տուեցելոյն ինձ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ» (60, Ա. 572):

Հիշատակարանի այս հատվածից կարելի է քաղել մի քանի ուշագրավ տեղեկություններ. 1) վարպետ Գրիգորի օգտագործած գաղափարի մասին, 2) նրա օգտագործած ներկերի և ոսկու որակի մասին, 3) նկարչի ինքնագնահատման մասին: Հերթով դիտարկենք այս տեղեկությունները.

1) Ավետարանի ընդօրինակության գաղափարը եղել է հայտնի «Գրիգոր Մուրղանեցու գաղափարը», որը պատրաստվել է «հմուտ գրչի և անհաղթ գիտնականի» կողմից:

Մուրղանեցու գաղափարի հիշատակություն կա մի շարք ձեռագրերում, որոնցից մի քանիսն արդեն գրավել են մասնագետների ուշադրությունը: Այսպես՝ Ն. Պողարյանը հաշվել է Գրիգոր Մուրղանեցու գաղափարից կամ նրա ընդօրինակություններից կրկնօրինակված վեց ձեռագիր (31, 70-72), Տ. Իգմայլովան թվարկել է իրենց ծագմամբ այդ հոչակավոր նմուշի հետ կապված յոթ ձեռագիր (127, 76-97), իսկ Ա. Մաթևոսյանը, «Մուրղանեցու գաղափարից» ծագող բոլոր ձեռագրերի ցանկ կազմելու նպատակ չունենալով, տեղեկություններ է բերել տաս ձեռագրի մասին (57, հիշ. Հ^ն 1, 2, 3, 105-118): «Գրիգոր Մուրղանեցու գաղափարի» հետ կապված խնդրին անդրադարձել է նաև Ի. Դրամբյանը, որը Տ. Իգմայլովայի պես համարում է, որ Գրիգոր Մուրղանեցու գաղափարը, ամե-

նայն հավանականությամբ, եղել է ոչ միայն գրչության արվեստի, այլև մանրանկարչության գլուխգործոց, իսկ այդ վարպետի փառքը «ավելի երկար է ապրել, քան հեղինակը և նրա ձեռագրերը» (116):

Մեզ հաջողվել է ճշտել և լրացնելով ստանալ անմիջականորեն կամ միջնորդավորված Մուրղանեցու գաղափարից ծագող քսանչորս ձեռագիր, որոնք իրենց հերթին ձեռք են բերել «Տոյակապ, հոչակավոր» նմուշների համբավ: Ահա նրանց ցանկը.

1. Ժ-ԺԱ. դդ., գրել է Գրիգոր Մուրղանեցին, պահվել է Գագրիկ արքայի գանձարանում, չի պահպանվել (տե՛ս 58ա, 177)*:
2. 1147 թ., Ուռհա (Եդեսիա), գրիչ՝ Կարապետ քահանայ (Մխիթարյան միաբանության Վիեննայի մատենադարան, Հ^ն 659 ձեռագրի պահպանակ. տե՛ս 58ա, 165):
3. 1151 թ., [Եդեսիա], գրիչ՝ Կարապետ Ուռհայեցի, ամենայն հավանականությամբ օրինակվել է Գրիգոր Մուրղանեցու գաղափարից - Մխիթարյան միաբանության Վենետիկի մատենադարանի ձեռ. Հ^ն 888/159:
4. 1157 թ., Գրիգոր Մուրղանեցու գաղափարը երևի Եդեսիայից բերվել է Հռոմիկա և Գրիգորիս Գ. կաթողիկոսի համար նրանից ընդօրինակվել նորը, չի պահպանվել (58ա, 177):
5. 1157 թ., Հռոմիկա, գրիչ՝ Կոստանդին Ուռհայեցի, Գրիգոր Մուրղանեցու գաղափարից արված ընդօրինակություն, չի պահպանվել:
6. 1161 թ., գրիչ՝ Վասիլ Ուռհայեցի, Կոնստանդին Ուռհայեցու ընդօրինակություն պատճենը - Միչիգանի համալսարանի գրադարանի հայ. ձեռ. Հ^ն 141. 58ա, 182:
7. 1166 թ., Հռոմիկա, գրիչ՝ Կոզմա, ընդօրինակվել է Գրիգոր Մուրղանեցու գաղափարից - Մատենադարանի ձեռ. Հ^ն 7747:

* Բոլորն Աւետարաններ են, ուստի ցանկի մէջ Աւետարան բառը կրկնելն անհարկի է - Գ. Տ-Վ.:

8. 1174 թ., Հռոմկլա, գրիչ՝ Գրիգոր, ընդօրինակվել է Գրիգոր Ունհայեցու օրինակից, չի պահպանվել (58ա, 215-7):
9. ԺԲ-ԺԳ. դդ., ընդօրինակվել է Ունհայտում - Վենետիկի Մխիթարյան միաբանությունից մատենադարանի ձեռ. Հ^մ 1012/141:
10. ԺԲ-ԺԳ. դդ., ձեռագիրը ընդօրինակվել է Կարինում - Վենետիկի Մխիթարյան միաբանությունից մատենադարանի ձեռ. Հ^մ 888/159:
11. ԺԲ-ԺԳ. դդ., Խարբերդ, գրիչ՝ Կոզմա, կորած է:
12. 1201 թ., ընդօրինակված է Կոզմայի գրած ձեռագրից - Մատենադարանի ձեռ. Հ^մ 10359:
13. 1205 թ., Խարբերդ, գրիչ՝ Կոզմա - Վենետիկի ձեռ. Հ^մ 938/88:
14. 1219 թ., Խարբերդ, գրիչ՝ Կոզմա - Մատենադարանի ձեռ. Հ^մ 7734:
15. 1219 թ., գրիչ՝ Կոզմա - Հ. Քյուրտյանի հավաքածուի ձեռ. Հ^մ 20:
16. 1230 թ., գրիչ՝ Գրիգոր, «Կարնոյ Աւետարան» - Վենետիկի Մխիթարյան միաբանությունից մատենադարանի ձեռ. Հ^մ 325/129:
17. 1232 թ., գրիչ՝ Գրիգոր, «Թարգմանչաց Աւետարան» - Մատենադարանի ձեռ. Հ^մ 2743:
18. 1238 թ., Անդուլ մենաստան (Կիլիկիա), ընդօրինակվել է Կոնստանդին Ունհայեցու գաղափարից, կորած է:
19. 1259 թ., Հռոմկլա, գրիչ՝ Վարդան Ունհայեցի, ընդօրինակվել է Կոնստանդին Ունհայեցու գաղափարից, կորած է:
20. ԺԳ. դդ., Բաբերդ, գրիչ՝ Յովհան - Մատենադարանի ձեռ. Հ^մ 10283:
21. 1271 թ., Նոր Գետիկ - Մատենադարանի ձեռ. Հ^մ 2814:
22. 1308 թ., Կարին - Երուսաղեմ, Հայոց պատրիարքությունից մատենադարանի ձեռ. Հ^մ 2588:
23. 1310 թ., Բաբերդ - Մատենադարանի ձեռ. Հ^մ 280:
24. 1310 թ., Թեոդոսիուպոլիս՝ Կարին - Մատենադարանի ձեռ. Հ^մ 3985:
25. 1342 թ., Բաբերդ - Մատենադարանի ձեռ. Հ^մ 7642:

Գրիգոր Մուրղանեցու գաղափարից պատճենված ձեռագրերի մեր լրացրած ցանկը հնարավորություն է տալիս մի կողմից ընդլայնելու համեմատությունների շրջանակը, մյուս կողմից՝ օգտագործելու այդ գաղափարին վերաբերող նոր տվյալները:

Նախ այդ տվյալների մասին. Գրիգոր Մուրղանեցու գաղափարից ընդօրինակված ձեռագրերի մեջ կա արդեն հիշատակված 1259 թ. Ավետարանը, որն այժմ կորած է համարվում, սակայն ժամանակին նկարագրվել է, և վերջինիս հիշատակարանում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել այդ գաղափարի մասին⁴⁰: Այդ հիշատակարանից մենք տեղեկանում ենք, որ «ընտիր և հոյակապ գաղափարը», որը հայտնի էր «հմուտ գրիչ» և «անհաղթ գիտնական» Գրիգոր Մուրղանեցու անունով, պահվում էր Գագիկ արքայի գանձարանում, որտեղից Գրիգորիս Գ. կաթողիկոսը այն վերցրել է⁴¹ և տարել Հռոմկլա, ուր այն պահվել է երկար տարիներ և բազմիցս ընդօրինակվել: Գրիգոր Մուրղանեցու գաղափարն ընդօրինակել էր գրչուության ու մանրանկարչության արվեստի վարպետներից մեկը՝ Կոնստանդին Ունհայեցին, որը, այցելելով Հռոմկլայի կաթողիկոսարան, իր հետ պատճենը տարել է Ունհա (Եդեսիա), ուր և այդ օրինակը բազմիցս պատճենվել

⁴⁰ Ձեռագրերն ընդօրինակելիս հաճախ բնագրի հետ միասին պատճենում էին նաև գաղափար օրինակի հիշատակարանը: Երբեմն ձեռագրի նոր ընդօրինակությունը հին և նոր հիշատակարաններով, իր հերթին, դառնում էր հիմք օրինակ, որի հետագա ընդօրինակությունների մեջ պահպանվում էին տվյալ ձեռագրի գաղափարներ հանդիսացած տարբեր ժամանակաշրջանների և տարբեր բնօրինակների հիշատակարանները: Այդպիսին էր մեզ հասած 1259 թ. Ավետարանը, որի մեջ պահպանվել են Մուրղանեցու ԺԱ դ. գաղափարին և նրա հետագա՝ 1157 և 1259 թթ., ընդօրինակությունների վերաբերող տեղեկություններ (57, 296):

⁴¹ Նկատի ունենալով, որ Գրիգոր Մուրղանեցու գաղափարը սկզբում օգտագործվել է Հայաստանի արևմտյան շրջաններում և Կիլիկիայում, կարող ենք ենթադրել, որ այդ անունը կրող երեք թագավորներից հիշատակվում է Գագիկ Կարսեցին (1024-1064 թթ.), որի Գանձարանից և վերցվել է Գրիգոր Մուրղանեցու գաղափարը: Նույն ենթադրությունն է առաջադրել նաև Ի. Դրամբյանը (116):

է: Մուրղանեցու գաղափարի ընդօրինակութիւններէից մեկը հայտնվել է Խարբերդում, ուր նույնպէս ժ. դ. վերջին և ժ. դ. սկզբին բազմիցս ընդօրինակվել է հայտնի գրիչ Կոզմայի ձեռքով: Կիլիկիայից և Եգիպտոսից բացի Մուրղանեցու գաղափարի հետագա ընդօրինակութիւններ մինչև ժ. դ. ներառյալ արվել են նաև Բարձր Հայքի գրչատներում՝ Կարին, Բաբերդ: ժ. դ. վերջին Արևելյան Հայաստանում նույնպէս ի հայտ են գալիս Գրիգոր Մուրղանեցու գաղափարից ընդօրինակված ձեռագրեր: Դրանցից է 1271 թ. Նոր Գետիկում ընդօրինակված Ավետարանը, որի հիշատակարանում գրիչ Մխիթարիչը հայտնում է, որ ընդօրինակել է ձեռագիրը «... ի գովելի աւրինակէ, ուղիղ և լի արուեստի... զոր կոչեն Գրիգորի Մուրղանեցոյ...» (57, 399): Հագիվ թե այդ ժամանակ Գրիգոր Մուրղանեցու գաղափարը Նոր Գետիկում գտնվեր, ավելի հավանական է, որ այնտեղ կար նրա ընդօրինակութիւնը:

Ն. Պողարյանը համարում է, որ Գրիգոր Մուրղանեցու գաղափար անվան տակ ներկայացվող ձեռագիրը ժ. Ա. դ. հայտնի Տրապիզոնի Ավետարանն է՝ Մխիթարյան միաբանութիւնի մատենադարան, Վենետիկ, ձեռ. Հ^մ 1295/108 (31, 70-73), Մ. Ճանաչանի կարծիքով դա կարող է լինել 1064 թ. առաջ Գագիկ Կարսեցի արքայի համար գրված Ավետարանը՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի մատենադարանի ձեռ. Հ^մ 2556 (55, 58): Սակայն սրանք լուրջ ենթադրութիւններ են:

Ինչպէս ցույց է տվել Տ. Իգմայլովայի ուսումնասիրութիւնը (127), Գրիգոր Մուրղանեցու գաղափարից ընդօրինակված ձեռագրերը գեղարվեստական հարգարանքի տեսակետից ունեն որոշակի ընդհանրութիւններ, որոնք առաջին հերթին դրսևորվում են տիտղոսաթերթերի հորինվածքային կառուցվածքում, ուր ավետարանիչների խորհրդանիշները պատկերված են առանձին: Մուրղանեցու գաղափարի խմբի ձեռագրերի մի այլ առանձնահատկութիւնը մեծ, ճոխ զարդանախշված և էջի քառորդ մասը բռնող սկզբնատառի առկայութիւնն է: Այդ ձեռագրերի զարդային հարդարանքը

առանձնանում է նախշերի խոշոր չափերով, որը հորինվածքին որոշակի կոթողայնութիւն է հաղորդում: Պետք է նկատել, որ ծաղկողները միշտ չեն հետևում տիտղոսաթերթերի ձևավորման հաստատված համակարգին, ի հայտ են գալիս նաև որոշ շեղումներ: Մուրղանեցու գաղափարից օրինակված Ավետարանների զգալի մասը սկզբում չունեն թեմատիկ մանրանկարներ և ավետարանիչների դիմանկարներ, որոնք շատ հաճախ հետագայում (ավելի հաճախ՝ ժ. դ.) էին ավելացվում, բնագիրը ժ. Ա. ժ. դ. գրվում էր խոշոր երկաթագրով:

Մեզ հետաքրքրող ձեռագրերի տիտղոսաթերթերի հորինվածքների նման օրինակներ հանդիպում են նաև Արևմտյան Հայաստանի հուշարձաններում, այդ թվում նաև Բարձր Հայքի ձեռագրերում, ժ. Բ-Ժ. Գ. դ. դ. սահմանագծին: Դրանց ձևավորման բնույթն այնքան տիպական է, որ առանձին դեպքերում հնարավորութիւն է տալիս տեղորոշել և թվագրել որոշ ձեռագրեր: Նմանատիպ հորինվածք տեսնում ենք Կարինի Ավետարանի պահպանված երկու տիտղոսաթերթերում: Ինչ վերաբերում է Մուրղանեցու գաղափարից ընդօրինակված ձեռագրերի ոճին, ապա այն բավականաչափ տարբեր է: Միջնադարում գաղափարների օգտագործումը պատճենների ստեղծում չէր ենթադրում. գաղափարը հաճախ որպէս չափանիշ էր ծառայում: Այն ընդօրինակելիս նկարիչը հիմնականում օգտագործում էր նրա գեղարվեստական ձևավորման ընդհանուր կառուցվածքը, իսկ ինչ վերաբերում է կատարման ոճին, ապա այն արտացոլում էր ինչպէս այս կամ այն ծաղկողի աշխատած գրատան ավանդույթները, այնպէս էլ վերջինիս ստեղծագործական հնարավորութիւններն ու ունակութիւնները:

2. Վերը բերված հիշատակարանում առկա երկրորդ տվյալը վերաբերում է վարպետ Գրիգորի օգտագործած ներկերի և ոսկու որակին: Ներկերի մասին նա հետևյալն է ասում. գիրքը «երփն երփն երանգաւք եւ պայծառ դեղովք», իսկ ոսկու մասին. «ծաղկազարդեալ յաւրինեցի ոսկուով պատուականաւ, հրով փորձեալ եւ զտեալ»: Գեղանկարչութիւնի մեջ ոսկին օգտագործելիս այն

Հալուժում էին, ինչի մասին վկայում են «Հրով փորձեալ եւ գտեալ» բառերը: Այդ եղանակով ստանում էին ոսկու շատ բարակ թիթեղներ (թիթեղոսկու նման), որը մագաղաթի վրա փակցնում էին ծիրանենու խեժով և սխտորի հյուսված: Հաճախ ոսկու տակ դնում էին հատուկ մածուկ կամ մածուկանման օխրայագուլյն ներկի շերտ: Այդպիսով ստանում էին անհրաժեշտ նկարի ռելիեֆը: Այդ հիմքին փակցված ոսկու վրա, հատուկ բարակ ձողիկներով սեղմելով, տարբեր նախշեր էին անում, և այդպիսով ստացվում էին «բազմազան դրվագակերտ զարդեր»: Նման աշխատանքը իր տեխնիկայով և թողած տպավորությամբ մերձենում էր ոսկերչի աշխատանքին:

3. Գրիգոր ծաղկողի հիշատակարանից ստացված երրորդ տեղեկությունը վերաբերում է իր ինքնագնահատականին: Առանց կեղծ համեստություն նա գրում է, որ ձեռագիրը զարդարել է «խորանածեւս եւ երկնանման» նախշերով, որոնք նա արել է իր տաղանդի շնորհիվ, որ էր «ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ»:

Վենետիկում հրատարակված այբոմում Կարինի ավետարանի մանրանկարների հոյակապ վերարտադրությունը հստակ պատկերացում է տալիս Գրիգոր գրչի և մանրանկարչի վարպետության մասին, ոչ շատ հարուստ ներկայակի միջոցով վառ և բազմերանգ ստեղծագործություններ ստեղծելու նրա ունակության մասին: Նկարչի տրամադրություն տակ եղել են չորս հիմնական գույները՝ կապույտը, կանաչը, կարմիրը և դեղինը, որոնք նա սպիտակ ներկի միջոցով տարրալուծում էր բաղադրիչ երանգների՝ մոզգից մինչև բաց: Նրա գույների շարքում գերակշռում են կապույտի երանգները, որոնք շատ տպավորիչ են ոսկու հետ համադրվելիս: Նկարիչը հաճախ է օգտագործում ծիածանաձև զարդանախշ, որը միջնորմային ջնարակի տեխնիկայի տպավորություն է թողնում: Խաչատուրի որդի Գրիգոր ծաղկողի արվեստը աչքի է ընկնում նուրբ ճաշակով, չափի զգացումով և բարձր մասնագիտական վարպետությամբ: Այսօր ձեռագրում պահպանվել են միայն երկու տիտղոսաթերթ և բազմաթիվ

լուսանցազարդեր (նկ. 26, 27, 28, 29): Ուղղանկյուն գլխազարդերը ծածկված են նրբագեղ նախշերով, որոնցում գերակշռում են բուսական մոտիվները, ինչպես ավանդական տեղական, այնպես էլ բյուզանդական զարդանախշերի տարրերով բնորոշ ծաղիկներ շրջանների մեջ: Դրանցով զարդարված են նաև մի շարք այսպես կոչված «բյուզանդականացող» ձեռագրեր՝ Տրապիզոնի ավետարանը (Վենետիկի ձեռ. Հ^մ 1295/108), 1069 թ. Ավետարանը (Մատենադարանի ձեռ. Հ^մ 10434) և այլն:

Պահպանված տիտղոսաթերթերն ունեն ավետարանիչների խորհրդանիշները: Մատթեոսի խորհրդանիշը պատկերված է որպես հրեշտակի կիսանդրի՝ լուսապսակով, ձեռքին արքայազավազան (գայիսոն) և գունդ (իշխանություն խորհրդանիշներ, որոնցով բյուզանդական արվեստում ընդունված էր պատկերել հրեշտակներին, բյուզանդականի հետ աղերսների մասին է վկայում նաև հրեշտակի հանդերձանքը): Ղուկաս ավետարանի խորհրդանիշ ցուլը նկարված է առանց լուսապսակի, որը նրան մոտեցնում է ավետարանիչների խորհրդանիշների «երկրային» կարգին: Երկու տիտղոսաթերթերն էլ աչքի են ընկնում պատրաստման բացառիկ գեղեցկությամբ: Նրանց գեղարվեստական հարդարանքի բոլոր բաղադրատարրերի խոշոր չափերը տիտղոսաթերթերին հաղորդում են որոշակի կոթողայնություն, որը յուրօրինակ ձևով գուճարվում է նախշերի մանրամասն և հստակ գծագրման հետ: Մեծ հետաքրքրություն ունեն ձեռագրի բազմազան գծանկար և հորինվածք ունեցող լուսանցազարդերը: Մ. Ճանաչանը հաշվել է մոտ երկու հարյուր լուսանցազարդ: նրանց նշանակալի մասը ծաղկազարդ շրջանակներ են, քառատերևներ և բուսական նախշերի զանազան տարբերակներ, որոնցից մի քանիսն իրենց տեսակով մերձենում են Մշո Ճատրնտրի զարդանախշերին. մեծ մասի մեջ գրված են տառեր՝ իրենց թվային արժեքով նշելով համապատասխան գլուխը կամ տունը: Նրանցից մի քանիսում գրված են հիշատակագրություններ. «Ողորմեա՛ ինձ, Յիսո՛ւս Քրիստոս», «Մեծ է Տէ՛ր», «Տէ՛ր, ողորմի Գրիգորի» և

այլն: Հետաքրքրական է, որ երբեմն գրա-
ռուսներն արված են հունարեն և արաբե-
րեն լեզուներով, որը վառ կերպով վկայում
է քաղաքում հույն և արաբ տիրակալների
պարբերական քաղաքական գերիշխանու-
թյունը: Տարբեր լեզուներով արված արձա-
նագրություններ կան նաև Կարինի պահ-
պանված բազմաթիվ ճարտարապետական
(հիմնականում՝ աշխարհիկ բնույթի) հու-
շարձանների վրա:

Կարինի ավետարանի հետ է կապվում
հայկական մանրանկարչության ևս մեկ
գլուխգործոց՝ Թարգմանչաց ավետարանը
(Մատ. ձեռ. Հ^մ 2743), որը գրվել է 1232 թ.
և իր անունն ստացել է իր տեղական պահ-
պանման վայրի՝ Գանձակի Թարգմանչաց
վանքի անունից: Այդ երկու ձեռագրերի
ձևավորման և պատկերագրության միջև
գոյություն ունեցող որոշակի կապի վրա ա-
ռաջին անգամ ուշադրություն է դարձրել
Ս. Տեր-Ներսեսյանը (240, 41-42): Այդ ձե-
ռագրի մանրանկարները բազմիցս հրատա-
րակվել են հայկական մանրանկարչու-
թյանը նվիրված գրեթե բոլոր տեսական աշխա-
տություններում և ալբոմներում: Գարեգին
Հովսեփյանը 1911 թ. հրատարակված իր
հոդվածում տվել է հուշարձանի ընդհանուր
նկարագրությունն ու համառոտ բնորոշել է
նրա գեղարվեստական հարդարանքը: Նա
գրել է. «Թարգմանչաց ավետարանը իր
պատկերագրությանը և լուսանցազարդե-
րով անսահմանափակ նյութ է տալիս
արևելյան մոտիվներն ուսումնասիրելու
համար» (45, 103): 1929 թ. լույս է տեսել
արվեստաբան Ե. Նիկողոսյանի հոդվածը,
ուր հեղինակը բարձր է գնահատել ձեռագ-
րի գեղարվեստական հարդարանքը և են-
թադրել է, որ նրա վրա աշխատել են երկու
նկարիչ, որոնցից մեկն արել է զարդանախ-
շային հարդարանքը, իսկ մյուսը՝ թեմատիկ
մանրանկարները (179, 347-356):

Ա. Սվիրինը, Լ. Դուռնովոն և Ս. Տեր-
Ներսեսյանը (197, 121, 249-251, 240, 216)
նույնպես բարձր են գնահատել ձեռագրի
գեղարվեստական ձևավորումը, սակայն
նրանք թեմատիկ մանրանկարները զար-
դերից չեն առանձնացրել և կասկած չեն
հայտնել նրանց՝ մեկ հեղինակի պատկանե-
լու վերաբերյալ: Այս բոլոր հեղինակներն

ուշադրություն են դարձել հիմնականում
թեմատիկ մանրանկարներին՝ արձանագրե-
լով նկարչի խոր անհատականությունը և
ձեռագրի ծագումը կապելով Արցախի հետ,
ուր այն երկար տարիներ եղել է Դոփյան
իշխանական տան սեփականությունը:

Թարգմանչաց ավետարանին հոդված է
նվիրել նաև Լ. Զաքարյանը (22, 167-170)
ուշադրություն դարձնելով բնագրի հետ
միաժամանակ կատարված հավելմանը, ուր
հիշատակվում է «պատուարժան քահանայ
և անուանի պարոն Յովհաննէսը»: Նա փոր-
ձել է պարզել «անուանի պարոն Յովհան-
նէսի» անձը և ենթադրություն է արել նրա՝
Կարինում շատ հայտնի Ումեկյանների ցե-
ղին պատկանելու մասին: Այդ ցեղի որոշ
ներկայացուցիչներ մոնղոլների արշավանք-
ների ժամանակ տեղափոխվել էին Արևել-
յան Հայաստան: Դրանից ելնելով՝ Լ. Զա-
քարյանը եզրակացնում է, որ Հովհաննես
քահանան կարող էր իր հետ տանել իր
պատվիրած ձեռագիրը:

Թարգմանչաց ավետարանը կարող էր
Արևելյան Հայաստան ընկնել նաև այլ ճա-
նապարհով. մոնղոլներն իրենց տիրապե-
տության ժամանակ հայ իշխաններին ստի-
պում էին սեփական զորքով մասնակցել ի-
րենց արշավանքներին: Մոնղոլական բա-
նակում ծառայող հայ իշխանները հարկ ե-
ղած դեպքում ետ էին գնում եկեղեցական
կահ-կարասին, ձեռագրերը, երբեմն էլ՝ գրի
ընկած իրենց հայրենակիցներին: Այդ փաս-
տի վրա ուշադրություն է դարձրել նաև Լ.
Չուգասոյանը (68, 16):

Թարգմանչաց ավետարանի մանրանկար-
ների ուշադիր ուսումնասիրությունը թույլ
է տալիս նկատել, որ խորանները և թեմա-
տիկ բոլոր մանրանկարները նկարված են
առանձին թերթերի վրա և փակցված են շա-
րագրանքի համապատասխան տեղերում:
Տարբերվում է նաև փակցված թերթերի մա-
զաղաթը, ինչը նկատել է նաև Ա. Մաթևոս-
յանը: Ձեռագրում պահպանվել է նաև Ար-
ցախի իշխան Գրիգոր Դոփյանի ավելի ուշ
շրջանի հիշատակարանը, որը 1312 թ., իր
մահացած կնոջ՝ Ասպեի հիշատակը հավեր-
ժացնելու համար, հանձնել է Խաղարի վան-
քին: Ա. Մաթևոսյանը համարում է, որ ա-

վետարանիչների դիմանկարներն ու տերու-
նական մանրանկարները հենց այդ ժամա-
նակ էլ հավելվել են Ավետարանին: Դոփ-
յան իշխանն իր հիշատակարանում հայտ-
նում է, որ ինքը «...չքեղ զարդարել է սուրբ
Ավետարանը ոսկյա զարդարուն կազմով»
(58): Ճիշտ է, որ այդ հատվածում ուղղա-
կիրեն չի ասվում ձեռագիրը մանրանկար-
ներով զարդարելու մասին, սակայն կարելի
է ենթադրել, որ հենց այդ ժամանակ էլ
դրանք արվել են, քանի որ իրենց նկարելու
ոճով նրանք ավելի համահունչ են ԺԴ. դ.
սկզբի արվեստին:

Թարգմանչաց ավետարանի զարդահար-
դարման կառուցվածքի նմանությունը Կա-
րինի ավետարանի հետ (երկուսն էլ ստեղծ-
վել են մոտավորապես նույն ժամանակաշր-
ջանում, առաջինը՝ 1232 թ., երկրորդը՝ 1230
թ.), ինչպես նաև նույն գաղափարի օգտա-
գործումը թույլ է տալիս ենթադրելու, որ
առաջինը նույնպես ստեղծվել է Կարինում:
Այս կարծիքին են Լ. Ջաքարյանը և Լ. Չու-
գասյանը: Սակայն մանրանկարները
միևնույն ծաղկող Գրիգորին վերագրելու
համար (ինչպես ենթադրել են Տ. Իգմայլո-
վան և Լ. Ջաքարյանը) հիմքեր չկան:
Նույն գաղափարին հետևելով հանդերձ՝
մանրանկարների ոճը բավականաչափ տար-
բեր է, ինչի մասին գրել է Ս. Տեր-Ներսես-
յանը (240): Ելնելով վերը շարադրվածից՝
անհավանական է Ա. Մաթևոսյանի ենթադ-
րությունը Թարգմանչաց ավետարանի՝ Ա-
նիում գրված լինելու մասին: Ինչ վերաբե-
րում է թեմատիկ մանրանկարներին, ապա
սրանք նկարել է մի վառ անհատականու-
թյուն, հավանաբար Արցախում, սակայն այդ
գավառի արվեստի ուսումնասիրությունը
չի մտնում մեր հետազոտության շրջանակ-
ների մեջ:

Երկու ձեռագրերում մենք տեսնում ենք
համանման զարդաչին հարդարանք և տիտ-
ղոսաթերթերի համանման կառուցվածք,
Բարձր Հայքի հուշարձանների համար հատ-
կանչական հորինվածքի բաղադրատարրերի
խոշորացումով, որը նրանց որոշակի կո-
թողայնություն է հաղորդում (նկ. 30, 31):
Մեծ տեղ է հատկացվում սկզբնատառին, ու-

րը զբաղեցնում է էջի քառորդ մասը.
սկզբնատառի կողքին պատկերված է ավե-
տարանչի խորհրդանիշը, որը նույնպես խո-
շոր է, և բնորոշ ԺԴ-ԺԳ. դդ. սկզբի Բարձր
Հայքի պատկերագարը ձեռագրերին:

Ամփոփելով ԺԳ. դ. սկզբի Բարձր Հայքի
մանրանկարչության մասին մեր ակնարկը՝
նշենք, որ այդ ժամանակաշրջանի հուշար-
ձաններում գերիշխող դեր ունեն զարդա-
նախշը: Օգտագործելով հնագույն արվեստի
ավանդույթները, դրանք նոր ձևերով և նոր
իմաստով հարստացնելով՝ տեղական վար-
պետները հիմք դրեցին ձեռագրերի զար-
դաչին ձևավորման հիմնական տեսակների
զարգացման համար: ԺԴ-ԺԳ. դդ. սահմա-
նագծին վերջնականապես ձևավորվեցին Ա-
վետարանների, ինչպես նաև քրիստոնեա-
կան այլ գրքերի զարդանախշային հար-
դարման հիմնական բաղադրատարրերը:
Ջարդանախշային արվեստի ամենավաղ
նմուշները մենք տեսնում ենք հենց Բարձր
Հայքի հուշարձաններում, որոնք հիմք են
եղել այդ արվեստի զարգացման համար
ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կի-
լիկիայում: Ջարդարվեստի հատկապես
վառ օրինակներ են այնպիսի ձեռագրերը,
ինչպիսիք են 1200-1202 թթ. Մշո ճատըն-
տիրը և մեր գրչության արվեստի նրան հա-
րող նմուշներ, ինչպես նաև ԺԳ. դ. Կարինի
և Բաբերդի ձեռագրերը:

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ԺԳ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԺԳ. դ. քառասնական թվականներից սկսած մոնղոլների արշավանքների հետևանքով Հայաստանի վիճակը կտրուկ վատթարացավ: 1243 թ. մոնղոլները գրավում և թալանում են Երզնկա քաղաքը: Քաղաքի գրավումից հետո նրա կառավարիչն է դառնում այսպես կոչված «շահնան» (վերակացու): Հինգ տարի անց քաղաքը հայտնվում է Իկոնիայի սուլթանի տիրապետության տակ: 1256 թ. մոնղոլները կրկին գրավում են Երզնկան, սակայն այս անգամ այն չեն կողոպտում: Ավելին՝ կողոպուտից վերջնականապես քայքայված քաղաքային տնտեսությունը վերականգնելու համար Երզնկայի և, ընդհանրապես, ամբողջ Եկեղյաց գավառի բնակչությանը որոշ արտոնություններ են տալիս, իսկ քաղաքն ինքնակառավարման իրավունք է ստանում: Իշխանությունը հանձնվում է տեղի հայ իշխաններին, որոնք պարտավոր էին հարկահանումը զբաղվել և համարել մոնղոլական բանակը: Երզնկայի, նաև ամբողջ Եկեղյաց գավառի առաջին հայ կառավարիչները դարձան Սարգիս արքեպիսկոպոսը և նրա որդի Հովհաննես իշխանը: Այդ կապակցությամբ է. Բաղդասարյանը գրում է. «ԺԳ. դ. կեսերից սկսած և մինչև ԺԵ. դ. սկիզբը, այսինքն՝ մինչ Երզնկայի նվաճումը օսմանցիների կողմից, քաղաքը, ինչպես նաև Եկեղյաց և Դարանաղի գավառները, կարճատև ընդմիջումներով, կառավարվում էին հայ իշխանների կողմից: Այդ հանգամանքը նպաստել է այդ գավառներում քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքին» (14, 44): Սարգիս արքեպիսկոպոսը իրականացնում էր գավառի ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ կառավարումը: Նա մասնակցում էր նաև Հայաստանի նոր՝ մոնղոլ տիրակալների և բյուզանդական արքունիքի միջև ընթացող դիվանագիտական բարդ հարաբերություններին: Հայտնի է, որ Սարգիս արքեպիսկո-

պոսը գլխավորել է կարևոր բանակցությունների համար Կոստանդնուպոլիս մեկնած պատվիրակությունը, որը պետք է պայմանավորվեր մոնղոլ խանի և Միքայել Պալեոլոգի դստեր ամուսնության մասին (88, 128)⁴²:

Հասարակական ու եկեղեցական խոշոր գործիչ Սարգիս արքեպիսկոպոսը նաև արվեստների հովանավոր էր: 1269 թ. նրա ջանքերով և նրա որդի՝ հայտնի հասարակական գործիչ, գրասեր և մեկենաս պարոն Հովհաննեսի գործուն մասնակցությամբ Երզնկա քաղաքում կառուցվել է Սուրբ Փրկիչ եկեղեցին (88, 118): Նրանք են Երզնկայի հայտնի Աստվածաշնչի պատվիրատուները, որը պատրաստ էր նույն 1269 թ. (այժմ՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության մատենադարանի ձեռ. Հ^{5v} 1925): Նրանց անունները կարելի է տեսնել Ներսես Մեծի մասունքների համար պատրաստված մասնատուփի վրա⁴³, որը պահվում էր Երզնկայի մոտ գտնվող սուրբ Սարգիս եկեղեցում և ԺԹ. դ. վերջին դեռևս գոյություն ուներ (այն տեսել և նկարագրել է Գ. Սրվանձտյանցը): Այդ գործիչների անունների հետ է կապվում նաև եկեղեցական այլ իրերի ստեղծումը:

1276 թ. Սարգիս արքեպիսկոպոսը և նրա որդի Հովհաննես իշխանը երեսունութ հայավատատերերի հետ զոհ են գնացել թուր-

⁴² Սարգիս արքեպիսկոպոսի գլխավորած պատվիրակությունն իր առաքելությունը կատարեց ու վերադարձավ Մարիամ արքայադստեր հետ միասին, սակայն քանի որ այդ ժամանակ Հուլավու խանը մահացել էր, ապա, որպես կին, նա բաժին հասավ Հուլավուի որդի Աբաղա խանին (88, 128):

⁴³ Մասնատուփի վրա կար հետևյալ արձանագրությունը. «Զարդարեցաւ շնորհաբաշխ բազուկ աջոյ սրբոյն Ներսիսի հրամանաւ արքեպիսկոպոսին տեսաւ Սարգսի եւ պր. Յովհաննիսի՝ մնալ միշտ ի փառագարդ տաճարին Աստուծոյ Ս. Փրկչին, ի վայելումն աստուածապարգեւ գաւակացն իւրեանց Ներսիսի եւ Գրիգորիսի: Կատարեցաւ ի թուականին ԶԻԲ. (1273) (74, 294):

քերին Երզնկա քաղաքում (Թվականը ճշգրտել է Հ. Քյուրտյանը. 88, 133-4): Սակայն հայ կառավարիչների իշխանությունն այստեղ չի ընդհատվել: Հ. Քյուրտյանի հետազոտությունները ցույց են տվել, որ 1276 թ. տեղի է ունեցել ոչ թե քաղաքի նվաճում թուրքերի կողմից, այլ թշնամական հարձակում, որից հետո մարդասպանները հեռացել են: Հովհաննես իշխանի որդին և Սարգսի թոռը՝ Ներսեսը, շուտով արքեպիսկոպոս է օծվում և իր ձեռքն է վերցնում ոչ միայն թեմի, այլև Եկեղյաց ամբողջ գավառի կառավարումը: Ներսեսը շարունակում է նաև իր նախորդների շինարարական գործունեությունը, իսկ եկեղեցիների համար պատվիրում է թանկարժեք կահ-կարասի: Նրա պատվիրած մասնատուփերից մեկի վրա պահպանվել է արձանագրություն, ուր հիշատակվում է վարպետ Խոսրովի անունը (74, 294, 88, 146-147):

Գավառի հաջորդ հոգևոր առաջնորդը նույն իշխանական տան ներկայացուցիչ Սարգիսն էր՝ Ներսես արքեպիսկոպոսի որդին: Այսպիսով, մենք այստեղ գործ ունենք հոգևոր առաջնորդների մի ամբողջ տոհմի հետ, որոնց իշխանությունը, ըստ է. Բաղդասարյանի ուսումնասիրության, տևել է մինչև ԺԵ. դ. սկիզբը (16, 36-44): Դա չէր կարող դրական դեր չխաղալ գավառի մշակութային զարգացման գործում, ուր նույնիսկ մոնղոլների ժամանակ շարունակում էին գործել գրչություն և մանրանկարչության օջախներ:

Մինչև ԺԳ. դ. վերջը Բարձր Հայքի գրչության արվեստի զարգացման մեջ գերակշիռ նշանակություն ունեին Եկեղյաց և Դարանաղյաց գավառների, հատկապես

նրանց վարչական կենտրոն Երզնկա քաղաքի դպրոցները: Այդտեղից դուրս են եկել բազմաթիվ նշանավոր գիտնականներ, բանաստեղծներ, որոնցից շատերը հայտնի են Երզնկացի մականվամբ. Հովհաննէս (Պուլգ) Երզնկացի, Հովհաննես Ծործորեցի-Երզնկացի, Կոնստանդին, Կիրակոս, Մովսես, Մխիթար, Գրիգորիս Երզնկացիներ և այլն: Նրանցից ոմանք իրենց գիտելիքները կատարելագործելու համար մեկնում էին Կիլիկիա, ինչպես նաև Գլաձոր, ուր այդ ժամանակ գտնվում էին գիտական վանականություն կարևորագույն կենտրոնները: Երզնկայի շրջակայքում նույնպես կային խոշոր վանքեր, ուր գործում էին բարձրագույն դպրոցներ և ուր տարբեր գավառներից գալիս էին գիտություն և արվեստի գործիչներ: Այս ժամանակաշրջանում այդ գիտական կենտրոնների միջև կապերը բավական աշխույժ էին, ինչը իր ազդեցությունն է թողել նաև մանրանկարչության զարգացման վրա: Սակայն եթե սկզբնական ժԱ-ԺԲ. դարերի շրջանում Բարձր Հայքի գրչության կենտրոնները զգալի ազդեցություն ունեին գրչության այլ օջախների վրա, ապա ԺԲ. դ. վերջից և ԺԳ. դ. սկզբից պատկերը փոխվում է: Այդ ժամանակ կիլիկյան դպրոցը, հասնելով ծաղկման գագաթնակետին, սկսել է կատարել այն կենտրոնի դերը, որի մակարդակին էին փորձում հասնել գրեթե բոլորը: Գրքի ձևավորման կիլիկյան նմուշներն սկսեցին փառք ձեռք բերել որպես լավագույն նմուշներ, և զարմանալի չէ, որ ԺԳ. դ. կեսերից կիլիկյան արվեստը սկսեց մեծ ազդեցություն գործել Բարձր Հայքի մանրանկարչության վրա:

1269 թ. ԵՐԶՆԿԱՅԻ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶԸ

Բարձր Հայքի գրչատներից մեզ հասած ԺԳ. դ. երկրորդ կեսի ոչ մեծ քանակությունը պատկերազարդ ձեռագրերի մեջ հատուկ տեղ ունի 1269 թ. Աստվածաշունչը, որը ստեղծվել է Երզնկայում⁴⁴: Բարձրար-

վեստ մանրանկարներով ճոխ զարդարված, մանր նրբագեղ բոլորգրով գրված այդ Աստվածաշունչը հայ միջնադարյան գրչության արվեստի և մանրանկարչության բացառիկ հուշարձան է: Պահպանված հիշատակարանների շնորհիվ հայտնի են այն մարդկանց անունները, որոնք մասնակցել են նրա ստեղծմանը: 580ա էջում

⁴⁴ Ձեռագրի մանրանկարների մեծ մասը հրատարակված է հիմնականում սև-սպիտակ տպագրությունում (66, 77, 260):

կարգում ենք. «Արդ, գրեցաւ պրակս աստուածային... հրամանաւ եւ արդեամբք տեառն Սարգսի սրբասէր եւ արիական եպիսկոպոսի եւ նորին հարազատ որդւոյ՝ աստուածասէր եւ քրիստոսապահ իշխանին պարոն Յոհաննէսի... ի պէտս սրբոյ եկեղեցւոյ, եւ ի խրատ աստուածատուր եւ դեռաբոյս զաւակաց իւրոց՝ Ներսէսի եւ Գրիգորէսի» (61, 412): Ձեռագիրը գրել են երեք քահանա-գրիչներ՝ Մխիթարը, Յակոբոսը և Մովսեսը: Կազմարարն էր Առաքելը, իսկ մագաղաթ պատրաստող վարպետը՝ Մխիթրուկը: Գ. Հովսեփյանը համարում էր, որ ձեռագրի երեք գրիչները միեւնոյն ժամանակ մանրանկարիչներ էին. «...երեքն էլ աչքի ընկնող վարպետներ էին: Սակայն Յակոբոսը համեմատաբար պակաս հմուտ էր գրչութեան արվեստում և մանրանկարչութեան մեջ, քան Մխիթարը, իսկ Մովսեսը գերազանցել է երկուսին. նա գլխավոր գրիչն էր ու մանրանկարիչը» (48, 619-625): Ս. Տեր-Ներսեսյանը նույնպես համարում է, որ ձեռագրի նկարազարդման վրա մեկ վարպետ չէ, որ աշխատել է, սակայն քանի որ հիշատակարաններում երեքն էլ իրենց գրիչ են անվանում, ապա նա ավելի զգուշ է արտահայտվում. «Հայտնի չէ, թե ովքեր էին նկարիչները: Հնարավոր է, որ նրանցից մեկը Մխիթարն էր, քանի որ Աստվածաշնչի պատկերների ոճը շատ նման է Մատենադարանում պահվող Հ^ր1746 ժողովածուի սկզբում գտնվող Դավիթ Անհաղթի պատկերի ոճին: Ձեռագիրը գրվել է նույն Հովհաննէս իշխանի համար, նույն Մխիթար դպիրի կողմից» (77, 29):

Երզնկայի Աստվածաշունչը պատկանում է հայկական ամենահին պատկերազարդ աստվածաշնչերի շարքին: Հնագույն պահպանված ձեռագիր աստվածաշնչերը մեզ են հասել ԺԲ. դ., սակայն նրանք նկարազարդումներ չունեն: ԺԳ. դ. Կիլիկիայում հայտնվում են նկարազարդ աստվածաշնչեր, ուր պատկերվում էին միայն սուրբ-գրային գրքերի հեղինակները՝ յուրաքանչյուրն իր գրքից առաջ, կային նաև զարդային հարդարանքի տարրեր (գլխազարդեր, լուսանցազարդեր, սկզբնատառեր): Հին Կտակարանի առանձին թեմաներ սկսե-

ցին հայտնվել սկզբում Ավետարաններում, ընդ որում՝ այնպիսիք, ուր ակնարկ կար Քրիստոսի քավչարար զոհաբերութեան մասին՝ «Աբրահամի զոհաբերութեանը», «Մեղսագործութեանը», կամ էլ կապված էին նրա հայտնութեան հետ՝ «Հյուրընկալութեան Մամբրեի կաղնու տակ» (32, 247-263): Այդ տեսանկյունից Երզնկայի Աստվածաշունչը հայկական մանրանկարչութեան մեզ հայտնի առաջին հուշարձանն է, ուր մենք տեսնում ենք մի շարք աստվածաշնչային նկարազարդումներ: Այստեղ կան նաև Սուրբ Գրոց գրքերի հեղինակների պատկերները: Սրանց մեծամասնությունը պատկերված է իրենց գրքերի շարադրանքի առաջին տառը գրելիս: Հեղինակներին պատկերելու հայկական մանրանկարչութեան համար անսովոր այդ ձևը լայնորեն առկա է ԺԲ. դ. լատինական ձեռագրերում (248, pl. 20, 23, 24): Սակայն եթե Երզնկայի Աստվածաշնչի հեղինակային «դիմանկարների» պատկերազարդական նախատիպեր կարելի է գտնել, ապա նույնը չի կարելի ասել նրանց գեղարվեստական մարմնավորման եղանակի մասին: Մարգարեների և առաքյալների խոշոր, լավ գծազրված ֆիգուրներն աչքի են ընկնում գրեթե անտիկ դասական համամասնություններով: Նրանք հաճախ գրավում են տիտղոսաթերթի մեկ երրորդը, երբեմն էլ՝ կեսը և տեղադրված են գլխազարդի տակ (նկ. 32, 33, 34, 35): Նրանց կեցվածքը հանդիսավոր է. հաճախ պատկերված են դիմահայաց, ավելի հազվադեպ՝ երեք քառորդ շրջված: Նրանց հանդերձանքի խոշոր, բարդ գծանկար ունեցող և թեթև իջնող ծալքերն ընդգծված են հստակ, պլաստիկ ուրվագծերով, իսկ ստվերարկված և լուսավորված հարթությունների գունային հակադրությունը պատկերներին որոշակի քանդակուն տեսք է հաղորդում: Զգացվում է նկարչի սերը դեպի ծալազարդերը, որոնք պատկերներին հաղորդում են որոշակի դեկորատիվ էֆեկտ: Երբեմն այդ ծալքերը միտումնավոր կերպով կիտված են թվում, սակայն դրանց ուրվագծերը, ինչքան էլ պայմանական լինեն, լի են ձևերի իրական ընկալմամբ, և սա ԺԳ. դ. վերջին բնորոշ է դառնում Արևմտյան Հայաստանի

և Կիլիկիայի արվեստին: 1269 թ. Աստվածաշնչի մանրանկարներին հատուկ հանդիսավոր, բարձր ոճը համահունչ է ժԲ-ԺԳ. դդ. բյուզանդական հուշարձաններին, ինչպես նաև նրանց ավելի ուշ շրջանի սլավոնական կրկնություններին (149, նկ. 300, 346, 350, 368, 405, 409, 415): Այդուհանդերձ, մեզ հետաքրքրող Աստվածաշունչը պատկերագրությամբ հայ մանրանկարիչների աշխատանքի ոճը հատկանշվում է մեծ ինքնատիպությամբ, որը զգացվում է հատկապես մանրանկարների գունային լուծումներում, ինչպես նաև զարդանախշային հարդարանքին հատկացվող տեղին (մի առանձնահատուկություն, որը հատկանշական է հայկական մանրանկարչությանն ընդհանրապես):

Որոշ դեպքերում ինքնատիպ է թեմաների ընտրությունն ու նրանց գեղարվեստական մարմնավորման եղանակը: Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ այդ ձևագրի մանրանկարների մեծամասնությունը «ինքնատիպ ստեղծագործություններ են, իսկ թեմաների ընտրությունը ցույց է տալիս, որ նկարիչը կառչած էր գաղափարներից» (նկ. 36-40. 77, 39):

Ձեռագրի զարդանախշային հարդարանքն առանձնանում է տարբերակների բազմազանությամբ. ինչպես արդեն ասել ենք, գերակշռում են բուսական նախշերը, որոնք կազմված են սրածայր տերևներից և պարուրազարդերից: Ս. Տեր-Ներսեսյանն այստեղ կապ է տեսնում մահմեդական զարդանախշի հետ: Սակայն, քանի որ վերջինս ձևավորվել է նվաճված ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայերի ավելի վաղ մշակութային հիման վրա, ապա այս տարածաշրջանի դեպքում ավելի ճիշտ կլիներ կապեր տեսնել տեղական ավելի վաղ արվեստի հետ, որի արմատները ձգվում են մինչև հին ասորամիջագետքյան մշակույթը: Ա. Յակոբսոնը, դիտարկելով ԺԵ-ԺԶ. դդ. ռուսական դեկորատիվ արվեստը, հատուկ ուշադրություն է դարձրել նման զարդանախշերի վրա, որոնք նա նույնպես կապում է հին մերձավորարևելյան ավանդույթների հետ (220, 242):

Այդ զարդանախշերը շատ մեծ տարածում են գտնում Հայաստանում: Մենք դրանք տեսնում ենք և՛ մանրանկարներում, և՛ եկեղեցիների բարձրաքանդակներում, և՛ խաչքարերի ու կիրառական արվեստի իրերի վրա, ընդ որում՝ այդ զարդանախշերի նմուշները կարելի է տեսնել երկրի տարբեր շրջանների հուշարձաններում, սակայն այդ նախշերի ամենավաղ օրինակները հանդիպում են Բարձր Հայքի արվեստում:

Երզնկայի Աստվածաշունչը սկսվում է մի մանրանկարով, ուր պատկերված է Սինա լեռան վրա կանգնած Մովսես մարգարեն պատգամի տախտակները ստանալիս (նկ. 32): Մովսեսը կանգնած է շքեղ ձևավորված խորանի մեջ, որի գլխազարդը կրում է վերը նկարագրված զարդանախշը: Նրա խոշոր կերպարը զբաղեցնում է խորանի գրեթե ողջ ներքին տարածությունը: Մարգարեն պատկերված է վեր պարզած քողածածկ ձեռքերով, որոնցով նա տախտակները զգուշորեն ընդունում է երկնքից պարզված Աստծո աջից⁴⁵: Ձեռագրի հաջորդ թերթին կա Մովսեսի ևս մեկ պատկեր՝ որպես Հնգամատյանի հեղինակի (նկ. 33): Մովսեսին որպես հեղինակ ներկայացնելը ավանդական է Հայաստանի համար և հազվադեպ է հանդիպում բյուզանդական հուշարձաններում: Մեր մանրանկարի վրա, որը տիտղոսաթերթ է, Մովսեսը պատկերված է շարադրանքի առաջին տառը գրելիս (ձախ ձեռքին թանաքաման է): Տիտղոսաթերթի գլխազարդի մեջ պատկերված են հինգ մեղալիոններ. մեջտեղինում պատկերված է Քրիստոսը՝ Պանտոկրատորի կերպարանքով, իսկ կողմնայիններում՝ վեցթևյան սերովբեներ և ճախրող հրեշտակներ: Մեղալիոնների միջև ընկած տարածությունը ծածկված է բուսական զարդանախշերով:

Սուրբ Գրոց որոշ հեղինակներ, օրինակ՝ Ուսէն, Սոփոնիան և այլ մարգարեներ պատկերված են դիմահայաց նստած դիրքով՝ ձեռքներին երկար գալարափաթեթներ,

⁴⁵ Գործող անձանց ծածկած ձեռքերով պատկերելը գալիս է սրբազան անձանց առաջ ձեռքերը հագուստի ծալքերում թաքցնելու հին ավանդույթից: Այդ ավանդույթը հայտնի էր դեռևս Հին Հռոմի ժամանակաշրջանից: Այն հատուկ նշանակություն է ստացել ծիսական արվեստում:

որոնց վրա գրված են նրանց մարգարեութ-
յուններից հատվածներ (նկ. 34, 35): Շա-
րադրանքով ծածկված գալարափաթեթնե-
րով մարգարեների պատկերումը կա նաև
բյուզանդական հուշարձաններում, սակայն
այդ պատկերագրությունն առանձնահա-
տուկ զարգացում է ստացել լատինական
ձեռագրերում (174, 150): Բայց վերջիննե-
րում այդ մանրանկարները լրիվ այլ տեսք
ունեն. դրանք շատ փոքր պատկերներ են,
որոնք տեղադրվում էին սկզբնատառերում
կամ ձեռագրերի լուսանցքներում:

Հին Կտակարանի առանձին գրքերին
նախորդում են բնագրերին վերաբերող
մանրանկարներ: Այսպես՝ Հեսուե Նավեի
գրքի սկզբում պատկերված է հրեշտակի
հայտնությունը: Հեսուեի և հրեշտակի կեր-
պարների կողքին գրված են Հեսուեի գրքի
Ե. 13-14 մասի բառերը, ուր վկայված է Իս-
րայելի ժողովրդի առաջնորդի վրա գրված
առաքելությունը (նկ. 36):

Դատավորաց գրքի սկզբում կան Գողո-
նիելի և Գեդեոնի պատկերները. նրանք
նստած են գահերին, կա նաև Սամսոնի
պատկերը՝ ձեռքին ավանակի ծնոտը, որով
նա սպանել է հազար փղշտացի (երեքն էլ
պաշտվում էին որպես Իսրայելի փրկիչներ,
նկ. 37):

Աչքի են ընկնում առանձնապես Հոբի և
Դանիելի գրքերի նկարազարդումները. ա-
ռաջինի սկզբում պատկերված է Հոբը «աղ-
բանոցում»: Նրա կողքին են կինը և նրան
այցի եկած երեք բարեկամները (նկ. 38):
Նկարչին հաջողվել է վերարտադրել այդ
տեսարանի գործող անձանց հոգեբանական
տարբեր վիճակները. տառապող, սակայն իր
համոզմունքներում անսասան Հոբը,
տրտմած կինը, նրան կարեկցող բարեկամ-
ները: Դանիել մարգարեի գրքի սկզբում
պատկերված է Շուշանը, որի կերպարը հի-
շեցնում է Հոբի կնոջը՝ տխուր մտորումների
մեջ խորասուզված երիտասարդ կնոջ կեց-
վածք, որը պատկերված է համանման հա-
գուստով: Արտահայտիչ են դատավորի գա-
հին նստած Դանիելին գաղտագողի մոտե-
ցող ծերունիների Ֆիգուրները, որոնք կար-
ծես հաճոյանում են խորաթափանց մարգա-
րեին (նկ. 39):

Աստվածաշնչի ամենատպալուրիչ ման-
րանկարը Եզեկիելի տեսիլքի տեսարանն է,
որը զբաղեցնում է ամբողջ էջը (նկ. 40): Ս.
Տեր-Ներսեսյանն առանձնացնում է այն՝
համարելով, որ սա տվյալ սյուժեի լրիվ նոր
մեկնաբանություն է. «Եզեկիելի տեսիլքի
վիթխարի տեսարանը արմատապես տար-
բերվում է բյուզանդական ձեռագրերում
հազվադեպ հանդիպող այդ տեսարանից և
նրա պատկերումներից՝ կապադովկյան եկե-
ղեցիներում: Նրա որոշ մանրամասներ
տարբերվում են նույնիսկ աստվածաշնչյան
չարադրանքից: Հորինվածքի ամբողջակա-
նությունը համար լուսապսակից դուրս եկող
ձեռքը պահել է ձող, որի վրա պահվում է
անիվը» (240, 218): Քիչ անց հեղինակը
լուսաբանում է. «անիվը ձողով և ձեռքը
հատուկ են արված, որպեսզի ընդգծվի հո-
րինվածքի ուղղահայաց առանցքը, որը
պսակված է Բարձրյալի կերպարով» (240,
նույն տեղում): Սակայն պետք է նկատել,
որ այստեղ աստվածաշնչյան չարադրան-
քից ոչ մի շեղում չկա: Նկարիչը հետևում
է Աստվածաշնչի հայերեն թարգմանություն
չարադրանքին, որը համապատասխանում է
Յոթանասնիցին. «ընդ որ կողմ դիմէր
ամպն եւ հողմն, երթային գազանքն՝ եւ ա-
նիւքն ընդ նոսին վերանային. զի ոգի կեն-
դանի գոյր յանիւսն» (Եզ. Ա, 20): Ցանկա-
նալով ցույց տալ, թե ինչպես էին անիվ-
ներն ինքնուրույն բարձրանում, նկարիչը
պատկերել է խորհրդավոր ձեռքը, որը պա-
հել է ձողը, որի վրա դրանք հենվում էին,
այդպիսով խորհրդանշելով «ոգին կենդա-
նի»: Ս. Տեր-Ներսեսյանը, անկասկած, օգտ-
վել է Աստվածաշնչի լատիներեն թարգմա-
նությունից, ուր, ինչպես և ուսուներեն
թարգմանություն մեջ, համապատասխան
հատվածն այլ կերպ է հնչում. «և անիվնե-
րը բարձրանում էին նրանց (կենդանիներին
- է. Կ.) հավասար, քանզի կենդանիների ո-
գին անիվների մեջ էր»: Հայերեն թարգմա-
նությունը, ինչպես նշված է Կոնստանդնու-
պոլսի հրատարակություն մեջ, հիմնվում է
հունարեն չարադրանքի վրա (11, 844, ծ. 2):

Չնայելով որ մեզ հետաքրքրող մանրան-
կարում աստվածաշնչական չարադրանքից
շեղումներ չկան՝ այդուհանդերձ, դա չի

բացառում վարպետի աշխատանքի ինքնատիպությունն ու յուրօրինակությունը: Անկասկած, ծանոթ լինելով նման հորինվածքներին (ճիշտ է այլ թեմայով «Քրիստոսի հայտնությունը փառքի մեջ»)՝ նկարիչը ստեղծագործական մոտեցում է ցուցաբերել իր առջև դրված խնդրին և, օգտագործելով գոյություն ունեցող ավանդույթը, տվել է սյուժեի իր մեկնաբանությունը՝ ելնելով հայերեն թարգամանությունից առանձնահատկություններից: Այստեղ պետք է հատուկ ընդգծել ոչ միայն բազմաթիվ պատրաստի նմուշներից օգտվելու վարպետի ունակությունը, այլև կարևոր է նշել շարադրանքի մեկնաբանությունից ելնելու նրա ցանկությունը՝ այն իմաստավորելով և կանոնացված հորինվածքի մեջ նորույթներ մուծելով:

Աստվածաշնչի մանրանկարների մեծ մասը բավականաչափ ինքնատիպ հորինվածքներ են, որոնք վկայում են նկարագարող շարադրանքի նկատմամբ նկարիչների լուրջ վերաբերմունքի և մանրանկարների պատկերման գործում նրանց ստեղծագործական մոտեցման մասին: Իհարկե, տուրք տալով ժամանակին՝ նրանք չէին կարող չօգտվել գաղափարներից, սակայն դրանք նրանց համար ընդամենը ուղենիշեր էին, քանի որ Երզնկայի Աստվածաշնչին մերձեցող համանման հուշարձան չի կարողացել գտնել միջնադարյան արվեստի նույնիսկ այնպիսի խոշոր գիտակ, ինչպիսին Ս. Տեր-Ներսեսյանն է, որը հատուկ ընդգծել է «նկարիչների անկախությունը գաղափարներից», իսկ Եղեկիելի տեսիլքի տեսարանը բնորոշել է որպես «միջնադարյան արվեստում համանմանը չունեցող մեկնաբանություն» (240, 218):

Նոր Կտակարանի նկարագարողումները շատ չեն. շքեղ հարդարված տասը խորան, ավետարանիչների դիմանկարներ, տիտղոսաթերթեր և լուսանցազարդեր: Ավետարանիչները պատկերված են տիտղոսաթերթերի վրա՝ անմիջապես գլխազարդերի տակ, նույն դիրքում, ինչ մարգարեները՝ իրենց գրքերի առաջին տառերը գրելիս (նկ. 41, 42): Գործք Առաքելոցին նախորդում է Պողոս առաքյալի պատկերը, որը նկարված

է, ինչպես և ավետարանիչները՝ թանաքամանը ձախ ձեռքին, իսկ աջով շարադրանքի առաջին տառը գրելիս:

Խորանների գեղարվեստական հարդարանքը փոքր-ինչ անսովոր է: Չնայած շքեղ հարդարանքին, գույների հարուստ ներկայանակին, ոսկու առատությունը՝ դրանք միևնույն ժամանակ աչքի են ընկնում հանդիսավոր գույվածությունով: Այդ տպավորությունը ստեղծվում է հիմնականում գծանկարի հստակության շնորհիվ, ուր ամեն ինչ ենթարկվում է խիստ համաչափության պահանջներին: Խորանների վերին և կողմնային լուսանցքներում չկան թռչունների, ծառերի և ծաղկած թփերի ավանդական պատկերները, որը բնորոշ է հայկական մանրանկարչության սկզբնական փուլին: Զարդարանքների ընտրության հարցում նկատվում է որոշակի գույվածություն (նկ. 43, 44): Միայն երկու դեպքում է, որ գլխազարդերի վրա հայտնվում են սիրամարգերի պատկերներ (Մովսեսին պատկերող խորանի և Մատթեոս ավետարանի տիտղոսաթերթի գլխազարդերի վերևում): Խորանների և տիտղոսաթերթերի գլխազարդերն ուղղանկյուն են, սակայն տիտղոսաթերթերում այդ գծագրությունը խախտվում է եռաթև կտրվածքներով: Յուրաքանչյուր գույգ խորան ունի համանման, սակայն չկրկնվող զարդային հարդարանք: Բազմազանություն մեծ աչքի են ընկնում սյուժեների խոյակները, որոնք զարդարված են հերալդիկ առյուծներով կամ ատլանտներով, սակայն ավելի հաճախ զարդանախշերով, որոնք ենթարկվում են խիստ համաչափության: Առաջին գույգ խորանի գլխազարդերում մեծ տեղ են զբաղեցնում մեղալիոնները, ուր պատկերված են Եվսեբիոսի և Կարպիանոսի կիսանդրիները: Այդպիսի պատկերները հայկական մանրանկարչության առանձնահատկությունն են սկսած Ժ. Գ. դ. (234, 20):

«Հեղինակային դիմանկարներից» առանձնապես հաջողված է Հովհաննես աստվածաբանի պատկերը՝ «Յայտնություն Յովհաննու» գրքի սկզբում (նկ. 45): Արտասովոր ձևով կիտված ժայռերի զանգվածի ֆոնի վրա պատկերված է Հովհաննես առաքյալը՝ դեպի Քրիստոսը դարձած, ում պատ-

կերը գետեղված է տիտղոսաթերթի գլխազարդի մեղալիոնում: Հովհաննեսի ոտքերի մոտ պատկերված է նրա աշակերտ Պրոխորոնը, որը գրառում է «Աստու բանը»: Այդ մանրանկարի մեջ հոյակապ կերպով համադրվում են գրքի ձևավորման բոլոր տարրերը՝ թեմատիկ մանրանկար, գարդանախշված գլխազարդ, նրբագեղ կերպով նկարված սկզբնատառ և լուսանցազարդ: Շքեղ ձևավորված տիտղոսաթերթի ընդհանուր տպավորությունը լրացնում է շարադրանքի վայելուչ գրչությունը: Հովհաննեսի լարված դիրքը, նրա հուզմունքը կարծես ընդգծվում են ժայռերի և՛ գծանկարային, և՛ գունային խիստ հակադիր լուծման անհանգիստ ութմով, մինչդեռ Քրիստոսի պատկերը առանձնանում է հանդարտությամբ և վեհությունով, որին համապատասխանում է հենքը, որի վրա պատկերված է կլոր մեղալիոն, որը երկված է խիստ համաչափ ութմին ենթարկվող գարդանախշերով:

Երզնկայի Աստվածաշունչը գրվել է երկու տարվա՝ 1269-1270 թթ. ընթացքում: Զեռագրի գրչության վայրի և ժամանակի, պատվիրատուների և ձեռագրի ստեղծմանը մասնակցած անձանց մասին տեղեկություններն արժանիքից բացի գրիչների հիշատակագրությունների մեջ մենք գտնում ենք նաև այլ կարգի տեղեկություններ: Սրանցից մեկից իմանում ենք, որ Հովհաննես իշխանը (պատվիրատուներից մեկը) ուներ երկու որդի՝ Ներսես և Գրիգորիս, որոնցից առաջինը հետագայում դարձել է արքեպիսկոպոս և Երզնկայի եպիսկոպոսական թեմի առաջնորդ: Եվ, շատ անսպասելի կերպով, անհրաժեշտ տեղեկությունների և սերունդներին հասցեագրված՝ ձեռագրի պատվիրատուներին և նրա վրա ջանք թափած բոլոր անձանց աղոթքներում հիշելու հորդորների կողքին, Մխիթար գրիչը բազմիցս բողոքում է իրեն խանգարող զուտ կենցաղային դժվարություններից՝ ճանճերից, լվերից, անտանելի շոգից. «Անիծե՛ Աստուած զճանճն եւ ընդ նմին զլոյն, զի յոյժ կծեն զիս, այլ եւ տաւթ աւուրս տագնապեն զիս» (57, 377):

Զեռագրում պահպանվել են նաև ավելի ուշ շրջանի հիշատակարաններ, որտեղից պարզվում է, որ Ժէ. դ. սկզբին ձեռագիրը գտնվել է Կարինում և պատկանել է Աբաղաանունով թուրք փաշայի, որից Աստվածաշունչը ետ է գնվել հայ վաճառական Զիրաքի միջոցներով: Հիշատակարանը գրել է Դավիթ եպիսկոպոսը, որը Երուսաղեմից էր գրում (Կարին) էր եկել որպես եկեղեցական պատվիրակ և վաճառական Զիրաքին համոզել էր տրամադրել ձեռագրի փրկագնման համար անհրաժեշտ գումարը: Դավիթ եպիսկոպոսի հիշատակարանում կարդում ենք. «տեսա զայս Աստուածաշունչս գերի ի ձեռն Ապաղա փաշայի. Աստուած աւրհնէ խոճայ Զիրաքն... յետոյ Ռ. (1000) ղուրիչ (արծաթ դրամ)⁴⁶ ետուր եւ առաւ զսա, եւ ետուր Սուրբ Երուսաղէմայ յիշատակ, ի դուռն Սուրբ Յակոբայ, յիշատակ անջրելի իւրն եւ ծնողացն...»: Այս հիշատակարանը ձեռագրին կցվել է 1626 թ.: Այդ ժամանակից ի վեր ձեռագիրը պահվում է Երուսաղեմի պատրիարքություն մատենադարանում 1925 համարի տակ⁴⁷:

Երզնկայի Աստվածաշնչի ստեղծմանը մասնակցած Մխիթար գրիչն ընդօրինակել և նկարագարողել է նաև 1280 թ. մի Ժողովածու (Մատ. ձեռ. Հ^մ 1746), որը պարունակում է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» աշխատությունը: Նրա առաջին էջին (նկ. 46) պատկերված է գրիչը՝ աշխատության հեղինակ՝ «եռակի անհաղթ գիտնական», Ե-Զ. դդ. հայ փելիսոփա Դավիթը, որը գրում է իր աշխատության առաջին տառը (ինչպես Երզնկայի Աստվածաշնչի մարգարեներն ու առաքյալները): Դավիթ խոշոր նկարը պատկերված է լայն, ազատ ծալքերով իջնող հանդերձանքով, որը «դիմանկարին» հանդիսավոր և տոնական տեսք է տալիս: Փելիսոփայի ինքնամոփոփ դեմքը դժագրված է նրբե-

⁴⁶ Այս հիշատակարանի գրություն ժամանակ մեկ ղուրուչը 0,27 գ. արծաթ էր:

⁴⁷ Զեռագրի բազմաթիվ էջերում, ինչպես նաև մանրանկարների տակ պահպանվել են վաճառական Զիրաքի արձանագրությունները, որոնց բովանդակությունը նույնն է. «Ես՝ Վանեցի Իսքանազարի որդի խոճայ Զիրաքս, որ առի սուրբ Աստվածաշունչս Ռ. (1000) ղուրուչ եւ ետուր յիշատակ ի դուռնն սուրբ Երուսաղէմի՝ ինձ եւ ծնողաց իմոց ամենայն»:

րանգներով: Ինչպես և Երզնկայի Աստվածաշնչում, «գիմանկարը» ներգծված է տիտղոսաթերթի մեջ, որի գլխազարդում մեզ արդեն ծանոթ բուսական զարդանախշերի հենքի վրա պատկերված են նրբագեղ գծագրված և համաչափ տեղադրված երկու սիրին (առասպելական թռչուն): Գլխազարդի վերևում պատկերված են երկու թռչուն՝ աղբյուրի մոտ (խորհրդանշում են հավատացյալների հոգիները, որոնք հագեցնում են իմացության իրենց ծարավը՝ ճշմարիտ հավատքին հաղորդվելով):

Գործող անձանց խոշոր պատկերները Բարձր Հայքի մանրանկարչության առանձնահատկությունն են դառնում ԺԳ. դ. վերջին և ԺԴ. դ. սկզբին: Որպես օրինակ կարելի է բերել արդեն հիշատակված 1201 թ. Ավետարանը (Մատ. ձեռ. Հ^ն 10359), որին 1250 թ. նորոգման ժամանակ ավելացվել են ավետարանիչների դիմանկարները՝ նկարված այդ ժամանակաշրջանին հատուկ ոճով՝ գործող անձանց խոշորացված պատկերներով, նրանց գեղանկարչական մեկնաբանությամբ, նրբերանգների կիրառմամբ, ճշգրիտ և պլաստիկ գծանկարի պարզորոշությամբ: Զեռագրի հիշատակարանում տեղեկություններ են պահպանվել նրա նորոգման մասին և տրված է ավետարանիչների դիմանկարները նկարած ծաղկողի անունը. «Արդ, աղաչեմ գամենիսեան, որք ընթեռնոյք եւ աւկտիք կամ ընդաւրինակէք եւ լուսաւորիք ի սմանէ, յիշեսջիք ի Քրիստոս գստացողք սորա զԱհարոն քահանա... եւ զԸնձեր նաղաշն եւ զճնողան իւր զԳայլերն, որ աշխատեցաւ եւ ծաղկեաց իւր հալալ ընչիւք զսուրբ Աւետարանս...» (49, 256): Ավետարանիչների դիմանկարներն Ընձերը նկարել է խորանների հակառակ էջերին և զբաղեցրել է երկու էջ (յուրաքանչյուրի վրա երկու ավետարանչի պատկեր)։ Նրանցից երեքի մարմինները պատկերված են առջևից, մինչդեռ նրանց դեմքերը շրջված են երեք քառորդ չափով, իսկ Ղուկասը ամբողջովին պատկերված է երեք քառորդ դարձվածքով (նկ. 47ա, 47բ): Ավետարանիչներից յուրաքանչյուրը ներգծված է շրջանակի մեջ, որն ավարտվում է կամարով: Ավետարանիչների խոշոր կերպարները, նրանց լայն, ազատ ծալքերով իջնող հանդերձանքը պատկերներին հաղորդում են որոշ կոթողայնություն: Նկարիչը հմուտ

կերպով կիրառում է նրբերանգային գունավորման հնարքը, որը ձևերի ծավալային լուծման պատրանք է ստեղծում: Ուճական տեսակետից այդ մանրանկարները մերձենում են Երզնկայի Աստվածաշնչի մանրանկարներին: Այս երկու ձեռագրերի մանրանկարների համար ընդհանուր է ևս մեկ առանձնահատկություն՝ գործող անձանց հոգեբանական մեկնաբանության ձգտումը: Այսպես՝ Հ^ն 10359 Ավետարանի Մատթեոսը պատկերված է փրկիստփայի կերպարանքով, Մարկոսը՝ մտազբաղ, գրիչը թաթախում է թանաքամանի մեջ, իսկ ծածկված ձախ ձեռքում գիրք է բռնել, Ղուկասը՝ կենտրոնացած մտորում է իր գրածի մասին: Հովհաննեսի պատկերն ամենից վատ է պահպանվել: Նրա դեմքը լրիվ ջնջվել է, իսկ ինչ-որ մեկը հետագայում անշնորհք կերպով լրացրել է նրա դիմագծերը: Ավետարանիչների կերպարների մեկնությունը, նրանց գեղարվեստական իրագործումը վկայում են վարպետի ստեղծագործական մոտեցման մասին, որը կարողացել է առաքյալների կանոնացված պատկերներին հաղորդել սեփական մեկնաբանությունը, կերպարի և նրա գեղագիտական մարմնավորման սեփական ընկալումը: Ավետարանիչների պատկերներն այնքան են անձնավորված, որ թվում է թե կենդանի, իրական մարդկանց դիմանկարներ են: Մեծ տպավորություն են գործում նրանց խոշոր, գեղեցիկ աչքերը: Հանդիսավոր դիրքը, դասական օրինակներին մերձեցող մարմնի ճիշտ համամասնությունները հիշեցնում են ուշ անտիկ կամ վաղ քրիստոնեական արվեստի ստեղծագործությունները: Այդ առանձնահատկությունները, հետագայում ձեռք բերելով որոշ սխեմատիկ բնույթ, հաճախ բնորոշ են դառնում Բարձր Հայքի մի շարք ձեռագրերի համար և օգնում է նրանց տեղորոշման հարցում:

Վերը քննված Երզնկայի Աստվածաշնչի և Հ^ն 10359 Ավետարանի մանրանկարների հետ աղերսվում են Մատենադարանի Հ^ն 2653 Ավետարանի նկարազարդումները: Գրիչ և մանրանկարիչ Ստեփանոսը Կարինի մոտ գտնվող Կան գյուղում սկսել է գրել այն և, աշխատանքն անավարտ թողնելով, վախճանվել է: Ընդօրինակումն ավարտել է Նատեր գրիչը, որը շուտով, Ավետարանը հետը տանելով, գնացել է Ղրիմ: Առաջին գրիչ Ստեփանոսն ընդօրինակել է առաջին

երկու՝ Մատթեոսի և Մարկոսի ավետարանների բնագիրները, սա իմանում ենք Նատերի հիշատակարանից. «Այլև Բ. գլուխն առաջինք յառաջ գրեալ էր ումեմն Ստեփանոս իրիցու, որ էր Կանու քաղաքէ, և ոչ էր ժամանել ի կատարումն սորա, ի ձեռն հասարակադիր հայրենական հնչմանն հողմոյն մահու, և փոխեալ էր յաստեացս առ Քրիստոս. եւ զկնի ամաց իբրեւ թոռն նորա Գէորք սարկաւազ ետ զսա աւարտել մերոյ նուաստութեանս, և մեք կարողութեամբն Աստուծոյ յանգ հասուցաք» (26, 327): Որ Ստեփանոսը ձեռագրի ոչ միայն գրիչն էր, այլև ծաղկողը, իմանում ենք նույն հիշատակարանից. «Արդ, որք հանդիպիք այսմ լուսաւոր աստուածախոսութեանս, յիշեցէ՛ք ի Տէր աղաւթիւք ձերովք և... առաջին գրողին՝ Ստեփանոս քահանային, որ իւրով ձեռամբն գրեալ էր և ոսկով զարդարեալ՝ յիշատակ իւր... Յիշեցէ՛ք ի Տէր և զԳէորդ սարկաւազ, որ է ժառանգ նորա, որդի որդւոյ նորա, որ նորոգել ետ, և ի կատարումն յանգել...» (26, 327): Նատերն ընդօրինակությունն ավարտել է 1341 թ., հետևաբար Գևորգի պապ Ստեփանոսը, հավանաբար, ապրել է ԺԳ. դ. կեսերին: Դրա մասին է վկայում նաև մանրանկարների ոճը, որը բնորոշ է Արևմտյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի գրքարվեստին: Առաջին երկու ավետարանների տիտղոսաթերթերի զարդային հարդարանքը հիշեցնում է Երզնկայի Աստվածաշնչի զարդանախշերը, սակայն ավելի զուսպ, ավելի հակիրճ տարատեսակն է, որ թելադրված է Ավետարանի ավելի փոքր չափերով: Ինչ վերաբերում է ավետարանիչների կերպարներին, ապա դրանք իրենց ոճով և կատարման վարպետությամբ կարող են համեմատվել Երզնկայի Աստվածաշնչի մարգարեների և առաքյալների կերպարների հետ: Ավետարանիչների կերպարներն աչքի են ընկնում նրբությամբ և կատարման նրբագեղությամբ: Նույնը կարելի է ասել նաև Ավետարանի զարդային հարդարանքի մասին: Նկարիչն աշխատել է նուրբ գեղագիտական ոճով, լայնորեն օգտվել է նրբերանգներից և այդպիսով ֆիզիոլոգիան ծավալայնություն է հաղորդել: Ավելի լավ է պահպանվել Մարկոս ավետարանի ղեմանկարը. նա

պատկերված է սեղանի դիմաց նստած, գրչածայրը սրելիս (նկ. 48): Նրա նրբին, գեղեցիկ դեմքը մոդելավորված է մանրամասն երանգավորման հնարքի կիրառմամբ, այն եզրապատված է մուգ, կարճ մորուսով: Ավետարանչի հանդերձանքի ծալքերը նրբորեն պատում են նրա մարմինը՝ եզրագծերը գրեթե չեն զգացվում, իսկ ծալքերը հանդարտ կերպով ձուլվում են իրար: Մգարկումն ու լուսարկումը լուսաստվերային մոդելավորման պատրանք են ստեղծում: Գծանկարը գրագետ է և ունի անտիկ ձևերի ներդաշնակություն: Ոճի այդ առանձնահատկությունները բխում են բյուզանդական գաղափարների հետ ծանոթությունից, երբ ԺԳ. դ. երկրորդ կեսին դարձյալ ի հայտ եկան անտիկ ավանդույթները, և դա դարձավ Պալեոլոգների դարաշրջանի արվեստի բնորոշ գիծը: Չնայած մանրանկարը վատ է պահպանվել, այդուհանդերձ, այն հատվածներում, ուր գունային շերտը խաթարված չէ, այն աչքի է ընկնում պատելային երանգների թարմությամբ և բազմազանությամբ:

Սեղանի մոտ նստած և գրիչը սրող ավետարանչի տիպը հանդիպում է հունական (263, 405-407), ինչպես նաև այդ ժամանակաշրջանի կիլիկյան որոշ պատկերազարդ ձեռագրերում. օրինակ՝ Սմբատ Սպարապետի Ավետարանում (Մատ. ձեռ. Հ^մ 7644), Թոփգափուի թանգարանի Ավետարանում (234, նկ. 327), ընդ որում՝ այդպես էին պատկերվում մերթ Մատթեոսը, մերթ Մարկոսը, մերթ Ղուկասը:

ԺԳ. դ. վերջին է վերաբերում Բարձր Հայքում գրված ևս մեկ ձեռագիր. Մեկնություն Ղուկասի ավետարանի՝ Մատենադարանի ձեռ. Հ^մ 1342: Այս ձեռագրի վրա աշխատանքը սկսվել է Դարանաղյաց գավառի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մենաստանում և ավարտին է հասցվել Անիում Գրիգոր մականունով Ահարոն գրչի կողմից: Գրիգոր-Ահարոն գրչի անավարտ ձեռագրի հետ այդքան հեռավոր ճանապարհորդություն ձեռնարկելու պատճառները բացատրվում են հիշատակարանում. «Եւ այլ գրեցաւ ի մայրաքաղաքն Երզնկա, բայց ի կատարումն ոչ ել, զի այլազգիք մահմետականք ասպատակեցին ի գաւառն... և բազում քրիստոնէայս՝ եկեղեցականս և աշխարհականս նահատակեցին, և յանխնա և անողորմ սրակոտոր արարին, և

* Լ. Խաչիկեանը ծանոթագրել է. «Տարեթուի լրացման համար տեղ է թողնուած» - Գ. Տ-Վ.:

զայսն գերի վերցրին: Եւ սաստիկ և անհարին ահ և երկեւղ, և տազնապ ի խոռվութիւն եղև բնակչաց քաղաքին: Եւ որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանք, նոյնպէս և մեք մազապուրծ եղե[ա]լ, բազում տառապանաւք և աշխատութեամբ դիմե[ա]լ յարևելից կողմն, և խնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդե[ա]լ հասոյց զմեզ յԱնի քաղաքս, և աստ եղև կատարումն գրոցս... ի թուակայնիս Հայոց ՁԻԱ. (1292 թ.)» (57, 672-673): Ապա Ահարոն գրիչը բողբոջում է, որ հարկադիր տեղափոխութեան և տեղից տեղ դեգերումների պատճառով ինքը մեծ դժվարութեամբ է աշխատել ձեռագրի վրա և չի կարողացել ճարել ո՛չ որակյալ թուղթ, ո՛չ թանաք, ո՛չ էլ գաղափար⁴⁸: Այս հիշատակարանը ուշագրավ է իր հաղորդած տեղեկութիւններով, սակայն այն գրել է Ահարոնը, որն ընդամենը լրացրել է պակասող շարագրանքը՝ չհիշատակելով հիմնական բնագիրն ընդօրինակած գրչի և մանրանկարչի անունները:

Բացի զարդանախշային հարդարանքից ձեռագրում պահպանվել է մի դիմանկար, ուր պատկերված է Ղուկաս ավետարանիչը, որի թիկունքում երևում է կանացի մի կերպարանք: Մանրանկարը շատ վատ է պահպանվել, և պատկերված անձինք պարզ չեն երևում և, հետևաբար, մանրանկարը լուսանկարել հնարավոր չէ: Ավետարանչի ետևում կանգնած կնոջ պատկերը լուսասպասկ ունի. նա խորհրդանշում է Աստուծո Իմաստնութիւնը՝ Սոփիային, որի կերպարը հաճախ ուղեկցում է ավետարանիչների պատկերներին: Այս պատկերագրութիւնն առանձնապես հաճախ է հանդիպում այդ ժամանակաշրջանի հունական հուշարձաններում:

Ավետարանիչների պատկերումը իմաստնութեան անձնավորման ուղեկցութեամբ շատ հին ծագում ունի: Մեծահոգութեան, Իմաստնութեան, Մուսաների և այլոց այլաբանական կերպարները ուղեկցում էին շարագրանքների հեղինակների, իսկ երբեմն նաև՝ ձեռագրերի պատվիրատուների կերպարներով: Պալեոլոգյան վերածննդի ժա-

մանակաշրջանում, երբ արվեստը դիմում էր անտիկ շրջանին, նորից վերածնվում է նաև այդ հին ավանդույթը: Հենց այդ ժամանակաշրջանում է, որ բյուզանդական արվեստում մեծ տարածում են ստանում ավետարանիչների պատկերները՝ Իմաստնութեան անձնավորման հետ (149, նկ. 35, 36, 101, 102, 273, նկ. 15, 33, 110, 28-29, 114, 204-205, 198, 180-203):

Ուշագրի զննելով մեզ հետաքրքրող մանրանկարը՝ նկատում ենք, որ այն նկարել է նրբերանգային գունավորման և ձևերի մանրամասն մշակման հնարքներին տիրապետող ծաղկող: Կերպարների ճիշտ կառուցումը, նրանց խոշոր չափերը, գործող անձանց հագուստների պատկերման մեջ ծալքազարդարանքների առատութիւնը՝ այս ամենը Ժ. Գ. Կեսի Բարձր Հայքի մանրանկարչութեանը բնորոշ և մեզ արդեն ծանոթ գծեր են, իսկ Ժ. Գ. սկզբին այդ հենքին հավելվում է պալեոլոգյան արվեստի ազդեցութիւնը: Դրա հետևանքով հայկական մանրանկարչութեան մեջ ի հայտ է գալիս ոճական նոր ուղղութիւն, որն իր մեջ է ներառում ինչպես ազգային արվեստի ծաղկման շրջանի (Ժ. Գ. Գ.) լավագույն ավանդույթները, այնպես էլ բյուզանդական պալեոլոգյան արվեստի որոշակի ազդեցութիւնը: Ծնունդ առնելով Բարձր Հայքի գրչատներում՝ այն հետագայում որոշակիորեն ազդել է հայկական մանրանկարչութեան այլ դպրոցների և, մասնավորապես, Ղրիմի դպրոցի վրա: Բարձր Հայքի Ժ. Գ. Գ. վերջի և Ժ. Գ. Գ. գրչութեան հուշարձաններն այդպիսով նոր էջ են բացել միջնադարյան հայկական գեղանկարչութեան պատմութեան մեջ, ինչը վկայում է այդ ժամանակաշրջանի մշակութային կյանքի հագեցածութեան, իսկ գեղանկարչութեան ասպարեզում՝ հին, սակայն իրենց առաջնակարգ նշանակութիւնը չկորցրած միջնադարյան գաղափարների մարմնավորման նոր ուղիների որոնումների մասին: Մեր աշխատութեան հաջորդ գլուխը նվիրված է այդ նոր ուղղութեան ուսումնասիրութեանը:

⁴⁸ Ձեռագիրն իսկապես գրված է շատ անորակ թղթի վրա, նույնպիսի թանաքով և ներկերով. թանաքը խոռնացել է, և շարագրանքը դժվարընթեռնելի է, իսկ ներկը տեղ-տեղ թափված է:

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ԺԳ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԺԴ. ԴԱՐՈՒՄ

Ժամանակին կարծիքներ կային, որ հայկական միջնադարյան մանրանկարչուության ծաղկման գագաթնակետ ժԳ. դարից հետո սկսվել է այդ արվեստի աստիճանական անկումը, որը պայմանավորված էր երկրի քաղաքական և սոցիալական պայմանների կտրուկ վատթարացմամբ: Սակայն, ինչպես ցույց են տվել վերջին տասնամյակների ուսումնասիրությունները, Հայաստանի առանձին շրջաններում մշակութային կյանքի անկման գործընթացը մի փոքր ավելի ուշ է սկսվել: Ավելին՝ մի շարք շրջաններում նշմարվել է մշակույթի և արվեստի տարբեր ճյուղերի նոր կարճատև վերելք: Կիրիկյան մշակույթի շարունակվող զարգացմանը զուգահեռ ժԳ. դ. վերջը և ժԴ. դ. առաջին կեսը Գլաձորի համալսարանի գործունեության ծաղկման շրջանն է, իսկ այդ հարյուրամյակի երկրորդ կեսին ակտիվանում է Տաթևի և Մեծոփի համալսարանների գործունեությունը: Այդ ժամանակաշրջանում բուռն վերելք են ապրում Վասպուրականի, Արցախի, Նախիջևանի, Սյունիքի գրչատները, ինչպես նաև հայկական գաղթօջախների գրչության կենտրոնները: Ինչ վերաբերում է Բարձր Հայքին, ապա այն քաղաքական իրադարձությունների մասին, որոնք նպաստել են այդ ժամանակաշրջանում նրա հոգևոր մշակույթի ծաղկմանը, մենք արդեն խոսել ենք: Ուստի զարմանալի չէ, որ այստեղ ևս ժԳ. դ. վերջին և ժԴ. դ. սկզբին մենք ականատես ենք լինում մշակույթի և արվեստի զարթոնքին: Այդ ժամանակաշրջանում ավարտվում են և վերակառուցվում գավառի բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ, իսկ գրչության կենտրոնները նոր վերելք են ապրում:

Փոփոխված պայմանների հետևանքով, երբ ամբողջ իշխանությունը կենտրոնանում է քաղաքային իշխանությունների ձեռքում, ձեռագրերի և արվեստի ստեղծագործությունների մեկենասներ ու պատվիրատուներ են դառնում վաճառականները, միջին և բարձրագույն հոգևորականությունը

նր, բարեկեցիկ գյուղացիները: Արվեստը սկսում է արտացոլել ազգաբնակչության միջին դասի ճաշակն ու պահանջները: Այդ ժամանակաշրջանում նշանակալի դեր է ստանձնում ժողովրդական ստեղծագործությունը: Այդ ամենը որոշակի կերպով ազդեցություն է թողնում նաև գրչության արվեստի զարգացման վրա: Ձեռագրերի նկարազարդումներում նկատվում է շոշափվող թեմաների շրջանակներն ընդլայնելու, դրանք նոր մանրամասներով հարստացնելու միտում: Ջարմանալի չէ, որ այդ ժամանակաշրջանում հայկական արվեստում մեծ արձագանք է ստանում պալեոլոգյան գեղանկարչությունն՝ իր արտահայտչամիջոցների ընտրության ազատությամբ և պատմողական շարքի ավելի լայն շրջանակներով: Զգալի նշանակություն են ձեռք բերում նաև կիրիկյան մանրանկարչության ավանդույթները: Այս ամենը նպաստել է հայկական մանրանկարչության մեջ նոր ուղղության սկզբնավորմանը, որը, հատկապես, սկսել է ձևավորվել Արևմտյան Հայաստանում, սակայն իր ամենավառ դրսևորմանն է հասել Բարձր Հայքի գրչատներում ստեղծված հուշարձաններում: Այդ ուղղության առանձնահատուկ գծերն էին գեղանկարչականության ուժգնացման միտումը, ձևերի ծավալային վերարտադրության ձգտումը՝ նրանց լուսաստվերային մշակման միջոցով⁴⁹, մարդկային մարմինն ավելի ճիշտ պատկերելու ունակությունը, երբ դրանք նկարվում էին անբռնազբոս և դինամիկ կեցվածքով:

⁴⁹ Ի տարբերություն լուսաստվերային մոդելավորման՝ զարգացած միջնադարում ի հայտ եկավ դեմքերի ստվերավորված մասերի ընդգծման ինքնատիպ հնարքը, որի դեպքում ստվերները պատկերվում էին պայմանական՝ կանաչավունի կամ դեղնահողի երանգներով: Այդպիսով, ստեղծվում էր ծավալային մեկնաբանության տպավորություն, որի դեպքում չկար լույսի և ոչ մի աղբյուր, և բացակայում էր հորինվածքի հեռանկարային կառուցվածքի հասկացողությունը: Առարկաների, կահավորանքի և ծալազարդարանքների մոդելավորման ժամանակ միշտ չէ, որ հետևողականորեն կիրառվում էին նաև նրբերանգները:

Գեղարվեստական արտահայտչամիջոցների զարգացմանը գուճընթաց այս շրջանում ի հայտ են գալիս գծանկարային ոճով արված հուշարձաններ: Սա վերաբերում է ոչ միայն զարդանախշային հարդարանքին, այլև թեմատիկ պատկերազարդումներին: Պահպանված ամենավաղ պատկերազարդ ձեռագրերի շարքում կան նմուշներ, որոնք նկարված են ներկերի սահմանափակ քանակով (որը հաճախ պարզապես դրանց բացակայությունն էր): Աշխատելով հիմնականում գծանկարային եղանակով՝ նկարիչներն ընդամենը մանրանկարները գունավորում էին ջրաներկի թեթև երանգներով: Սակայն ժամանակի ընթացքում ի հայտ է գալիս ձեռագրերի պատկերազարդման ինքնատիպ գծանկարային ոճ, երբ ամբողջ զարդային հարդարանքը՝ խորանները, տիտղոսաթերթերը, լուսանցազարդերը, նկարվում էր մեկ հիմնական գույնով՝ կարմրավուն ներկի տարբեր երանգներով, որի ավելի տարրալուծված երանգներն օգտագործվում էին գունավորման համար: Այդ նկարները արվում էին որդան կարմիրով, որը պատրաստվում էր միջատներից: Աստիճանաբար մշակվում են բավական կայուն զարդանախշային ձևեր, որոնք կիրառվում էին ձեռագրերի զարդային ձևավորման բոլոր տարրերում: Չնայած հայկական մանրանկարչական դպրոցների բազմազանությունը՝ այդ նախշերի հիմնական մոտիվները կրկնվում են զանազան տարբերակներով և արդեն ոչ միայն գծանկարային, այլև գեղանկարչական ոճով:

Բարձր Հայքի ձեռագրերի մեջ հանդիպում են այնպիսի նմուշներ, որոնց մեջ

ինքնատիպ ձևով համադրվում են երկու հնարք՝ գեղանկարչական և գծանկարային: Այդպիսի ձեռագրերում զարդանախշերն արված են գծանկարային եղանակով, իսկ մարդկային պատկերները՝ պոլիքրոմ՝ գեղանկարչական ոճով: Մի հուշարձանի մեջ երկու տարբեր ձևերի համադրությունը շատ հետաքրքիր ծագում ունի: Ժ. Գ. դ. վերջին և Ժ. Դ. դ. սկզբին Բարձր Հայքում գրված ձեռագրերին, որոնք զարդարված էին միայն գծանկարային եղանակով նկարված խորաններով, տիտղոսաթերթերով, լուսանցազարդերով և սկզբնատառերով, հետագայում ավելացվել են թերթեր՝ թեմատիկ մանրանկարներով, որոնք նկարվել են գեղանկարչական ոճով: Այդպես ծնունդ է առնում նոր ավանդույթը, որը բնորոշ է դարձել Ղրիմի հայ մանրանկարիչներին, ուր հայտնվել էին Բարձր Հայքի քաղաքներից բերված ձեռագրեր:

Ժ. Գ. դ. վերջին և ամբողջ Ժ. Դ. դ., ինչպես և նախորդ դարաշրջաններում այս նահանգում ստեղծված մանրանկարչական հուշարձաններն աչքի են ընկնում պատրաստման բարձր մասնագիտական մակարդակով, իսկ նրանց ոճը զարգացում է ապրում նոր ժամանակների գեղագիտական չափանիշներին համապատասխան: Նկատենք, որ եթե մեզ հետաքրքրող տարածաշրջանի հին շրջանում պատկերազարդված ձեռագրերի մեծ մասն այս կամ այն չափով հայտնի են առանձին հրատարակություններով, ապա հիշատակված ժամանակին վերաբերող հուշարձանների նշանակալի մասն այստեղ առաջին անգամ է գիտական շրջանառություն մեջ դրվում:

Ա. Ժ. Գ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՒ Ժ. Դ. ԴԱՐԻ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԾԱՆԿԱՐԱՑԻՆ ԱՐՎԵՍՏԸ

Արդեն Ժ-ԺԱ. դդ. հայկական մանրանկարչություն մեջ հանդիպում են գծանկարային նկարազարդումներով ձեռագրեր: Հնարավոր է, որ այսպիսիք գոյություն ունեցած լինեն ավելի վաղ ժամանակներում, սակայն դրանք չեն պահպանվել: Մեզ հասած գծանկարային ոճով արված նկարա-

զարդումներով ամենավաղ ձեռագրերի շարքին են պատկանում Ժ-ԺԱ. դդ թվագրվող «Վազգեն Ա. Վեհափառի» Ավետարանը (Մատ. ձեռ. Հ⁵⁰ 10780)⁵⁰, Վրաստանի

⁵⁰ Ամենայն Հայոց Վազգեն Ա. կաթողիկոսն Ավետարանը 1972 թ. մի անհատից գնել և նվիրել է Մաշտոցյան Մատենադարանին:

Ծղրութ գյուղում գտնվող 974 թ. Ավետարանը, 1038 թ. Ավետարանը (Մատ. ձեռ. Հ^մ 6201) և այլք: Սակայն վաղ շրջանի այդ ձեռագրերի գծանկարային պատկերները իրենց կատարմամբ բավականաչափ պարզունակ են, չնայած գուրկ չեն անմիջականությունից և արտահայտչականությունից. հատկանիշներ, որոնք բնորոշ են ժողովրդական ստեղծագործության հետ սերտորեն կապված արվեստին: Այդ ձեռագրերի մանրանկարները մեծ հետաքրքրություն ունեն նաև իրենց պատկերագրությունը: Նրանց մեջ պահպանվել են քրիստոսաբանական շարքի վաղ խմբագրության նմուշներ, որոնք որոշ դեպքերում շատ ինքնատիպ հորինվածքների տարբերակներ են⁵¹: Ավելի ուշ խոշոր գրչատներում այդ հիմքի վրա ձևավորվում է ավելի նուրբ արվեստ, որը համապատասխանում էր բնակչության բարձր խավի գեղագիտական պահանջներին: Աստիճանաբար ձևավորվում և կայուն համակարգի են վերածվում ձեռագրերի զարդային հարդարման հիմնական սկզբունքները: Եթե խորանները, մասամբ էլ տիտղոսաթերթերն, իրենց կառուցվածքի ընդհանուր ուրվագծով հետևում են վաղ քրիստոնեական արվեստի ավանդույթներին, ապա հայկական ձեռագրերի լուսանցազարդերը և սկզբնատառերն իրենց համանմանը չունեն այլ ժողովուրդների գրչության արվեստի մեջ: Նրանց ընդհանուր ձևերը, զարդերի հիմնական տարրերը, շարադրանքի մեջ տեղադրությունը (գլխավոր ընթերցումների սկզբում), որոնք ձևավորվել էին դեռևս Թ-ԺԱ. դդ., աստիճանաբար կայուն բնույթ և կանոնի ուժ են ստանում: Չնայած զարդանախշի մասերի բազմազանությանը՝ գերակշռում է նրանց համաչափ կառուցման սկզբունքը: Այդ զարդանախշերի գերակշռող տարրերն են մնում արմավիկները, երեքնուկները, պարույրները, հյուսկեն նախշերը, սրածայր մանգաղաձև տերևները, որոնց մասին մենք արդեն խոսել ենք: ԺԳ. դ. սկսած դրանք ստանում են ավելի մշակված տեսք և ինքնատիպ ոճավորում,

⁵¹ Այսպես՝ 1038 թ. Ավետարանում «Պայծառակերպություն» նկարում տեսնում ենք հորինվածքի հազվագյուտ տարբերակ. Մովսեսը պատկերված է տապանի մեջ պարուրված, ինչպես ընդունված էր թաղել մահկանացուներին, մինչդեռ Եղիան պատկերված է քիտոնով և տունիկայով, քանի որ կենդանի մարմնով համբարձվել էր երկինք:

որը շատ բնորոշ է միջնադարյան հայ զարդանկարչությանը: Դրանք արվում էին ինչպես մոնոքրոմ նկարների տեսքով, այնպես էլ գեղանկարչական ոճով: Սակայն առաջին՝ մոնոքրոմ տարբերակը գերակշռուտեղ ուներ հատկապես Բարձր Հայքի գրչատներում: Այդ արվեստը ուսուցանվում էր միջնադարյան դպրոցներում: Կային նույնիսկ գեղագրական հատուկ ժողովածուներ, ուր հավաքված էին ամենատարածված զարդանախշերի նմուշներ, որոնցից մանրանկարիչներն օգտվում էին գլխազարդեր, լուսանցազարդեր և սկզբնատառեր նկարելիս⁵²:

Հ^մ 7599 Ավետարանը, որ գրվել է ամենայն հավանականությամբ ԺԳ. դ. կեսերին, աչքի է ընկնում իր զարդանախշային հարդարանքի գեղեցկությամբ: Ձեռագրի լուսանցքներում, լուսանցազարդերից բացի, կան նաև թեմատիկ մանրանկարներ, ուր պատկերված են ավետարանական տարբեր դրվագներ: Մանրանկարները մեծ վարպետությամբ են նկարված, իսկ ոճով և գծանկարի նրբագեղությամբ կապված են կրիլիկյան արվեստի ավանդույթներին: 112բ էջում (նկ. 49ա) պատկերված է մի պատանի, որը տապարը ձեռքին մագլցում է արմավենու վրա և պատրաստվում է ճյուղեր հատել («Մուտք Երուսաղեմի» պատկերազարդում): 109բ էջում պատկերված է Քրիստոսը մի պատանու օրհնելիս (նկ. 49բ): Լուսանցազարդերի հեղինակը հմուտ նկարիչ է, որը լավ է տիրապետում գծանկարին. լակոնիկ, պլաստիկ կերպով նա ուրվագծում է և՛ գործող անձանց դեմքերը, և՛ նրանց հանդերձանքը, և՛ շրջապատող առարկաների մանրամասները (առաջին մանրանկարում դա արմավենին է): Հետագայում՝ 1335 թ., ձեռագիրը նորոգվել, շարադ-

⁵² Պահպանվել է «Պատկերուսույց» անունով ԺԵ. դ. մի ձեռագիր՝ գեղագրության ձեռնարկ, որը նկարիչների համար ձեռագրերը նկարազարդելու ուղեցույց է: Այստեղ կան և՛ Սուրբ Գրոց առանձին գործող անձանց պատկերներ, և՛ հատվածներ հորինվածքներից, և՛ զարդանախշերի նմուշներ, որոնք օգտագործվել են գլխազարդեր, լուսանցազարդեր և սկզբնատառեր նկարելու ժամանակ: Գեղագրության այսպիսի ձեռնարկներ հավանաբար շատ են եղել, սակայն պահպանվել է դրանցից միայն մեկը (7, 289-293, 348-352, 446-450, 238, ից. 418-443):

րանքը սրբագրվել է, լրացվել են այդ ժամանակ արդեն պակասող էջերը, ինչպես նաև ավելացվել են տիտղոսաթերթերը և ավետարանիչների դիմանկարները: Պահպանվել է ձեռագիրը նորոգող գրչի հիշատակարանը, որից այնպիսի տպավորություն է ստացվում, թե ձեռագիրն ամբողջությամբ նա է ընդօրինակել: Այս դեպքում տեսնում ենք միջնադարում շատ տարածված մի երևույթ, երբ ձեռագրի նորոգումը հավասարազոր է համարվում նրա ստեղծմանը (սրանից զերծ չէր նաև շինարարական գործը): «Յիշեսձիք անարժան և ամենայն մեղօք լցեալ ծառայիս Խաղաղութիւնս⁵³ իրիցուս և իմ ծնողաց և ամենայն արեան մերձաւորացն մերոց... Գրեցաւ ի նեղ և դառն ժամանակիս, ի Ղանութիւն ա[յ]լագգեաց Բուսախտին, ի հայրապետութիւնն մեր տէր Յակոբայ և ի հայոց թագաւորութիւնն Լեւոնայ⁵⁴, ի թվ. 227. (1335)... Գրեցաւ ի Կարնոյ քաղաք, ըն[դ] հովանեաւ սուրբ Ստեփանոսի Նախավկայիս» (26, 270):

1335 թ. ավելացված տիտղոսաթերթերը նույնպես աչքի են ընկնում նկարման վարպետությունը. սրանք վառ արտահայտությունն են ԺԳԺԴ. դդ. սահմանագծին ձևավորված գեղարվեստական հարդարման այն համակարգի, որը հետագայում ստացել է բավական կայուն բնույթ և լայն տարածում: Ոճական տարբերությունների բացառությունը տիտղոսաթերթերի, ինչպես նաև

լուսանցազարդերի ձևավորման այդ համակարգը բնորոշ է դարձել հայկական գրչությունից: Պահպանված է հատկապես Մատթեոսի ավետարանի տիտղոսաթերթը (նկ. 50): Գլխազարդը կազմված է մեզ արդեն ծանոթ զարդանախշից, սակայն սրա ավելի բարդ տարբերակն է: Նրա բազմաթև բացվածքի ներքո աչքի է ընկնում լուսանցազարդի նմանվող շքեղ նախշը: Մատթեոսի ավետարանի «Գ» սկզբնատառը գիրքը ձեռքին հրեշտակ է: Ավանդական դարձած ավետարանիչների խորհրդանիշների տեսքով տիտղոսաթերթերի սկզբնատառերի զարդագրումը տարբեր մանրանկարիչներ տարբեր ձևով էին մարմնավորում: Այս դեպքում հրեշտակը պատկերված է երեք քառորդ դարձվածքով և նկարված է թեթև ու ազատ ոճով: Նրա գեղեցիկ պատանի դեմքը եզրապատված է գանգուր մագերով, հագուստը պատված է մանր ծալքերով և ընդգծում է բարեկազմ, վայելուչ մարմինը: Պլաստիկ գծերով, նույնքան նրբին ոճով արված են զարդանախշերի տարրերը, իրենց նրբագեղությունը աչքի են ընկնում գլխազարդի վերևում դրված թռչունների պատկերները, իսկ Ղուկասի ավետարանի տիտղոսաթերթում դրանք պսակում են էջի աջ դաշտում գտնվող խոշոր սկզբնատառը (նկ. 50ա): Գծանկարի այսպիսի վարպետության առկայությունը ընկալվում է Մատթեոսի ավետարանի անփոխված գրված սկիզբը: Ըստ ամենայնի սկզբնական գրությունը ջնջվել է կամ էլ սխալներով է գրված եղել: Մարկոսի ավետարանի գլխազարդի մեջ ներմուծված են համաչափ տեղադրված և վարպետորեն գծագրված առյուծներ (Մարկոսի խորհրդանիշը), իսկ սկզբնատառ «Ս»-ն կազմված է ավելի սխեմատիկ ձևով պատկերված նույն կենդանիներից: Գրաֆիկական պատկերներով զարդարված այս ձեռագրի էջերն իրենց գծանկարի պլաստիկությամբ և նկարման վարպետությամբ չեն գիշում իրենց ժամանակի կիրիկյան նմուշներին. սա վկայում է Բարձր Հայքում այդ արվեստի զարգացման բարձր աստիճանի մասին:

⁵³ Խաղաղութիւնն անունը մեզանում հազվադեպ է հանդիպում: Հ. Աճառյանը գիտէ միայն երկու հիշատակություն (Ձա, 2, 455). այս անունը հունարեն Սուքրիասի թարգմանությունն է: Հայաստանում, հատկապես արևմտյան շրջաններում, այն հանդիպում է նաև հունական ձևով: Խաղաղութիւնն անունը մեր ձեռագրում հատուկ նշանակություն ունի, եթե հաշվի առնենք, որ այն գրվել է Կարինում, որը 1247 թ. գրեթե ամբողջությամբ ավերվել էր մոնղոլների կողմից, սակայն հետագայում այն նորից վերականգնվեց: Վերականգնված քաղաքում ծնված որդուն ծնողներն անվանել են Խաղաղութիւն, որպեսզի երևույթը հաստատուն մնա այդ հողի վրա:

⁵⁴ Կիրիկիյան Հայաստանի Լեոն արքան է (1310-1342): ԺԳԺԴ. դդ. հայերեն ձեռագրերի մեծ մասի հիշատակարաններում, անկախ գրչությունից, հիշվում են այդ դարաշրջանի հայկական միակ Կիրիկիայի թագավորության արքաների անունները (ամենայն Հայոց կաթողիկոսների անունների հիշատակումը պարտադիր էր):

Գծանկարի ոճով նկարված զարդանախշային հարդարանք ունեցող հաջորդ ձեռագիրը 1332 թ. Ավետարանն է՝ Մատ. ձեռ. Հ⁵⁵ 7630, որը գրվել է Խաղտյաց⁵⁵ գավառի Լորի գյուղում: Ձեռագրի բնագիրն ընդօրինակել են երկու գրիչ՝ Վարդանը և նրա որդի Մելքիսեդեկը: Վարդանը հիշատակարանում պատմում է Բարձր Հայքի գավառների քաղաքական և սոցիալական ծանր վիճակի մասին. «...յաւարտումն ժամի յանբարի ժամանակի և յանլոյս վայրի, որ յամենայն կողմաց նեղ և դառն է ժամանակս, նա ևս առավել տոհմի քրիստովն[է]ից, որ բնաջինջ եղև աւանս մեր...» (26, 249): Այդ գավառի քաղաքներում ու գյուղերում տեղի ունեցած իրադարձությունների մասին տեղեկանում ենք նաև մեկ այլ ձեռագրի հիշատակարանից, որը գրել է իր ժամանակի հայտնի գրիչ Նատերը: Վերջինս ծայր առած խժոժությունների պատճառով ստիպված է եղել ընտանիքի հետ Ղրիմ գաղթել. «Եւ եղև փախուստ ամենայն գավառին, նա և քաղաքին (Կարին – է. Կ.) միահամուռ՝ քրիստոնէից եւ իսմայելաց[ոց] եւ ամենայն բնակչացն ի ձեռաց Բ. իշխանաց, որոց ոչ է պարտ գրել զանուն նոցա» (26, նույն տեղում, 143, 8): Այդ իշխանները, ըստ ամենայնի, այն բազմաթիվ նվաճողներից էին, որոնք, այդ անհանգիստ ժամանակաշրջանում միմյանց փոխարինելով, հաճախ միմյանց դեմ արյունահեղ կռիվներ էին վարում, իսկ այդ կռիվների ամբողջ ծանրությունն ընկնում էր տեղական խաղաղ բնակչության ուսերին:

Մեզ հետաքրքրող Ավետարանը զարդարված է մանրանկարներով, որոնց մի մասը, հատկապես զարդանախշային ձևավորումը (խորանները, տիտղոսաթերթերը, լուսանցազարդերը, զարդագրերը) նկարվել է շարադրանքը գրելու ժամանակաշրջանում: Ձեռագիրն ունի տասնհինգ խորան (երկուսի մեջ եվսեբիոսի նամակն է Կարպիանոսին, հաջորդ երեքում՝ խորանների մեկնության բնագիրը⁵⁶, իսկ մնացածներում՝

համաբարբառը): Բացվածքների գույգ խորանները ավանդաբար նմանատիպ նախշեր ունեն, որոնց առանձին մանրամասները չեն կրկնվում: Խորանների, ինչպես նաև տիտղոսաթերթերի գլխազարդերը զարդարված են բուսական նախշերի տարատեսակներով, որոնց մեջ ներմուծվում են ինչպես իրական, այնպես էլ մտացածին կենդանիների և թռչունների պատկերներ, որոնց խորհրդանշական կողմերի մասին մենք արդեն խոսել ենք: Այսպես՝ գլխազարդերի վերևում պատկերված են հակընդդեմ գույգ հավքեր, որոնք սովորաբար տեղադրված են լինում խաչի երկու կողմերում կամ էլ աղբյուրից ջուր խմելիս: Չնայած որ պատկերները որոշակիորեն ոճավորված են, սակայն թռչունների տեսակները գրեթե միշտ ճանաչելի են: Այսպես՝ 10ա (նկ. 51) էջի գլխազարդի վերևում կա երկու աքաղաղ, որոնք կանգնած են խաչի երկու կողմերում: Խորանի կողմնային մասում, լուսանցազարդի վերևում պատկերված են կաքավներ, որոնք խորհրդանշում են առաքյալներին: Այստեղ ինքնատիպ է պարանոցը ցած հակած ձկնկուլի պատկերը: Ձկնկուլը, ինչպես և թոնձր, ձկնորս թռչուններ են և խորհրդանշում են առաքյալներին՝ մարդկային հոգիների որսորդներին: 7բ էջում տեղադրված մեկ այլ խորանի գլխազարդի վերևում պատկերված է աղբյուր՝ ծարավ հագեցնող սիրամարգերով (հիշենք՝ սիրամարգերը Հին և Նոր կտակարանների խորհրդանիշն են):

Քննվող Ավետարանի խորանները համաբարբառների նկարազարդման արդեն ձևավորված տիպ են: Նրանք աչքի են ընկնում դասական համամասնություններով (գլխազարդը զբաղեցնում է խորանի բարձրության 1/3 մասը), առկա են բոլոր հիմնական բաղադրատարրերը՝ թռչուններ աղբյուրի կամ խաչի երկու կողմերում՝ գլխազարդի վրա, իսկ խորանների եզրային մասերում պատկերված են ծառեր կամ թփեր՝ տարբեր հավքերով, որոնց ընտրությունը նույնպես ենթարկվում է ինչպես հին առասպելների (կենաց ծառ), այնպես էլ Սուրբ Գրքի նշա-

⁵⁵ Խաղտյաց (Խաղտիք, Խաղտյաց Ձոր) գավառի մի մասը Ժ. Դ. դ. առաջին կեսին մտնում էր Սպեր գավառի մեջ, իսկ նրա հյուսիս-արևելյան մասը՝ Տայքի կազմի մեջ (վերջինս Թ. դ. պատկանում էր Վրաց թագավորությանը):

⁵⁶ Բարձր Հայքի մի շարք ձեռագրերում (Երզնկայի Աստվածաշնչում, նկարազարդող Հ⁵⁶ 7862 Ավետարաններում և այլ ձեռագրերում) մեկնության

բնագիրը գրված է ձեռագրի շարադրանքի հետ միասին խորանների մեջ: Իսկ հիմնականում մեկնությունն ավելի ուշ էր գրվում, խորանների հակառակ ազատ էջերում:

նաբանությունն արտացոլող խորհրդանշա-
յին կանոնների: Իրենց զարգանախչերի
բազմազանությամբ, կենդանակերպ կեր-
պարների առատությամբ և բազմազանութ-
յամբ, վստահ պլաստիկ գծանկարի ավար-
տուն և հստակ բնույթով, նկարման բարձր
արվեստով այս մանրանկարները կարելի է
համեմատել կիլիկյան առաջնակարգ հու-
շարձանների հետ:

Հ^Վ 7630 Ավետարանի գծանկարային
նախշերի հետ աղերսվում են Նյու Յորքի
Մորգանի գրադարանի 1334 թ. Ճաշոցի
(Arm. 803) նախշերը: Ս. Տեր-Ներսեսյանը
ուսումնասիրել և մասամբ հրատարակել է
վերջինիս մանրանկարները (234, 1բ), և սա
հնարավոր է դարձնում մեր Ավետարանի
նկարազարդումների հետ նրանց համեմա-
տումը: Երկու ձեռագրում էլ տեսնում ենք
զարգանախչերի համանմանութուն, թռչուն-
ների գծագրման համանման ոճ, երբ փետ-
րավորման մանրամասները բնորոշ կերպով
են մեկնաբանված: Կրկնվում են արտասու-
վոր կերպով կորացված պարանոցներով և
երկար կտուցներով թռչունների (ձկնկուլ-
ների, արագիլների) պատկերները, զարգա-
նախչի առանձին տարրերը, մանրամասների
գծագրման տեխնիկան, որն այդ ժամանա-
կաշրջանում բնորոշ է դառնում. հիմնական
ուրվագծի կողքին նույն գույնով, սակայն
ավելի բաց երանգով ստվերավորում է ար-
վում: Երկու ձեռագրերում նույնատիպ են
նաև գործող անձանց դեմքերը: Այս ձե-
ռագրերն անմիջականորեն համեմատելու
հնարավորություն չունենալով՝ չենք կա-
րող որոշակիորեն եզրակացնել, թե այս
դեպքում արդյո՞ք գործ ունենք նույն վար-
պետի երկու տարբեր ստեղծագործության
հետ, թե՞ սրանք նույն գրչատան երկու
վարպետների գործեր են: Երկուսն էլ գրվել
են Խաղտյաց գավառում (Ավետարանը Լո-
րի ավանում, իսկ Ճաշոցը՝ Վահանաչե-
նում): Ճաշոցի հիշատակարանից⁵⁷ տեղեկա-

նում ենք, որ բնագիրն ընդօրինակել են Ա-
վետարանը գրած գրիչները՝ Վարդանը և
նրա որդի Մելքիսեդեկը: Ավետարանից եր-
կու տարի անց գրված Ճաշոցի ընդօրինակ-
ման գործում Վարդանին օգնել է նրա
մյուս որդին՝ Էլիմելեքը. կա նաև նկարչի
անունը՝ Մկրտիչ:

Ճաշոցի նկարազարդման նմուշ հանդի-
պում է նաև երկու այլ ձեռագրում: Նրան-
ցից հնագույնը 1331 թ. Գլաձորում գրել է
Թորոս Տարոնացին (Երուսաղեմի հայոց
պատրիարքարանի մատենադարանի Հ^Վ 95.
60, 289-301):

Ճաշոցի նկարազարդումներին նմանվող
ավելի ուշ շրջանի երկու ձեռագրերը ծա-
գումով Բարձր Հայքի գրչատներից են՝ ար-
դեն հիշատակված 1334 թ. Ճաշոցը, որ Նյու
Յորքի Մորգանի գրադարանում է և Մա-
տենադարանի Հ^Վ 4519 ձեռագիրը, որ 1361
թ. Սարգիս գրիչը գրել է Երզնկայում (նկ.
52-55):

Երեք ձեռագրում էլ ճշգրտորեն կրկնված
է ձևավորման համակարգը, գծանկարային
նկարազարդումները տեղադրված են շա-
րադրանքի համապատասխան հատվածների
կողքին, ընդ որում, լիովին համընկնում են
ինչպես սյուսթեի ընտրությունը, այնպես էլ
պատկերագրությունը: Մեզ հայտնի է Ճա-
շոցի նման նկարազարդման ավելի վաղ օ-
րինակ, իսկ Բարձր Հայքի վարպետների
համար որպես գաղափար է ծառայել, հա-
վանաբար, Թորոս Տարոնացու նկարազար-
դած ձեռագիրը (Գլաձորի և Բարձր Հայքի
գրչատների միջև գոյություն ունեցող
սերտ կապերի մասին մենք արդեն խոսել
ենք):

Հիշատակված բոլոր ձեռագրերում ավե-
տարանական ընթերցումների շարադրանք-
ներին համապատասխան պատկերված են

⁵⁷ Ճաշոցի հիշատակարանում Վարդան գրիչը
կոչվում է Լորեցի: Սրանից ելնելով՝ Ս. Տեր-Ներ-
սեսյանը եզրակացնում է, որ Վարդանը իր որդի-
ների հետ միասին Բարձր Հայք էր տեղափոխվել
Մեծ Հայքի Տյուսիս-արևելյան մասից, ուր նույն-
պես Լոռի գյուղ կար (238, 654): Սակայն գյուղե-

րի նմանահունչ անունների գրությունը տարբեր
է. Մեծ Հայքի Տյուսիս-արևելյան մասում գտնվող
Լոռի ավանի անվանումը գրվում է «ռ»-ով,
մինչդեռ Խաղտիքի Լորին՝ «ր»-ով: Վարդան գրչի
մականունը՝ Լորեցի է (ոչ Լոռեցի): Քանի որ
Վարդանը Ավետարանը գրել է Խաղտիքի Լորի ա-
վանում, ուստի զարմանալի է, որ Վահանաչեն
տեղափոխված Վարդանը իրեն կոչել է Լորեցի,
այսինքն՝ ծագումով Լորիցի:

Փրկչի երկրային կյանքի հիմնական իրադարձությունները: Այսպես՝ Հովհաննես Մկրտչի գլխատման շարադրանքի կողքին պատկերված է նրա հատված գլուխը՝ սկուտեղի վրա: Ավետարանական տոների շարքից ներկայացված են՝ «Տեառնընդառաջ», «Մուտք Երուսաղեմ», «Ղազարոսի հարությունը», «Հաղորդություն», «Ոտնվա», «Պայծառակերպություն», «Խաչելություն», «Յուզաբեր կանայք», «Համբարձում», «Հոգեգալուստ», «Աստվածամոր ննջումը»: Համեմատաբար քիչ են Հին Կտակարանին վերաբերող թեմաները, որոնց շարքում աչքի է ընկնում «Դանիել մարգարեի տեսիլքի» հորինվածքը: Վերջինս պատկերված է իր «մահճին» նստած, վերևում պատկերված է գահը, որին բազմած է Ծերունին՝ Քրիստոսի կերպարանքով, իսկ ավելի ցած՝ չորս գազանները, որոնք պատկերված են այնպես, ինչպես նկարագրված են մարգարեություն մեջ:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մի հետաքրքիր հանգամանքի վրա. ի տարբերություն մարդկային ֆիգուրների՝ կենդանիների ու տարբեր հրեշների պատկերները բոլոր երեք ձառոցներում աչքի են ընկնում գծանկարի այնպիսի հստակությամբ, պատկերագրություն այնպիսի կայունությամբ, որը հնարավորություն է տալիս ենթադրելու նրանց՝ ավելի վաղ ժամանակաշրջանում ձևավորված նախատիպերի գոյություն մասին: Սրա մեջ դժվար է համոզվել, եթե ուշադիր զննենք բազմաթիվ իրական և մտացածին կենդանիների ու թռչունների պատկերները, որոնք գետեղված են նշված ձեռագրի լուսանկարներում (նկ. 54, 55): Այդ պատկերները որոշակի կապ ունեն նման էակների հետ, որոնք պահպանվել են Աղթամարի տաճարի պատերին, ինչպես նաև սասանյան արվեստի հուշարձաններում: Ի դեպ՝ Աղթամարի տաճարի բարձրաքանդակներում առկա կենդանակերպ մոտիվների սասանյան արվեստի հետ կապի մասին իրենց աշխատություններում խոսել են Հ. Օրբելին (181, նկ. 17, 18, 26 և այլն) և Ս. Տեր-Ներսեսյանը (235, նկ. 28, 29, 32, 36): Նման կենդանակերպ մոտիվները, որոնք կապված են Առաջավոր Ասիայի ժողովուրդների հին առասպելական պատկերացումների հետ, մեծ տարածում են ստացել հիմնականում կիրառական արվեստի բազմաթիվ առարկաների

մեջ, որոնց առևտուրը մեծ ծավալների էր հասնում: Մերձավոր Արևելքի բազմաթիվ ժողովուրդների մշակույթներում սասանյան արվեստից ստացած մեծ արձագանքը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ արվեստն ինքնին ձևավորվել էր այդ մշակույթների սինթեզի հիման վրա: Այդ կապակցությամբ Հ. Օրբելին գրում է. «Բազմաթիվ երևույթներ, որոնք հեշտությամբ կարող են ընկալվել որպես սասանյան արվեստի ազդեցություն այլ երկրների ու այլ արվեստների վրա, իրականում հանդիսանում են այդ ժողովուրդների ավանդը իրականական արվեստի գանձարանին» (181, XXI): Սասանյան արվեստը սնող աղբյուրներից մեկը հին Հայաստանի արվեստն էր: Հին ուրարտացիների ու ասորեստանցիների արվեստից սկիզբ առնող հայկական արվեստը երկար ժամանակ պահպանում էր հնուց եկած առասպելական պատկերացումների արձագանքը ու պանթեիզմի և տոտեմիզմի հետ կապված գաղափարները:

Քննվող ձառոցների լուսանկարներում կենդանակերպ պատկերներից բացի կան նաև թե՛ ընդհանուր, համաքրիստոնեական (մարգարեներ, առաքյալներ, հրեշտակներ), թե՛ ազգային (Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ արքա, Հռիփսիմե, Գայանե սուրբ կույսեր և այլք) զանազան սրբեր: Ի տարբերություն բուսական նախշերի և կենդանիների ու թռչունների պատկերների՝ մարդկանց կերպարների վերարտադրություններն աչքի չեն ընկնում ձևերի և նրանց մշակման կատարելությամբ: Սա վկայում է այն մասին, որ զարդանախշերը և նրանց ուղեկցող կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատկերները, որոնք քրիստոնեական արվեստին էին փոխանցվել հեթանոսականից, նկարվում էին վաղուց ձևավորված կանոններով: Եվ չնայած՝ նրանց իմաստային ընկալումն արմատապես փոխվել էր, պատկերագրությունը համեմատաբար աննշան փոփոխություններ էր կրել: Հայկական ձեռագրերի զարդանախշային հարդարանքի պլաստիկական ավարտունությունն ու կատարելությունը կարելի է բացատրել հենց այդ պատկերների վաղուց ձևավորված և հաստատուն բնույթ ստացած պատկերագրությամբ:

Բարձր Հայքի գրչատներում աշխատող մանրանկարիչների արվեստն ուսումնասիրելու ոչ պակաս հարուստ նյութ է ընձեռում մի այլ ձեռագիր՝ Մատենադարանի Հ^մ 7645 Ավետարանը⁵⁸: Հ^մ 7630 Ավետարանի նման սա ևս ունի գծանկարային, զարդային հարդարանք և հետագայում ավելացված գեղանկարչական ոճով արված թեմատիկ մանրանկարներ:

Ձեռագրի զարդանախշերը նկարված են մեծ վարպետությունով, իսկ նախշերի տեսակները բազմազան են՝ զուլավոր և ծիածանաձև նախշեր, արմավիկներով պարույրներ, ծաղկային զարդանախշի բազում տարբերակներ, բարդ հյուսված նախշեր: Խորանների վերին և կողմնային լուսանցքներում կենդանիների ու թռչունների բազմություն, որոնք երբեմն թառած են ծառերին, երբեմն էլ ճախրում են նրանցից վեր (նկ. 56-57): Հ^մ 7645 Ավետարանի զարդանախշերն աչքի են ընկնում կառուցման ավելի զարգացած և ավարտուն համակարգով, նախշերի առավել բարդությունով, որը թույլ է տալիս ենթադրել, թե այն ավելի ուշ շրջանի գործ է: Զարդանախշային համակարգը վերաբերում է ԺԳ-ԺԴ. դդ. սահմանագծին, իսկ թեմատիկ մանրանկարները՝ ԺԴ. դ. կեսերից ոչ ավելի ուշ, քանի որ այդ դարի վերջին խորանների նկարազարդման ոչ միայն ոճը, այլև նրանց կառուցման սխեման, զարդանախշերի կազմն ու ընտրությունը որոշակի փոփոխություններ են կրում. ոճն ակնառու կերպով կոպտանում է, զարդանախշերն ավելի խոշոր ու պարզունակ են դառնում: Տեղի է ունենում Բարձր Հայքի գրչական արվեստի հարաճուն անկում: Այդ ընթացքն արդեն նկատելի է վերը հիշատակած 1361 թ. Երզնկայում ընդօրինակված Ճաչոցում: Մորգանի

գրադարանի 1334 թ. ձեռագրի ընդօրինակությունը հանդիսանալով՝ 1361 թ. Ճաչոցը նրա ավելի կոպիտ և սխեմատիկ կրկնությունն է: Սա վերաբերում է ինչպես բնագրի գրությունը, այնպես էլ նկարազարդումներին, որոնք, ըստ ամենայնի, արել են գրիչները:

Առանձնահատուկ հետաքրքրություն ունեն 1380 թ. Խաղտիքի Խաղ մենաստանում գրված Ավետարանի (Մատ. ձեռ. Հ^մ 7862) գծանկարային պատկերները: Ձեռագիրը սկսվում է տասնչորս խորաններով, որոնք եկեղեցական կանոնական արվեստի մեջ ժողովրդական ստեղծագործության տարրերի ներթափանցման վառ օրինակ են: Սա արտահայտված է զարդանախշերի զարմանալի առատություն ու բազմազանություն և հենց նրանց բնույթի մեջ (նկ. 58-61): Խորաններում նախազարդ են ոչ միայն գլխազարդերը, այլև սյուներն ու նրանց հիմքերը: Խորանների ճարտարակերտության հետք իսկ չի մնացել, ամեն ինչ ենթարկվում է ինքնատիպ, գուտ ժողովրդական զարդանախշմանը: Այս էջերը հիշեցնում են գորգեր կամ ասեղնագործ սիւնոցներ ու վարագույրներ: Խորանների բացառիկ մեծ քանակը (14) պայմանավորված է նրանով, որ համաբարբառներից բացի նրանց մեջ տեղադրված են ոչ միայն Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին, այլև Ստեփանոս Սյունեցու Խորանների մեկնության բնագիրը (4 էջ):

ԺԴ. դ. վերջին շատ ձեռագրեր զարդարվում են գեղանկարչական ոճով արված զարդանախշերով (նույնպես և թեմատիկ նկարները): Այդ ժամանակաշրջանում նկատվող գրչության արվեստի համեմատական հետընթացը արտացոլվում է կատարողական վարպետության աստիճանական անկման, նախշերի տեսակների ավելի սահմանափակ ընտրության մեջ. սրանք դառնում են ավելի սխեմատիկ և միապաղաղ: Կյանքի փոփոխված պայմանները, ազատության և անկախության հարաճուն կորուստը հանգեցնում են քաղաքական և սոցիալական ճգնաժամի և, բնականաբար, տեղական հայկական բնակչության մշակութային գործունեության կրճատման:

⁵⁸ Ձեռագրի գլխավոր հիշատակարանը չի պահպանվել: ԺԹ. դ. Ավետարանը գտնվում էր Ղրիմում, և որոշ անուղղակի տվյալներ այն կապում են Ղրիմի հայկական գաղթածների հետ (33, 145): Սակայն ձեռագրի ամբողջ գեղարվեստական ձևավորումն այնքան է կապված Բարձր Հայքի մանրանկարչության ավանդույթների հետ, որ այստեղ կարելի է երկու ենթադրություններ անել. ա) ձեռագրի ընդօրինակվել է նշված նահանգի գավառներից մեկում, հետո՝ տարվել Ղրիմ, բ) Ղրիմում աշխատել են Բարձր Հայքից եկած վարպետներ:

**Բ. ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ,
ՈՐՈՆՔ ԱՐՏԱՑՈՒԼ ԵՆ ՊԱԼԵՈԼՈԳՅԱՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ
ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ**

Հայկական մանրանկարչության մեջ պալեոլոգյան վերածննդի ավանդույթների արտացոլման հարցը քննելիս մինչ այժմ վկայակոչում էին ԺԴ. դ. առաջին կեսին Ղրիմի հայկական գաղթօջախում ստեղծված գեթ երկու հայկական ձեռագիր՝ 1332 թ. Սուրխաթի (այժմ՝ Ստարի Կրիմ) Ավետարանը՝ Մատ. ձեռ. Հ⁵⁹ 7664⁵⁹ և նրան նման մի այլ Ավետարան՝ Վիեննայի ձեռագրատան հավաքածուի Հ⁵⁹ 242, որի տեղորոշումն ու թվագրումը ճշտվել են առաջինի հետ համեմատության հիման վրա (228): Սրանց պետք է ավելացնել գրչության արվեստի ևս մի քանի հուշարձան, որոնք նույնպես կապվում են պալեոլոգյան արվեստի հետ: Այդ ձեռագրերը ստեղծվել են Բարձր Հայքի գրչատներում, որոնց գծանկարային հարդարանքի մասին արդեն խոսել ենք նախորդ գլխում (Մատենադարանի ձեռ. Հ⁵⁹ 7630, 7599, 7645, 4080, 4059 և այլն): Ի տարբերություն խորանների և տիտղոսաթերթերի՝ այդ ձեռագրերի ավետարանիչների դիմանկարները և թեմատիկ մանրանկարները արված են բազմագույն, գեղանկարչական ոճով, ընդ որում՝ որոշ ձեռագրերում այդ մանրանկարները գրչության ժամանակի չեն, հետագայում են ավելացվել: Եթե Ղրիմի վերը հիշատակված երկու Ավետարանները արտացոլում են պալեոլոգյան ոճն իր «մաքուր» տեսքով, քանի որ դրանցից մեկն ընդօրինակվել է անմիջականորեն հունական գաղափարից, իսկ երկրորդի նկարազարդմանը, ըստ Հ. Բուշահուզենի ուսումնասիրության (144), մասնակցել են հույն վարպետներ, ապա Բարձր Հայքի ձեռագրերը բնորոշվում են գեղարվեստական տարբեր ոճերի և ուղղությունների յուրօրինակ համադրությամբ: Նրանց մեջ

բնականոն ձևով միաձուլված են տեղական արվեստի ավանդույթները և այն ամենը, ինչ ընդունվել էր կլիլիկյան և պալեոլոգյան գեղանկարչությունից: Օգտվելով տարբեր գաղափարներից, ծանոթանալով իրենց ժամանակակից գեղանկարչության տարբեր հուշարձանների՝ այդ տարածաշրջանի նկարիչները տեսածը համապատասխանեցնում էին իրենց միջավայրի և ժամանակի գեղագիտական պահանջմունքներին: Փաստորեն, գործ ունենք հայկական մանրանկարչության մեջ մինչ այժմ չուսումնասիրված գեղարվեստական ուղղության հետ, որի ամենավաղ արտահայտություններին հանդիպում ենք Բարձր Հայքի հուշարձաններում: Հենց այդ նահանգի գրչատներում են ստեղծվել մի շարք հետաքրքիր ձեռագրեր, որոնց նկարազարդումների մեջ արտահայտվել են մանրանկարչական տարբեր դպրոցների գեղարվեստական ավանդույթները: Ընդունելով մի կողմից՝ պալեոլոգյան արվեստի լուսաստվերային նուրբ մոդելավորումն ու թեթև գեղանկարչությունը, նրան հատուկ ձևերի ծավալային լուծման ձգտումով, իսկ մյուս կողմից էլ՝ կլիլիկյան վարպետների արվեստին հատուկ ճոխ գարդային ձևավորման ինքնատիպությունն ու անհատականացված կերպարներ ներկայացնելու ունակությունը՝ նրանք, այդուհանդերձ, պահպանել են նաև տեղական ավանդույթների առանձնահատկությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտել պատկերավոր անհատների տիպաժներում, նրանց ֆիգուրների խոշոր չափերի, սրանց կեցվածքի հանդիսավորության, որոշ կոթողայնության, տեղական պատկերազրույթյան նորմերին հարազատ մնալու մեջ: Այդ խմբի ձեռագրերն առանձնանում են նաև կոլորիտի առանձնահատկություններով. որոշ չափով մեղմացված գույների դամբալում գերակշռում են մուգ կապույտ և մուգ կարմիր երանգները: Մի շարք ձեռագրերի մանրանկարներում կարելի է նկատել, թե ինչ հմտությամբ է նկարիչը նրբերանգներն օգտագործել մարմնի բաց մասերը (դեմքերը, ձեռքերը, նաև՝ «Մկրտություն» և «Խաչելություն» տեսարաններում

⁵⁹ Պալեոլոգյան վերածննդի հուշարձանների հետ 1332 թ. Ավետարանի մանրանկարների կապն առաջինը մատնանշել է Ա. Սվիրինը (197). այս տեսակետը պաշտպանել են Ս. Տեր-Ներսեսյանը (243), Վ. Լազարևը (149) և Լ. Դուրնովան (121): Այս հեղինակները հրատարակել են այդ ձեռագրի առանձին մանրանկարներ (տե՛ս նրանց նշված աշխատությունները, նաև՝ մեր «Ղրիմի հայկական մանրանկարչությունը» գիրքը (143):

Քրիստոսի մերկ մարմինը) պատկերելիս: Ինքնատիպ է մեկնաբանված գործող անձանց հանդերձանքը՝ խոշոր, ազատ թափվող ծալքերով, ինչը մեզ ծանոթ է այդ նահանգի ավելի վաղ շրջանի մանրանկարչական հուշարձաններից: Հայկական մանրանկարչությունից այդ նոր ուղղությունը առավել վառ նմուշների շարքում են վերը նշված ձեռագրի թեմատիկ մանրանկարները, ընդ որում՝ սրանց մի մասում այդ մանրանկարներն ավելացվել են ձեռագրի ընդօրինակությունից քիչ անց: Այսպես՝ 1332 թ. գրված Հ⁵⁶ 7630 Ավետարանին երեք տարի անց ավելացվել են ավետարանիչների դիմանկարները, իսկ Կարպիանոսին ուղղված Եվսեբիոսի նամակը պարունակող առաջին երկու խորանների գլխազարդերում տեղադրվել են վերջիններիս դիմանկարները մեղալիոնների մեջ (նկ. 62ա, 62բ): Այդ դիմանկարները նկարված են գլխազարդերի վրա և խախտում են նրանց նախշերը: Մեղալիոնները բավական մեծ են և դուրս են գալիս գլխազարդի շրջանակներից: Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարները շատ արտահայտիչ են, իսկ դեմքերը՝ գեղեցիկ: Նրանք պատկերված են նուրբ գունային երանգավորման սկզբունքի կիրառմամբ, իսկ ցուլքերի և ստվերումների հմուտ իրագործումը ծավալայնության պատրանք է ստեղծում: Ավետարանիչները պատկերված են բարդ ճարտարապետական կառույցների հենքի վրա: Այսպես՝ Մատթեոսի ետևում վեր են խոյանում եկեղեցական երկու շինություններ՝ բավական բնական պատկերված քարե որմածքով (նկ. 63): Չախ կողմի շինությունը լուսամուտը ճաղապատ է, և սա մանրանկարին տալիս է որոշակի կենցաղային երանգ: Շինությունների տանիքների միջև ձգված է ավանդական վելումը: Չնայած թե՛ ավետարանիչներին և թե՛ նրանց շրջապատող աշխարհն ավելի բնական պատկերելու մանրանկարչի ձգտմանը, այդուհանդերձ, նա կրկին շատ մեծ տեղ է տվել զարդանախշերին: Այն բնականոն կերպով ներգծվում է ճարտարապետական ձևերի որոշ մանրամասների մեջ և ամբողջովին ծածկում է ավետարանչի բազկաթոռի թիկնակը: Մանրանկարի գեղարվեստական հարդարման մեջ հատուկ ուշադրություն է դարձված ավետարանչի հանդերձանքի ծալազարդարանքներին: Նկարիչը մեծ սիրով է պատկերել նրա հագուստի լայն և ազատ

թափվող ծալքերը՝ օգտագործելով մի գույնի տարբեր երանգները: Խոշոր ծալքերի բարդ հեղեղով հարաշարժություն պատկերելու հակումը, ինչպես տեսանք, բնորոշ է նաև ավելի վաղ հուշարձաններին: Սակայն Ժ. Դ., երբ ստեղծվել են քննվող մանրանկարները, ոչ միայն ծալազարդարանքների մեկնաբանությունը, այլև արտահայտչական ամբողջ ոճը այլ երանգ են ստացել: Պալեոլոգյան գեղանկարչության ազդեցությունների ներքո նկատելի է դառնում նոր գեղարվեստական ձևերի որոնումը: Նման երևույթները հատկանշական էին այդ դարաշրջանի քրիստոնեական աշխարհի շատ շրջանների գեղանկարչությանը: Ժ. Դ. ուսական գեղանկարչության մեջ նման ընթացքների մասին Օ. Պոպովան գրում է. «Այդ դարաշրջանի գեղանկարչության մեջ հանդերձանքների ծալազարդարանքների բարդացված պատկերումը նմանվում է հորինվածքներում ծավալայնության որոնմանը» (191, 92): Նման միտումներ նկատվում են նաև այդ ժամանակաշրջանի հայկական մանրանկարչության մեջ, հատկապես՝ Արևմտյան Հայաստանի նահանգներում: Փոփոխվում են նաև մանրանկարների ետին պլանում պատկերվող ճարտարապետական շինությունները, որոնց ձևը, համամասնությունները ավելի ու ավելի են մերձենում իրական եկեղեցական շինությունների ձևերին և համամասնություններին: Որոշ չափով անսովոր է Մատթեոս ավետարանչի կեցվածքը. նրա մարմնի վերին մասն ու գլուխը պատկերված են երեք քառորդ դարձվածքով, մինչդեռ ստորին մասը՝ առջևից: Դա վկայում է մարդկային մարմինը ներկայացնելու նոր ձևերի որոնման, այն շարժման մեջ պատկերելու ձգտման մասին, որ նույնպես պալեոլոգյան արվեստի ազդեցության հետևանք է: Վերջինիս ազդեցությունը զգացվում է նաև լուսավորումներում (գունաստվերային մշակման մեթոդով, որի մասին վերը խոսել ենք): Սրա շնորհիվ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ձևերը լուսաստվերային մշակման են ենթարկվել: Դրա հետ միասին, հատկապես ետին պլանի առանձին մանրամասներ շարունակում էին պատկերվել պայմանական հարթանկարային ոճով: Այստեղ տեսնում ենք երկու տարբեր՝ հարթանկարային և ծավալային, պայմանական ու իրական հնարքների ինքնատիպ կիրառում,

որը պերճախոս կերպով վկայում է գեղանկարչուցանության նոր եղանակների կողքին հարատևող հին ավանդույթների կենսունակութան մասին:

Նման, սակայն ավելի դինամիկ կեցվածքով է պատկերված Մարկոս ավետարանիչը (նկ. 64): Այստեղ ևս տեսնում ենք բարդ ճարտարապետական հենք, միայն այն տարբերությամբ, որ աջ կողմում եկեղեցու փոխարեն թեթև ոտտոնդա է պատկերված: Մարկոսը նստած է մտքերի մեջ խորասուզված և պատրաստվում է սրել ձեռքի գրչածայրը, իսկ մյուս ձեռքը պարզել է դեպի սեղանին դրված դանակը: Այս մանրանկարն աչքի է ընկնում ինչպես գծանկարի, այնպես էլ գունային հակադրությամբ: Ղուկաս ավետարանիչն պատկերող մանրանկարը վատ է պահպանվել, ներկը տեղ-տեղ թափվել է, սակայն, չնայած դրան՝ աչքի է զարնում մանրանկարչի վարպետությունը, որն ազատորեն կիրառում է տոնային երանգավորման եղանակը (նկ. 65):

Ձեռագիրը վնասված է: Էջերի ստորին և կողմնային լուսանցքներին խոնավություն հետքեր կան: Հիշատակարանում Գրիգորիս քահանան հայտնում է դրա պատճառը. «Թվին ՌՃԱ. (1652) մեծ անձրեւ ելաւ ի մայիսին ԻԴ. (24). ի տաճարն Ս. Յովհաննիսին այս սուրբ Աւետարանս ի կաթիլքին ի տակն մնաց, ամէն ի շրջայպատ ջուր էր անցել: Ետու ես՝ մեղաւոր եւ հողոյ հաւասար Գրիգոր էրէցս... պէտ արաք, այսչափ լէքէս մնաց ի լուսանցքն՝ վասն իմ ծովացեալ մեղացն, եղբա՛րք...» (44ա, 478. Մատ. ձեռ. Հ^Յ 7630, 322բ):

Շատ ուշագրավ են մի այլ ձեռագրի՝ Կարնո ավետարանի (Մատ. ձեռ. Հ^Յ 7599) ավետարանիչների դինամիկարները: Այս ձեռագրի գծանկարային զարդանախշերի մասին մենք արդեն խոսել ենք: Ձեռագրին ավելի ուշ հավելված ավետարանիչների դինամիկարները նկարել է վառ անհատականություն ունեցող մի տաղանդավոր նկարիչ: Այստեղ ևս ավետարանիչները պատկերված են բարդ ճարտարապետական հենքի վրա: Ծաղկողն աշխատել է դրանք նմանացնել իրական շինությունների: Այսպես՝ Մարկոս ավետարանիչի դինամիկարի (նկ. 66) ետին պլանում պատկերված շինությունները

մեկը հիշեցնում է հայկական ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոցը, իսկ երկրորդը վերարտադրում է բարձր զանգակատնով հայկական եկեղեցիների ավելի տարածված տիպը (նկ. 67): Մարկոսի դինամիկարն արված է մեծ վարպետությամբ. նա պատկերված է դիմահայաց, միայն գլուխն է թեթևակի դեպի ձախ թեքել, նրա գեղեցիկ դեմքը երիզված է գանգուր մագերով, մարմինը համաչափ է, համամասնությունները՝ ճշգրիտ: Աչքի է զարնում բարդ, դինամիկ և նուրբ պատկերված ծալազարդարանքներով հանդերձանքը: Ղուկասը պատկերված է երեք քառորդ դարձվածքով. նրա աջ կողմում եկեղեցի է՝ բարձր թմբուկի վրա հանգչող գմբեթով, իսկ ձախ կողմում՝ երկհարկ աշխարհիկ շինություն նմանակում (նկ. 68):

Ամենահաջողվածը Հովհաննես ավետարանիչի դինամիկարն է: Պրոխորոսի պատկերը չկա (սա պայմանավորված է ավելի ուշ շրջանի ավանդույթով): Ձախ կողմում՝ երկնքի հատվածում, Աստուծո աջի փոխարեն պատկերված է նրա պատվիրակի՝ Իջնող հրեշտակի կիսամարմինը (նկ. 69): Հովհաննեսը պատկերված է ոչ թե Պատմոս կղզում, այլ եկեղեցական շինությունների հենքի վրա: Աչքի են ընկնում ավետարանիչի գեղեցիկ, նրբագեղ դեմքը, նուրբ նկարված ձեռքերը, հանդերձանքի փափուկ ծալքերը: Հովհաննես ավետարանիչի դինամիկարի պատկերագրությունը նմանվող օրինակներ կարելի է տեսնել կիլիկյան մի շարք ձեռագրերում, որոնցից մեկը կարող էր գաղափար ծառայած լիներ մեր վարպետի համար (օրինակ՝ Սմբատ Սպարապետի Ավետարանը, Հովհաննես արքեպիսկոպոս ԺԳ. դարի Հ^Յ 345 Աստվածաշունչը և այլն):

Հաջորդ ձեռագիրը, որի նկարագրողությունները պատկանում են հուշարձանների այս խմբին, Մատենադարանի Հ^Յ 7645 Ավետարանն է: Այս ձեռագրում տեսնում ենք գծանկարային ոճով արված հարդարանքի և գեղանկարչական ոճով թեմատիկ մանրանկարների համադրություն, այն տարբերությամբ, որ վերջիններս հետագա հավելում չեն, այլ ձեռագրի գրչություն ժամանակա-

կից են⁶⁰: Զեռագիրը, ամենայն հավանականությամբ, նկարագարողել են չորս մանրանկարիչ: Նրանցից մեկը, անկասկած, գրիչն է, որը արել է նաև ձեռագրի գծանկարային ողջ հարդարանքը: Ինչ վերաբերում է թեմատիկ մանրանկարներին և ավետարանիչների դիմանկարներին, ապա նրանց մեջ զգացվում է երեք մանրանկարչի ձեռք. երկուսի անունը հայտնի է՝ Առաքել և Հովհաննես և պահպանվել է Մատթեոս ավետարանչի նկարի (նկ. 70) ստորին լուսանցքի հիշատակագրությունում մեջ. «Յիշեցէ՛ք ի Տէր զպատուելի քահանայն զՄաթէոս, որ ըղձայփափաք սիրով և ետ ծաղկել զՍուրբ Աւետարանս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ ծնաւդաց իւրոց, զոր Տէր Աստուած վայելեալ տացէ և նմա բազում ժամանակս. ամէն: Եւ զիս՝ զԱռաքել և զՅովաննէս ծաղկաւղ[ք]ս՝ [զանպիտանս] եւ զմեղապարտս աղաչեմ յիշել ի Տէր»: Այստեղ Հովհաննեսի անունը ջնջած է, սակայն ընթերցվում է, իսկ «ծաղկողքս» բառում ջնջված է «ք»-ն: Քանի որ այս հիշատակագրությունում մեջ Հովհաննեսի անունը ջնջված է, ապա կարելի է ենթադրել, որ դրա հեղինակն Առաքելն է: Այդ մանրանկարչին պատկանում են երեք մանրանկար ևս. Մարկոս և Ղուկաս ավետարանիչների դիմանկարները, ինչպես նաև «Զաքարիայի ավետման» տեսարանը (նկ. 71, 72): Այս չորս մանրանկարներն արված են մեծ վարպետությունով և, ըստ ամենայնի, Առաքելն այն արվեստանոցի գլխավոր նկարիչն էր, ուր ստեղծվում էր այս Ավետարանը: Առանձին-առանձին ուսումնասիրենք յուրաքանչյուր մանրանկարը:

Մատթեոս ավետարանիչը պատկերված է նախորդ ձեռագրերից մեզ ծանոթ կեցվածքով՝ նրա մարմնի վերևի մասը թեթևակի աջ է դարձած, իսկ ոտքերը պատկերված են առջևից: Ավետարանչի դեմքը գեղեցիկ է. նրա խոշոր, արտահայտիչ աչքերն ընդգծում են թավ կամարածև հոնքերը, քիթը

ուղիղ է, բարակ, նրբորեն նկարված մազերը եզրապատում են նրա լայն, լուսավոր ճակատը: Մանրանկարի գեղարվեստական կերտվածքի մեջ մեծ դեր ունեն ավետարանչի հանդերձանքի ծալագարդերը: Նրա մարմինը պարուրող խոշոր, ծանր ծալքերը ընդգծում են այն: Նկարիչն ակնհայտ հաճույքով է պատկերել հեղեղի պես թափվող այդ ծալքերը՝ հմտորեն զուգորդելով մի գույնի տարբեր երանգները: Լուսավորումների, ցուլքերի և նրանց հակադրվող ստվերավորումների շնորհիվ ավետարանչի մարմինը կարծես քանդակված լինի: Նրա թիկունքում բարդ ճարտարապետական շինություններ են. ճախից պատկերված է լավ երևացող քարե որմածքով շենք, իսկ աջից՝ բարձր ռոտոնդա, որի հիմքը պատված է զարդանախշերով: Զգտելով վերարտադրել շինությունների ծավալը, նկարիչը, լուսավորման տեխնիկայից բացի, կիրառել է հետաքրքիր մի հնարք. ետին պլանում սյուների վրա հանգչող ռոտոնդան պատված է միագույն կետերով, որոնք սկզբում բաց են (համարյա սպիտակ), իսկ հետո, աստիճանաբար մգանալով, դառնում են գրեթե սև: Այսպիսով, նկարիչը ձևերի ծավալային լուծման պատրանք է ստեղծում. ռոտոնդայի գմբեթը կլոր է թվում, կարծես մի կողմից լուսավորված լինի, իսկ այդ հնարքի ավելի ինտենսիվ կիրառումը սյուների պատկերման ժամանակ որոշակի շինարարական նյութի՝ մարմարի, ֆակտուրայի պատրանք է ստեղծում (նկ. 70): Միաժամանակ, հենքի մանրամասները՝ ավետարանչի թիկունքի պատը, գրասեղանի ստորին մասը, որոնք զարդանախշերի են վերածվում, նկարված են պայմանական, հարթանկարային ոճով: Տարբեր գեղանկարչական հնարքների համադրությունն այդ ժամանակաշրջանի առանձնահատկություններից է:

Նկարչի վարպետությունն առավել վառ է արտահայտվել Մարկոս ավետարանչի հանդերձանքի բարդ ծալքերի պատկերման մեջ: Այդ ծալքերն, արտասովոր կերպով ուղորդելով, նրբորեն պարուրում են նրա մարմինը, և միայն ծայրն է ազատորեն իջնում ուսն ի վար: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել երկար, ճկուն մատներով

⁶⁰ Զեռագիրը թերի է. Հովհաննեսի ավետարանի բնագրի կեսը չկա, պարզել ենք, որ կորած բնագրի զգալի մասը և նրան վերաբերող մանրանկարներն առկա են որպես առանձին պատանիկ (Մատ., ձեռ. Հ^մ 9202):

դաստակներին, որոնցով նա կարծես թերթում է տետրը, ուր պատրաստվում է գրանցել իր գիրքը (նկ. 71):

Առաքելի ամենահաջողված մանրանկարը «Զաքարիայի ավետումն» է: Ներկերը տեղ-տեղ թափվել են, սակայն նկարի առանձին հատվածներ, մասնավորապես՝ դեմքը և նուրբ գծագրված դաստակները, լավ են պահպանվել: Զաքարիան, ձեռքը մորուքին տարած, ապշահար և զարմացած նայում է երկնային պատվիրակի հայտնությունը (նկ. 72): Այստեղ ևս տեսնում ենք Առաքելին բնորոշ գեղեցիկ դեմքեր, թավ հոնքերի կամարներով ընդգծված խոշոր աչքեր: Սովերումների և լուսավորումների միջոցով նկարիչը ծավալային լուծման տպավորություն է ստեղծել:

Քննվող Ավետարանի մանրանկարների մեծ մասը պատկանում է երկրորդ նկարիչ Հովհաննեսի վրձինն (ուժ անունն էր ջնջված Մատթեոսի մանրանկարի հիշատակագրության մեջ): Մատթեոսի ավետարանի շարադրանքի մեջ պահպանվել են նրա չորս մանրանկարները՝ «Մկրտություն», «Խորհրդավոր ընթրիք», «Աղոթք Գեթսեմանիում», «Դժոխքի ավերումը». Մարկոսի ավետարանում՝ «Պայծառակերպություն», «Մուտք Երուսաղեմ». Լուկասի ավետարանում՝ «Ծնունդ», «Մուտք Երուսաղեմ» (նկ. 73-76): Այս նկարչի վրձինն է պատկանում նաև Հովհաննես ավետարանչի դիմանկարը. ընդհանուր առմամբ ինը նկար:

Չնայած որ Հովհաննեսի մանրանկարները վարպետության առումով գիշում են Առաքելի նկարներին, սակայն աչքի են ընկնում պատկերված կերպարների ինքնատիպությունը: Նրանց գեղեցիկ, սակայն փոքրինչ անսովոր դեմքերն աչքի են ընկնում զարմանալի քնարականությամբ: Աչքերի վրա մի քիչ բարձր տեղադրված հոնքերը նրանց տխուր անընկալություն են հաղորդում: Դիմագծերը, դաստակները, ոտքերի թաթերը եզրապատված են պլաստիկ, կարմրին տվող մուգ գծերով:

Տեսարանների մեծ մասը ներկայացված է դասական, կանոնիկ տարբերակներով, սակայն աչքի են ընկնում նկարման ինքնատիպ ոճով, որն առանձնանում է իր նրբա-

գեղությունը: Այդ նրբագեղությունը նկատվում է ոչ միայն դեմքերի գծագրության մեջ, այլև կահավորանքի, ծալազարդարանքների, ճարտարապետական հենքի մանրամասներում:

Այս ձեռագրում, ուր ոսկի չի օգտագործվել, ավետարանիչների ու առաքյալների լուսապսակները տարբեր գույների են՝ դեղին, կարմիր, կանաչ: Լուսապսակների նման գունավորումը բնորոշ է ԺԳ-ԺԴ. դդ. քրիստոնեական բազմաթիվ հուշարձանների: Այդ ոճը փոխ են առել նաև Բարձր Հայքի և հայկական գաղթօջախների մանրանկարիչները: Այն բնորոշ է նաև մի շարք վրացական հուշարձանների:

«Պայծառակերպություն» ու «Մուտք Երուսաղեմը» Հովհաննեսի ամենահաջողված մանրանկարներն են: Գործող անձանց վերը նշված քնարական երանգ ունեցող ինքնատիպ կերպարներն այստեղ վարպետը պատկերել է բացառիկ արտահայտչականությամբ: «Պայծառակերպության» տեսարանում (նկ. 75) առանձնահատուկ տպավորություն է գործում Հիսուսի կերպարը՝ իր ոգեշունչ, մեծ և գեղեցիկ աչքերի արտահայտությամբ: Նա պատկերված է վառ փառապսակով, և նրա կերպարն ավելի խոշոր է, քան հորինվածքի մնացած գործող անձանց ֆիգուրները: Սա միջնադարում շատ տարածված հնարք էր. այս եղանակով ընդգծվում էին իմաստային առումով կարևոր կերպարները: «Մուտք Երուսաղեմ» հորինվածքում Քրիստոսին հետևում են երեք առաքյալ, որոնք պատկերված են որպես տարբեր տարիք ունեցող մարդիկ՝ պատանի, հասուն մարդ և ծերունի (նկ. 76): Ծառերից ճյուղեր հատող և իրենց հագուստը գետնին փռող դեռահասները, ինչպես նաև զառամյալ ծերունին (Քրիստոսին դիմավորող Երուսաղեմի բնակիչի կերպարը) լրացնում են տարիքային կարգերը: Նկարիչը մանրակրկիտ կերպով պատկերում է գործող անձանց՝ նուրբ, պլաստիկ ձևով գծագրելով նրանց դեմքերը, ձեռքերը, հագուստների ծալքերը:

Այս ձեռագրի մնացած թեմատիկ մանրանկարները պատկանում են մեկ այլ ման-

րանկարչի վրձինն, որի անունն անհայտ է մնացել (հնարավոր է, որ այն նշված էր չպահպանված հիշատակարանում): Վարպետության առումով նա գիջում է Առաքելին ու Հովհաննեսին: Հնարավոր է, որ նա նրանց աշակերտն էր: Այստեղ նա հեղինակել է երկու մանրանկար՝ «Համբարձում» և «Ոտնվա»: Մեր հայտնաբերած՝ այս ձեռագրին պատկանող Հովհաննեսի ավետարանի պատառիկում պահպանվել են անանուն մանրանկարչի ևս երեք մանրանկար՝ «Խաչելութուն», «Թովմասի անհավատությունը» (նկ. 77) և «Հոգեգալուստ»: Այս նկարչի աշխատանքը զգալի կերպով տարբերվում է Առաքելի ու Հովհաննեսի աշխատանքներից: Եթե վերջիններիս ստեղծագործություններում նշանակալի դեր ունի ուրվագիծը, ապա անանունի մոտ մենք տեսնում ենք նկարման ավելի գեղանկարչական եղանակ: Նրբերանգների միջոցով մի գույնից մյուսին մեղմ անցումները լուսաստվերային մոդելավորման հնարքով ծավալային մեկնաբանություն պատրանք են ստեղծում: Մանրանկարների ետին պլանը նա պատում է կապույտ գույնով: Տարբերվում են նաև շրջանակները, որոնցով անանունը եզերում է իր մանրանկարները: Սրանք պարզ, առանց զարդանախշերի կարմիր շերտեր են: Անանուն նկարչի մանրանկարներն աչքի են ընկնում իրենց պատկերազարդությամբ: Այսպես՝ «Ոտնվան» ներկայացված է երկհարկ հորինվածքով, որի վերին մասում՝ հովանու տակ, պատկերված են իրենց ոտնամանները հանող առաքյալները, իսկ ներքևում՝ աշակերտների ոտքերը լվացող Քրիստոսը: Արտառոց է «Հոգեգալստի» հորինվածքը: Թերթը երկու կամարով բաժանված է երեք կիսագնդերի. ներքևում, ուր սովորաբար պատկերվում են ժողովուրդը կամ արքա-տիեզերքը, ամբողջ տարածությունը պարզապես ներկված է բաց կապույտով, միջին մասում ներկայացված են առաքյալները, իսկ վերինում՝ «Նախապատրաստված գահը»: Չնայած նկարչի ոճի որոշակի մեղմությունն ու գեղանկարչականությունը, ծավալայնությունը տպավորություն ստեղծելու ունակությունը՝ միշտ

չէ, որ նրան հաջողվում է հորինվածքի մեջ ճիշտ տեղադրել ֆիգուրներն ու մանրամասները: Այսպես՝ «Խաչելության» մեջ շարդարացված շատ տեղ է հատկացված խաչի վերին մասին, որի երկու կողմում պատկերված են Արևի և Լուսնի մարմնավորումները, մինչ հորինվածքի ստորին մասը ծանրաբեռնված է ֆիգուրներով. խաչված Քրիստոսի աջ կողմում պատկերված են Մարիամն ու Հովհաննեսը, իսկ ձախում՝ Փրկչի կողք խոցող Ստեպատոնն է: Նույնքան անհամամասն է բաժանված «Հոգեգալուստի» հորինվածքը: Միայն «Համբարձումն» է համապատասխանում դասական պատկերազրահան ուրվագծին:

Քննվող մանրանկարներին հարում են Հ^ն 4080 Ավետարանի մանրանկարները: Զեռագիրը գրվել է 1291 թ., հավանաբար Կիլիկիայում, քանի որ հիշատակարանում նշվում է կիլիկյան ձանձու ամրոցը, ուր կատարվել է ձեռագրի գծանկարային հարդարանքը: Հավանաբար Ժ. Դ. սկզբին ձեռագիրը հայտնվել է Խաղտիքում, ուր և նորոգվել է: Խորանների մեջ գրվել են համարաբառները և ավելացվել են թերթեր՝ թեմատիկ մանրանկարներով և ավետարանիչների «դիմանկարներով»: Մանրանկարները վնասվել են ոչ միայն ժամանակից, այլև թղթի ու ներկերի վատորակությունից, և այդ պատճառով հնարավոր է սրանք լուսանկարել: Սակայն ձեռագրի անմիջական քննությունը հնարավոր է նկատել նկարչի աշխատանքի ոճը: Նա աշխատում է նուրբ, գեղանկարչական ոճով՝ կիրառելով տոնային երանգավորման հնարքները: Ներկերի թափված տեղերում նախնական գծանկարը բացվել է, և տեսանելի է, որ այն շատ հստակ է և արվել է լավ նկարչի ձեռքով: Ավետարանիչների դիմանկարներում կրկնվում են այն տիպերը, որ մեզ ծանոթ են վերը քննված Հ^ն 7599, 7630 և 7645 ձեռագրերից: Այստեղ տեսնում ենք ավետարանների հեղինակների խոշոր կերպարները, որոնք պատկերված են նույնքան բարդ ճարտարապետական շինությունների հենքի վրա: Այս ձեռագրի ավետարանական շարքի տեսարանների մեջ կիրառված պատկերազրահան տարբերակները բնորոշ են տվյալ դպրոցին: «Մնունդը» ներկայացված է ընդլայնված խմբագ-

րությամբ՝ մոգերի և հովիվների երկրպագությամբ, «Տեառնընդառաջը»՝ դասական, կանոնիկ տարբերակով, իսկ «Ննջումը» գրեթե լիովին կրկնում է «Թարգմանչաց» Ավետարանի» այդ տեսարանի հայտնի տարբերակը՝ Մաղքոսի ձեռքերը հատող հրեշտակի կերպարով⁶¹:

Բողոքյան գրադարանում կա 1335 թ. Եկեղյաց գավառում Ներսես վանականի կողմից գրված մի Ավետարան (Arm. Հ^ս 4, 229, 4-5): Ձեռագրի զարդանախշային ամբողջ հարդարանքն արված է միագույն, գծանկարի ոճով, իսկ ավետարանիչների դիմանկարները՝ բազմագույն գեղանկարչական եղանակով: Ավետարանիչների «դիմանկարները» նկարել է բարձրակարգ մի վարպետ հունական լավ գաղափարից (մանրանկարներն ունեն ավետարանիչների անունները՝ հայերենով և հունարենով): Մատթեոսը, Մարկոսն ու Ղուկասը պատկերված են նստած դիրքով, երեք քառորդ դարձվածքով, մեզ արդեն ծանոթ բարդ ճարտարապետական շինությունների հենքի վրա: Սովորական դարձած գունային գամմային մանրանկարիչն ավելացրել է սևին տվող մուգ կապույտը, որ նա օգտագործել է միայն ավետարանիչների հանդերձանքի համար: Հանդերձի մանր, բարդ և մանրակրկիտ կերպով դժգրված ծալքերը թեթևակի անհանգիստ ուրիշ են հաղորդել մանրանկարին: Պետք է նաև նշել, որ գործող անձանց ոտքերի և ձեռքերի պատկերման մեջ առկա է նուրբ պլաստիկա, նրբագեղություն (գծանկարի վարպետության գլխավոր չափանիշներից մեկը): Ավետարանիչների դեմքերը բավականաչափ տարբեր են միմյանցից և այնքան են անհատականացված, որ թվում է, թե սրանք իրական կյանքում գոյություն ունեցած մարդկանց պատկերներ են:

Կարող էր արդյո՞ք Ներսես գրիչը, որը գրել է Ավետարանի բնագիրը, լինել նաև մանրանկարների հեղինակը: Այս հարցին դժվար է պատասխանել, առավել ևս, որ մենք ձեռագիրն անմիջականորեն ուսումնասիրելու հնարավորություն չունենք:

Նշված առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Բարձր Հայքում նկարազարդված մի շարք ձեռագրերի, այն է՝ գոր-

ծող անձանց խոշոր չափերով ներկայացնելը, կեցվածքի հանդիսավորությունը, բարդ ծալագարդարանքներով հանդերձանքը, լուսաստվերի միջոցով ծավալային լուծման պատրանք ստեղծելու ունակությունը, երբեմն գործող անձանց զգացմունքային վիճակի արտահայտումը, մարդկային մարմնի ճիշտ պատկերումը, ետին պլանը բարդ ճարտարապետական շինություններով հագեցնելու հակումը հնարավորություն են տալիս որոշակի հավանականություններով մի շարք անստորագիր պատկերազարդ ձեռագրեր կամ էլ առանձին մանրանկարներ համարել Բարձր Հայքում ստեղծված: Այսպես՝ թղթի վրա գրված և գլաձորյան հայտնի մանրանկարիչ Թորոս Տարոնացու նկարազարդած Մատ. Հ^ս 353 Աստվածաշնչին հավելված է մագաղաթե նկարազարդ մի թերթ, որի վրա պատկերված է Մովսես մարգարեն (նկ. 78): Այդ թերթը որևէ կապ չունի Տարոնացու ստեղծագործության հետ: Ոճական առումով այն հարում է Ժ. Բարձր Հայքի մանրանկարչությունը, իսկ ավելի ճշգրիտ՝ մոտ է Հ^ս 7645 Ավետարանի մանրանկարիչներից մեկի՝ Առաքելի ստեղծագործությանը: Մովսեսին ներկայացնող մանրանկարում հատուկ ուշադրություն է դարձված նրա հանդերձի ծալքերի պատկերմանը: Սրանք ընդգծված են ուրվագծով: Երբ համեմատում ենք Մովսեսի կերպարը Առաքելի նկարած Մատթեոսի «դիմանկարի» հետ, այդ կերպարների ակնհայտ նմանությունն աչքի է զարնում: Երկու դեպքում էլ տեսնում ենք նույն խիստ արտահայտություն ունեցող դեմքը, փոս ընկած մուգ աչքերը, որոնք ընդգծված են թավ, սև հոնքերի կամարներով: Նմանություն կա նաև օգտագործված ներկերի գամմայի և նույնիսկ մանրանկարները շրջանակող պարզ զարդանախշերի միջև:

Ինչպե՞ս է Մովսես մարգարեին պատկերող մանրանկարն ընկել Ժ. Բ. սկզբին Գլաձորում ընդօրինակված ձեռագրի մեջ: Հավանաբար, այդ մանրանկարը Գլաձոր է բերվել որպես ընծա այդտեղ կատարելագործվելու եկող բազմաթիվ հոգևորականներից մեկի կողմից: Բացառված չէ, որ մանրանկարը կարող էր Գլաձոր բերած լինել անձամբ Թորոս Տարոնացին, որը դարասկզբին այցելել էր Երզնկա (250, 86): Կասկածից վեր է մի բան՝ այս մանրանկարը

⁶¹ Բնագրում կա անճշտություն (տե՛ս Յովհ., ԺԸ. 10-11 - Ս. Վ.):

պատրաստվել է Բարձր Հայքի գրչատներից մեկում:

Ձևավորման բնույթով, ոճով և մանրանկարների նկարման ձևով մեր խնդրո առարկա նահանգում ստեղծված հուշարձանների շարքին կարելի է դասել նաև Մատենադարանի Հ^մ 4059 Ավետարանը: Նրա գլխավոր հիշատակարանից պահպանվել է միայն պատուհիկ, որից հետևում է, որ այն 1321 թ. ընդօրինակել է Կարապետ գրիչը, կա նաև կազմողի անունը՝ Հովհաննես: Այս ձեռագրի նկարազարդման համակարգի և մանրանկարների նմանությունը ԺԳ-ԺԴ. դդ. սահմանագծին Երզնկայի, Բաբերդի, Կարինի գրչատներում ստեղծված մանրանկարչական մի շարք հուշարձանների նկարազարդումների հետ թույլ է տալիս ենթադրելու, որ այս Ավետարանը նկարազարդվել է հիշատակված քաղաքների գրչատներից մեկում կամ էլ, որ այն ծաղկած մանրանկարիչը ծագումով այս գավառներից էր:

Այս ձեռագրում տեսնում ենք մեզ արդեն ծանոթ զարդանախշերի ձևավորման գծանկարային ոճը, որը զուգակցվում է գեղանկարչական ոճով արված ավետարանիչների «գիմանկարների» հետ: Ավետարանների հեղինակների կոթողային կերպարները պատկերված են մուգ կապույտ հենքի վրա, ուր հստակորեն կարելի է ընթերցել երկաթագրով գրված նրանց անունները: Ծարտարապետական կուլիսներն այստեղ նվազագույնի են հասցված, մինչդեռ ավետարանիչների երկաթագրով գրված անուններն զբաղեցնում են ետին պլանի ամբողջ դաշտը: Ավետարանիչների կեցվածքի հանդիսավորությունը, ինչպես կերպարների, այնպես էլ հանդերձի ծալազարդարանքների վերացականությունը նրանց վայելչատեսություն և կոթողայնություն են հաղորդում (նկ. 79-82):

ԺԴ. դ. երրորդ քառորդում Նատեր գրիչն⁶² Ալնոց վանքում գրել է բավական մեծադիր մի ձեռագիր (48,5×32,5 սմ չափսի

⁶² Հայտնի Նատեր գրիչը ծագումով Կարնո գավառի Կան գյուղից էր, ԺԴ. դ. քառասնական թվականներին ընտանիքով գաղթել է Ղրիմ, ուր Սուրխաթ քաղաքի Սուրբ Խաչ վանքում շարունակում էր ձեռագրեր ընդօրինակել: Քսան տարի անց նա իր որդիներից մեկի հետ վերադարձել է հայրենիք, ուր բնակություն է հաստատել Խաղտիք գավառում և շարունակել ձեռագրեր ընդօրինակել:

501 թերթ), որը պարունակում է Սարգիս Շնորհալու Կաթողիկյա թղթերի մեկնությունը՝ Մատ. ձեռ. Հ^մ 1529: Ձեռագիրը նկարազարդել է մանրանկարիչ Առաքելը, որի անունն առկա է մանրանկարների հիշատակագրություններում: Այսպես՝ 5ա էջում պատկերված են օրհնող Քրիստոսը, ում առջև կանգնած է Հակոբ առաքյալը, իսկ ներքևում պատկերված են երեք պատվիրատու⁶³: էջի ստորին ճախ անկյունում կարելի է կարդալ հիշատակարանի մի պատուհիկ, ուր խնդրում են հիշել Առաքել ծաղկողին. «//[ա]ղաչեմ յիշել անմոռաց ի մեղսաքաւիչ [յաղաւթս ձեր] //գԱռաքել ծաղկաւղս»: Այդ մանրանկարը շատ վատ է պահպանվել: Շատ ավելի լավ է պահպանվել Հովհաննես առաքյալի Ա. թղթի մեկնություն շքեղ հարդարված տիտղոսաթերթը, որի գլխազարդն ունի հինգ խոշոր մեղալիոն: Կենտրոնականում Քրիստոս-էմանուէլի դիմանկարն է՝ փառքի պսակով, որ բռնել են հրեշտակները: Կողմնային մեղալիոններում գետեղված են իրական (առյուծներ) և մտացածին (սֆինքսներ) կենդանիների հերալդիկ պատկերներ, որոնց շրջանակներում կարելի է կարդալ նկարչի անունը. «Սուրբ տեսանաւղք գԱռաքել ծաղկուս աղաչեմ յիշել ի Տէր եւ աշխատողք ի սմա յիշեջէք յաղաւթս» (364ա): Մեղալիոնի մեջ պատկերված Քրիստոսի, հրեշտակների և լուսանցազարդի վերևը՝ Հովհաննես առաքյալի դեմքերը վատ չեն պահպանվել և հնարավորություն են տալիս կարծիք կազմել մանրանկարչի վարպետություն մասին: Նա հստակորեն օգտագործել է գեղանկարչական եղանակը և կարողացել է ճիշտ կառուցել մարդկային մարմինը: Բոլոր այս առանձնահատկությունները բնորոշ են այդ ժամանակաշրջանի Բարձր Հայքի մանրանկարչությունը:

ԺԴ. դ. վերջին և հատկապես ԺԵ. դ. սկզբին Բարձր Հայքի մանրանկարչություն արվեստում նկատվում են որոշակի փոփոխություններ: Սկսվում է աստիճանական և կտրուկ անկում ոչ միայն արվեստի, այլև նահանգի ընդհանուր մշակութային զարգացման ասպարեզում, որը կապված էր նա-

⁶³ Այն, որ պատվիրատուն մի հոգի չէ, իմանում ենք 424ա էջից. «Յիշեցէք ի Տէր... գմիեղեն եղբայրութիւնն... Անլոց վանից, որք եռափափազ սիրով ետուն գրել գլուսաւոր վարդապետութիւնս. առաջի Աստուծոյ յիշեցէք զիս՝ գնուսստ գրիչս»:

հանգի քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման հետ: Այդ ժամանակաշրջանից մեզ հասած փոքրածիվ պատկերագարդ ձեռագրերից միայն առանձին օրինակներ են, որ գեղարվեստական արժեք ունեն: Դրանց շարքին է պատկանում հիշատակված՝ 1361 թ. Ճաշոցը, որի գծանկարային պատկերներն ավելի հին ձեռագրերից արված պատճեններ են և գեղարվեստական արժանիքներով զգալիորեն գիջում են ԺԴ. դ. սկզբի գործերին:

* * *

Այս ուսումնասիրության մեջ քննված են ԺԱ-ԺԴ. դդ. Բարձր Հայքում ստեղծված և գեղարվեստական հարդարանքի առումով ամենաարժեքավոր ձեռագրերը, որոնցից շատերը մանրանկարչության արվեստի իսկական գլուխգործոցներ են և պերճախոս ձևով վկայում են այդ ժամանակաշրջանում նահանգի մշակութային կյանքի վերելքի մասին: Գրչության արվեստի և մանրանկարչության բուռն ծաղկումն այս շրջանում անքակտելիորեն կապված է Գլաձորի համալսարանի հետ սերտ համագործակցություն ծավալած Երզնկայի բարձրագույն հոգևոր դպրոցի հետ: Հայտնի է, որ Երզնկայի հոգևոր դպրոցը գլխավորող որոշ գործիչներ կրթություն էին ստացել Գլաձորի համալսարանում: Նրանց թվում էր Կիրակոս Երզնկացին (ԺԳ. դ.), որը համալսարանն ավարտելուց հետո պետք է փոխարիներ նրա ուսուցչապետին, սակայն գերադասեց վերադառնալ հայրենիք և գլխավորել Երզնկայի դպրոցը (101, 50): Նրա զարմիկ Հովհաննես Երզնկացին (Պուղ) նույնպես կրթություն էր ստացել Գլաձորում, իսկ Երզնկա վերադառնալով՝ վարդապետի կոչում էր ստացել և ակտիվ մանկավարժական, գիտական և հոգևոր գործունեություն էր ծավալել: Մեզ արդեն ծանոթ գրիչ և մանրանկարիչ Մխիթար Երզնկացին ձեռագրեր էր ընդօրինակում ինչպես Երզնկայում, այնպես էլ Գլաձորում (26, 104): Նշանակալի էին նաև երզնկացի գործիչների կապերը կիլիկյան գրչության կենտրոնների հետ: Այսպես՝ հայտնի է, որ արդեն հիշատակված Հովհաննես Երզնկացին իր մի շարք բարոյախրատական և փիլիսոփայական ճառերն ու քարոզները գրել է Կիլիկիայում, ուր վանական դպրոցներում դա-

սախոսություններ է կարդացել (16, 25): Այս փաստերը պերճախոս կերպով վկայում են այն գործուն և աշխույժ կապերի մասին, որոնք գոյություն են ունեցել միջնադարյան Հայաստանի գրչության արվեստի այնպիսի խոշոր կենտրոնների միջև, ինչպիսիք էին՝ Երզնկայի, Գլաձորի և Կիլիկիայի բարձրագույն դպրոցներն ու համալսարանները: Մի կենտրոնից մյուսն էին տեղափոխվում նաև ձեռագրեր: Երզնկայի, Կարինի և Բաբերդի գրադարաններում կային ոչ միայն նշված դպրոցների, այլև բյուզանդական գրչության արվեստի նմուշներ, և սա բավական կարևոր դեր է խաղացել գրքի ձևավորման տեղական արվեստի զարգացման մեջ:

Այդպիսի զարգացած, բարձր մասնագիտական մակարդակ ունեցող արվեստը, անկասկած, համապատասխանում էր այն հասարակության բարձր պահանջմունքներին, որին այն սպասարկում էր: Այդ ժամանակաշրջանի գեղագիտական հայացքների, արվեստի հանդեպ վերաբերմունքի, նրա նշանակության գիտակցման մասին պատկերացում են տալիս այդ շրջանի աչքի ընկնող գործիչների աշխատություններում պահպանված առանձին մտքեր: Նրանց մեջ, իհարկե, գերակայում էր քրիստոնեական գաղափարախոսության հիմնարար այն միտքը, որ միայն գերագույն ճշմարտության ճանաչումն է ճանապարհ բացում դեպի երկնային գեղեցկության ընկալումը: Այդ առումով միջնադարյան հայտնի գիտնական, խոշոր հասարակական և եկեղեցական գործիչ Հովհաննես Երզնկացին գրել է. «Աստուծո պատվիրանները և բնության օրենքները հասու և հասկանալի են դառնում մարդկանց համար առարկայական, գեղարվեստական կերպարների օգնությամբ» (200, 352): Այդ միտքը նորություն չէր. դեռևս Կեղծ Դիոնիսիոս Արիսպագացին գրել է. «Մեր միտքը կարող է բարձրանալ մինչև երկնային նվիրապետության անէական ընդօրինակում և հայեցում միայն իրեն հատուկ նյութական ուղղորդության միջոցով, համարելով, որ տեսանելի գեղեցկությունը անտեսանելի գեղեցկության արտացոլումն է» (206, 118): Հույն հեղինակների հայերեն թարգմանված աշխատությունները, ուր նրանք անդրադառնում էին աստվածաբանության, փիլիսոփայության և նրանց աղերսվող գեղագիտական տարբեր

հարցերի, ուսումնասիրվում էին հայ գիտնականների կողմից, որոնք դրանց սեփական մեկնաբանություններն էին տալիս: Դեռևս Դավիթ Անհաղթը արվեստը համարում էր իմացություն միջոցներից մեկը (93, 37): Այդ մտքի ավելի ծավալուն տարբերակը գտնում ենք Հովհաննես Երզնկացու մոտ, որը տալիս է արվեստի սահմանումը. «Իսկ ինչ է իրենից ներկայացնում արվեստը, եթե ոչ ամենի կատարումը իր ժամանակին և պատշաճ ձևով, մարգարեական իմաստությունից և գիտակցմամբ» (200, 351): Այլապես, Երզնկացին արվեստից պահանջում է համապատասխանել տվյալ միջավայրի, տվյալ ժամանակի պահանջներին, ինչը նաև նշանակում է աջակցել ազգային արվեստի հիմունքների պահպանմանը: Սա լուրջ խնդիր էր, որը մեծ նշանակություն ուներ մահմեդական շրջապատի առկայության պայմաններում:

Այդ ժամանակաշրջանում մարդուն բնական ձևով պատկերելու հետաքրքրությունն արտահայտվել էր աշխարհիկ և հոգևոր իշխանության գործիչների դիմանկարների մեջ: Հովհաննես Երզնկացին շատ հետաքրքիր բնորոշում է տալիս այդ դիմանկարներին. «եթե ինչ-որ մեկը հղացել է նկարչական ներկերով և բազմաթիվ երանգներով պատկերել ողջ և գեղեցիկ բանական մարդու իրական պատկերը... ապա նա այդ բանն անում է... փարատելու համար բնածին թախիծն իր հոգու, որը լի է սիրով իրեն շրջապատող էակների նկատմամբ» (200, 355): Այստեղ շատ արդիական են հնչում խոսքերը հոգու մասին, որ լի է սիրով: Շրջապա-

տող աշխարհի նկատմամբ արթնացող այս հետաքրքրությունը, մարդու ընկալումը որպես արարչության պսակ, որպես կատարյալ Աստծո նմանություն՝ նոր միտումներ էին արվեստի մեջ, և Լ. Դուռնովոյի խոսքերով ասելով՝ վկայում էին «եվրոպական Վերածննդի նկատմամբ» որոշակի «ուշադրության մասին» (123, 244):

Այս ամենը վկայում է Բարձր Հայքի հոգևոր կյանքի բարձր մակարդակի մասին. այստեղ երկար ժամանակ ծաղկում էին մշակույթն ու արվեստները: Չնայած որ մեզ է հասել այդ նահանգում ստեղծված մանրանկարչական հուշարձանների անշան մասը, սակայն նրանց մեջ գտնվող մանրանկարչական իսկական գլուխգործոցները վկայում են ԺԳ-ԺԴ. դդ. այդ շրջանի գրչության կենտրոնների ապրած վերելքի մասին: Ծաղկում էին ապրում նաև ճարտարապետությունը, բարձրաքանդակի արվեստը, որմնանկարչությունը և կիրառական արվեստի տարբեր ճյուղերը, որոնց մասին տեղեկանում ենք գրավոր աղբյուրներում պահպանված հաղորդումների շնորհիվ: Այդ նահանգի տարածքը, որ հետագայում մտել է նոր ձևավորված թուրքական պետության կազմի մեջ, գրկվել է ինչպես բնիկ հայկական բնակչությունից, այնպես էլ նրա ստեղծած նյութական արժեքներից: Այսօր ճարտարապետական հուշարձանների ավերակները, ինչպես նաև գրչության արվեստի մեզ հասած հուշարձաններն այդ նահանգում հայկական մշակույթի երբեմնի բուռն ծաղկման թանկարժեք վկայություններն են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ԺԱ. դ., Երզնկա. Աւետարան, Մատ. ձեռ. Հ^մ 2877:

Գրիչ՝ Գրիգոր, Հետագայ՝ 1183 թ. ստացողներ՝ Գոհար և Խոսրովիդուխտ բարեպաշտ տիկնայք, նաև Սուքիաս և Մարգար կրօնաւորներ, որոնք ձեռագիրը գնել են և նուիրել Երզնկայի Ս. Աստուածածնի եկեղեցուն, նորոգող՝ Վարդաւան: Մագաղաթ, 219 թերթ, 32,5×26: Կազմ՝ տախտակէ միջուկով գրոշմագարդ կաշի:

Մանրանկարչութիւն. խորան՝ 5բ-16ա, Աւետում՝ 17բ, չորս աւետարանիչներ՝ 18ա, Ծնունդ՝ 19բ:

Գլխաւոր հիշատակարանը չի պահպանվել, 75բ էջի լուսանցքում պատկերուած խաչի կողքին պահպանվել է գրչի մակագրութիւն. «Սուրբ Խաչ, յորժամ ծագիս յարեւելից, լուսաւորեա՛ գ Գրիգորի հոգին գրագրին, ամէն»: 217բ էջում կա ձեռագրի 1183 թ. նորոգման հիշատակարան. «եղբարքս այս կրանաւորեալ... Մարգարէս եւ Սուքիաս, միաշունչ եւ միախորհուրդ քննեալ ի բովս աստուածային եւ գտեալ եւ յստակ եւ առանց խառնուածոյ յամենայն չարեաց, սակաւիկ ինչս կալեալ եւ զկարիս ամենայն ի բաց եղեալ, եւ այնու գնեալ զԱւետարանս զայս՝ զբարբարոս աստուածային սքանչելեաց, յաղագս աւկտակարութեան հոգւոյ և մարմնոյ, եւ Աստուածածնին, զոր եւ |218ա| անուն տեղոյն էրեզ անուանի: Արդ, կանայք ե[ր]կուք բարե[պ]աշտք եւ սրբասնեալք, որոց անուանք նոցա կոչին Գոհարս եւ Խոսրովիդուխտ, սոքա բարի խորհուրդ յանձն առեալ վասն հոգւոյ աւգտի եւ անուն յաւիտենական արարեալ, վասն յիշատակի իւրեանց եւ ծնողաց իւրեանց եւ ազգականաց իւրեանց գնեցին զԱւետարանս զայս Գոհարս եւ Խոսրովիդուխտն՝ տուեալ զբազումս զգինս կանայք այս, եւ զսակաւըն՝ Մարգարէն եւ Սուքիասն, եւ ետուն յանուն Աստուածածնի[ն] առաջի բազում [վկ]այից... Արդ, նորոգեցաւ Աւետարանս այս ի թուականութեանն Հայոց ՈԼԲ. (1183), յամս աստուածապատիւ տեառն Գրիգորի Հայոց վերայդիտողի, եւ

յանիշխանութեան ազգի մերոյ, յորում տիրեալ [է]ին տաճիկք ի վե[րայ բազում] եւ համատ[արած ի ծ]ագաց մինչ[եւ ի] ծագս երկրի, առեալ զամրոցանիս Հայ[ոց] աշխարհաց եւ գտեարսն նոցա մերկացուցանէին ի քրիստոսակ[ան] հաւատոցն, կամ սրախոխողս առնէին... Արդ, յաւուրք յայս չարութեան ոչ մոռացան զչահ հոգւոյ կանայքս այս՝ Խոսրովիդուխտ եւ Գոհարն, եւ Սուքիաս երէց վանաց սուրբ եւ ընտիր կրանաւոր, այլ արարին զԱւետարանս զայս յիշատակ իւրեանց եւ ծնաւդաց իւրեանց, եւ ազգականաց իւրեանց, ի վայելումն Աստուածածնին, եւ ոչ ոք կալցի ձեռն դորա, միայն Սուքիասն: Տէր Յիսուս Քրիստո՛ս, ի քո յահաւոր գալստեանդ ողորմեա՛ Գոհ[ա]րին եւ Գրիգորի՝ առն իւրում, եւ Խոսրովիդուխտոյ, եւ իւրոցն ամենայնի, եւ Սուքիախսն եւ նորա ննջեցեալոցն, եւ ինձ՝ նորոգաւդի գրոցս, եւ իմոցն... Յիսո՛ւս, լույս փառաց, ողորմեա՛ Վարդաւանս, զի գործ մի բարի գործեաց յիս. ամէն»: Պահպանվել է ձեռագրի նոր կազմը պատրաստողներին՝ Վահանի և Բահրի հիշատակագրութիւնը:

Գրականութիւն՝ 49, 493. 58ա, 239-40. 121, 26. 123, 206. 132, 97. 245, 69, 73. 84, Ա.:

2. 1089 թ., Կարին, Խաչկա վանք. Աւետարան, Մատ. ձեռ. Հ^մ 6264:

Գրիչ՝ Հայրապետ քահանա: Մագաղաթ, 287 թերթ, 29×24: Կազմ՝ տախտակէ միջուկով գրոշմագարդ կաշի:

Մանրանկարչութիւն. խորաններ՝ 1բ-9ա, անվանաթերթեր՝ 10ա, 88ա, 138ա, 222ա:

Յիշ-ի հատուած՝ 286բ. «Բայց արդ, գրեցաւ Աւետարանս այս ի թուականիս ՇԼԸ. (1089), ի Կարին գաւառի, ի վանս Խաչկայ, ընդ հովանեաւ Սուրբ Յարութեանս եւ առ ոտս աստուածընկալ Սուրբ Նշանին Դաւթայ, յառաջնորդութեանն տէր Ստեփանոսի՝ հեզի եւ խոնարհի, զոր հատուցէ նմա Քրիստոս, եւ ի տէր Աստուածատրի, եւ ի հայրապետութեանն տէր Գրի-

գործի հայոց կաթողիկոսի, ի բռնակալութեանս տաճկաց Մահմատ անուն կոչեցելոյ, ձեռամբ Հայրապետի՝ մեղապարտ եւ անարժան կրաւնաւորի... եւ զՆերսես [գ]րիչ վարդապետ իմ... եւ զԱբրահամ կազմող սորա... եւ զանարժան կրաւնաւորի զՀայրապետի աշխատաւորի...»:

Գրականութիւն՝ 49, 489. 58ա, 237-8. 84, Բ. 132, 95-99:

3. 1200 թ., Աւագ վանք (Երզնկայի մոտ). Աւետարան, Բրիտանական գրադարանի ձեռ. Հ^մ 13654:

Գրիչ՝ Վարդան երեց, ստացողներ՝ Սարգիս եպիսկոպոս եւ իր եղբայր Ամբակում: Մագաղաթ (կրկնագիր), 384 թերթ, 37,5×29: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմազարդ կաշի:

Մանրանկարչութիւն. Թուղթ Եւսեբի առ Կարախանոս՝ 1բ-2ա, խորաններ՝ 3բ-6ա, անվանաթերթեր՝ 8ա, 117ա, 182ա, 294ա, լուսանցազարդեր, սկզբնատառեր:

Յիշ-ի հատուած՝ 381ա. «Արդ, յանգելեալ կատարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Վարդանա յետնեալ եւ անպիտան կրաւնաւորի, հրամանաւ եւ ծախիւք նախասացեալ վերագիտող նահանգիս Տէր Սարգսի եւ եղբար Ամբակումա, ի գաւառիս, որ կոչի Դարանաղեաց եւ ի լեռինս Սեպուհ, յորում կայ հանգստարան Սուրբ Լուսաւորչին՝ առընթեր գոլով վկայուհւոյ բնակութեան եւ շիրմի, որ կոչի Մանէ այրք... ի մենաստանին, որ կոչի Աւագ վանք, առ դրան Սրբոյ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Առաքելոցս... յամի Ռերորդի յիսներորդի, միով թվով պակաս (649+551=1200)

կատարեցաւ գծագրութիւն...»:

Գրականութիւն՝ 49, 637-648 (646). 80, 25-36. 127, 77-97, 261, [20, 21, 46]:

4. 1201 թ., Աւագ վանք. Աւետարան, Մատ. ձեռ. Հ^մ 10359:

Գրիչ՝ Ստեփանոս, ծաղկողներ՝ Հովհաննես (1201 թ.), Ընձեր Նաղաշ (1250.), ստացողներ՝ Ստեփանոս (1201 թ.), Ահարոն քհնյ (1250 թ.): Մագաղաթ, 310 թերթ, 30,5×21: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմազարդ կաշի:

Մանրանկարչութիւն. խաչ՝ 4ա, խորան-

ներ՝ 5բ-10ա. Ե. և Զ. խորանների ետևի կողմում (թերթեր 8ա-9բ) - չորս աւետարանիչների պատկերներ (աւելացուած են 1250 թ.), անվանաթերթեր՝ 11ա, 91բ, 145բ, 238ա:

Յիշ-ի հատուած՝ 305բ. «Ի վեցհարիւրերորդի յիսներորդի թուաբերութեանս Հայոց նոր տումարիս (1201), ի գաւառիս Դարանաղեաց, առ ստորոտով լերինս Սեպուհի, ի հրեշտակակրաւն անապատիս կոչեցելոյ Աւագ վանք, յորս բնակեն արք ամենայրարիք, ճգնասէրք եւ անուանիք, ի հովանեաւ նախագահ եւ մեծափառ Սրբոյ Աստուածածնի եւ Կարապետի, եւ Սրբոյ Առաքելոյ, յառաջնորդութեան սրբասնեալ եւ մաքրափայլ երկուց հարազատից՝ տեառն Սարգսի եւ Ամբակումա, զորս Տէր Յիսուս պահեսցէ արտաքոյ ամենայն փորձութեանց. ամէն... |307բ| եւ գրեցաւ ձեռամբ Ստեփանոսի մեղապարտ եւ փցուն գրչի յ[ը]նտիր եւ ի ստոյգ աւրինակէ՝ ամենայն արհեստիւք լի եւ պատարուն, որ էր Կոզմաի հոետորի... |308բ| (1250 թ.) «Արդ, կազմեցաւ սուրբ Աւետարանս հրամանաւ ստացողի սորա Ահարոնի սուրբ եւ պատուական քահանաի, ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ զաւակաց... եւ զիս՝ մեղապարտս զՅովանէս եւ զԾնողսն մեր յաղաթս յիշեսլիք, որ կազմեցի զսուրբ Աւետարանս ի թուականիս հայոց ՈՂԹ. (1250)»:

Գրականութիւն՝ 57, 12-3, 256. 84, Բ., 56, 137-163. 144, 78. 251, 9, pl. 3,4:

5. 1200-1202 թթ., Աւագ վանք. Մշոյ ձառնատիր, Մատ. ձեռ. Հ^մ 7729:

Գրիչ՝ Վարդան Կարնեցի, ծաղկողներ՝ Ստեփանոս եւ Անանուն, պատվիրատու ստացող՝ պարոն Աստուածատուր Բաբերդացի: Մագաղաթ, 609 թերթ (17 թերթ այժմ Մխիթարյան միաբանութեան Վենետիկի, 1 թ.՝ Վիեննայի մատենադարաններում են), 70,5×55: Կազմը չի պահպանուել:

Մանրանկարչութիւն. Քրիստոսը գահի վրայ, Մկրտութիւն, Ծնունդ՝ 1բ, Մուտք Երուսաղեմ՝ 325բ, անուանաթերթ՝ 2ա: Գլխազարդեր, լուսանցազարդեր, սկզբնատառեր:

Յիշ-ի հատուած՝ 602ա. «Արդ, զկառացէ բանս, թե զի՞արդ եւ ո՞ւստի զայս

աստուածային գանձս ստացաւ այր մի պատու[աւ]որ՝ ռայիս Բայբերդոյ, անուն յորջորջի Աստուածատուր, յոյժ աղքատասէր, մանաւանդ թէ եւ աստուածասէր, որ եւ սա իսկ ցանկացող եղեալ այսմ սուրբ մատենիս եւ պատուական մարգարտիս, ապա այնուհետեւ շողկապեցաւ ի սէր այսմ սուրբ բուրաստանիս, եւ ապա հոգ տանելով, թե ով արդի՞ւք կարող իցէ հասուցանել զիս ի փափագ բաղձանացս... Եւ ապա խնդիր արարեալ յոգնախմաստ գրչի եւ գտեալ քահա[նա]յ մի ի գաւառէն Կարնայ, որումն Վարդան կոչեցեալ, հմուտ եւ |602բ| վարժ ամենայն արհեստի գրչութեան, եւ նա յանձին կալեալ եւ աւգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ եւ ապա զկնի երից ամաց եհաս յաւարտ բանիս:

Եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ՝ նմանեալ անբարչտին Յուլիանեայ, փքացեալ լեռնացեալ եհաս ի Թէոդուպաղիս, եւ անդին կամէցեալ անցանել յաշխարհս Հայոց եւ Վրաց: Եւ ամենեկին մոռացաւ զԱստուած... կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն:

Իսկ աւգնականութեամբն Աստուծոյ եկին հասին զաւրքն Վրաց եւ մեծն Զաքարիէ, հանդերձ ի վանեի հարազատաւն իւր եւ այլ աստուածասէր իշխանաւք եւ նախարարաւք եւ յոգնախումբ խառնիճաղանջ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն Տաճկաց եւ յանխնա կոտորեցին զնոսս, զոմանս ձերբակալ արարին, եւ ոմանք ի փախուստ դարձան...

Եւ յայսմ ամի ի սաղբելոյ չարին ըմբռնեցաւ այրս Աստուածատուր ի ձեռն ամիրային իւրոյ Ալագին կոչեցեալ: Որ եւ ի ձեռն այնմ գազանի Աստուածատուրն այն ընկալաւ զվախճան, եւ յափշտակեցին զստացուածս նորա, եւ ոչ մնաց եւ ոչ մի ինչ, բայց այս գիրքս: Ապա դատաւոր քաղաքին ձեռն յառաջ տարեալ զիւր պատճառանաւք բանս ի վերայ եղեալ, թէ հինգ հարիւր պաւտատ մնաց ինձ առ Աստուածատուրն: Եւ իբրեւ այս այսպէս եղեւ, ապա այնուհետեւ չու արարեալ դատաւորն, եկն բնակեցաւ ի հռչակաւոր քաղաքն Խլաթ, եւ Բ. ամ

կայր ի պահեստի, եւ ոչ ոք գիտաց, եւ ապա կամեցաւ վաճառել, եւ ոչ ոք կարէր գամագիտ լինել, զի բազմագին կամէր վաճառել:

Ապա հարազատ եղբարք անձինք Գ. քահանայք գեղջն Դանջան կոչեցեալ, որ է առ դուրս քաղաքին, եւ անուանք նոցա միումն Ստեփանոս, իսկ միւսոյն Վարդապետ եւ երրորդին Յովաննէս, որ եւ նոքա ազդ արարին մեզ, զի էին միաբանք Սուրբ Առաքելոցս, նամակ արձակելով, թէ. Գանձ պատուական կայ ի քաղաքիս: Եւ մեր լուեալ զայս՝ եռափափագ սիրով շողկապեցաք ի սէր սմին: Ապա հոգելից եպիսկոպոսապետս մեր՝ տէր Եսայի, զմովսիսականն ստացեալ սէր, ելեալ Դ. քահանայիւք՝ փոյթ ընդ փոյթ գնաց ի Խլաթ՝ յաղագս խնդրոյս այսորիկ, եւ ոչ կարաց հասնել ի փափ[ագ] բաղձանացն, քանզի ժամանակն ձմեռային [էր]: Եւ այլ եւս սպաս[աւ]որք սուրբ ուխտին, որ կոչի Արծկէոյ վանք, եւ նոքա եւս քան զեւս բորբոքեցան ի սէր սուրբ կտակիս: Իսկ Բոծորն այն... իբրեւ ետես զՋերմեռանդ սէր մեր, եւս առաւել զարծկէցի սուրբ քահանայիցն, ապա զգինն եւս առաւել աճեցոյց... յայնժամ սուրբ եպիսկոպոսս մեր թոյլ տուեալ վայր մի եւ եկն ի վանքս, ապա նոյնպէս եւ արծկեցի քահանայքն դարձեալ գնացին եւ մի ամ այլ մնաց գիրքս առ Բոծորն այն... Սակայն թէպէտ եւ սէր սմին ստիպէր զմեզ, բայց գնոյն անկարող էաք...»:

Ձեռագիր գերութիւնից փրկագնելուն մասնակցեցին բազում մարդիկ, ամէն մեկը տուեց ըստ իր կարողութեան: Բոծորը հինգ հազար դրամ էր պահանջում, բայց հոգեւորականները կարողացան գնել չորս հազարով:

Գրականութիւն՝ 49, 699-726. 84, Բ., 57 27-32, 42-48. 56, 137-162, 121, 29, 240, 208-220, 251, 9, pl. 2.

6. 1223 թ., Բաբերդ. Ճաչոց, Մխիթարեան Վիեննայի մատ. ձեռ. Հ^մ 5:

Գրիչ Յովհաննէս Բաբերդացի, ծաղկող Մկրտիչ եպիսկոպոս: Թուղթ, 431 թերթ, 36,5×25: Կազմը կորած է: Մանրանկարչութիւն. անուանաթեր-

Թեր՝ 6ա, 136ա, 232ա, 334ա, աւետարանիչներ՝ 93բ, Յարուլթիւն՝ 135բ, Մոգերի երկրպագութիւն՝ 231բ, Զաքարիա կաթողիկոսի դիմապատկերը՝ 334բ, լուսանցազարդեր, սկզբնատառեր:

Յիշ-ի հատուած՝ 75բ. «...Յիշեա՛ եւ զիս՝ զողորմելիս, / զՅովանէս Բաբերդացիս», ծաղկողի՝ 134բ. «Նուաստ եւ ներգեւեալ ոգի Մկրտիչ եպիսկոպոս եւ սպասաւոր բանի գրեցի, ով որ գլխատակարանն ջնջէ՛ Աստուած զինքն ջնջէ ի դպրութենէն կենաց. ամէն»:

Գրականութիւն՝ 82, 20-21. 57, 137-138:

7. 1227 թ., Աւագ վանք. Ճառընտիր, Մատ. ձեռ. Հ^մ 3779:

Գրիչներ՝ Կարապետ, Ղազար, Աստուածատուր, ծաղկող՝ Սոսթենէս, ստացող՝ Տուրք: Թուղթ, 545 թերթ, 46,5×32: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմազարդ կաշի: **Մանրանկարչութիւն.** անվանաթերթեր, գլխազարդեր, լուսանցազարդեր, սկզբնատառեր:

Յիշ-ի հատուած՝ 545բ. «Արդ, ի թուականութեանս Հայոց ՈՂԶ. (1227), ես նուաստ ծերս եւ անպիտան ծառայս Աստուծոյ Տուրք անուն կոչեցեալ... ցանկացող եղէ վարուց և պատմութեանց սրբոց հարցն և հայրապետացն և ճգնագգեաց մարտիւրոսացն, և վկայիցն Քրիստոսի... ի յիշատակ բազմամեղ անձին իմոյ, և ծնաւդաց և եղբարց իմոց ի Քրիստոս ննջեցելոցն: Իսկ այսմ բարի առաջարկութեանս եղե[ւ] մեզ թելադիր և առիթ և յորդորիչ սուրբ և պատուական հարքս և առաջնորդք սուրբ ուխտիս Աւագ վանիցս՝ Ստեփանոս, Պետրոս [և Յո]հան, որ է ի լերին Սուրբ Լուսաւորչիս մերոց, ի գաւառիս Դարանաղեաց գերադրական սուրբ մենաստանս, զարդարեալ գեղեցկաշէն սրբարանաւք և սպասիւք պատուականաւք...»: 429բ. «Տէ՛ր Աստուած, ողորմեա՛... գրչի անպիտանի Կարապետին և Ղազարու վարդապետին, և եղբաւր իւրոյ Աստուածատրին՝ սպասաւորաց Սուրբ Լուսաւորչին անապատին, որք զգիրքս աւարտեցին...»: 117ա. «ԶՍոսթանես, որ զգիրքս ծաղկազարդեաց և զամուսին նորա... [յիշեցէ՛ք]»:

Գրականութիւն՝ 49, I, 57, 149-154, 84, Ա.:

8. 1227 թ., Աւագ վանք. Ճառընտիր, Մատ. ձեռ. Հ^մ 6196:

Գրիչներ՝ Կարապետ, Յովհաննէս, Ներսէս, ստացող՝ Վարդան: Թուղթ, 612 թերթ, 50×33: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմազարդ կաշի:

Մանրանկարչութիւն. անուանաթերթեր, գլխազարդեր, լուսանցազարդեր, սկզբնատառեր:

Յիշ-ի հատուած՝ 46ա. «Քրիստո՛ս Աստուած... ողորմեա՛ Վարդան վարդապետին, որ յառաջարկու եղեւ ձեռնամուխ լինել ի գիր գրոցս...», 404ա. յիշեցէ՛ք «և հայր Կարապետին՝ սուրբ և ընտրեալ եւ պատուեալ կրանաւորին եւ հմուտ և յառաջադէմ յարհեստ գրչութեան...», 227բ. «Տէ՛ր Աստուած... ողորմեա՛ Յովաննէս քահանային և Ներսէս գրչիս», 387բ. «...և Ներսեսի սուտանուն գրչի և ծնողաց. ամէն»: Հիշատակվում են և այլ անձինք, որոնք մասնակցել են գրքի ստեղծման աշխատանքներին, ինչպէս քահանա Ատոմը, որը կոկեց թուղթը և որին օգնում էին Աստուածատուր, Փիլիպոս և Թիմոտ պատանիները»:

Գրականութիւն՝ 49, 853, 57, 146-9, 84, Բ.:

9. 1230-1232 թթ., Կարին. Աւետարան, Մխիթարեան Վեներաբիլի մատ. ձեռ. Հ^մ 325/129:

Գրիչ, ծաղկող՝ նկարիչ՝ Գրիգոր, որդի Խաչատուրի: Մագաղաթ, 396 թերթ, 36×27: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմազարդ կաշի:

Մանրանկարչութիւն. անուանաթերթեր՝ 1ա, 185ա, սկզբնատառեր, լուսանցազարդեր:

Յիշ-ի հատուած՝ 390բ. «...ի վաղուց ժամու ցանկացեալ էի այսմ անգիւտ մարգարտիս և ամենալաւ աւերինակիս, որ կոչի Գրիգորի Մուրղանեցոյ, ճարտարագիծ գրչի և անյաղթ գիտնականի: Եւ ըստ յաջուելոյն Աստուծոյ՝ եղեւ ըստ կամաց իմոց: Եւ ես ըստ կարի իմում՝ բազում աշխատութեամբ գծագրեցի իմով ձեռամբ և ծաղկազարդեալ յաւերինեցի ոսկով պատուականաւ, հրով փորձեալ և զտեալ, և երփն երփն երանգաւք և պայծառ դեղովք դրոշմեալ, ներգործեցի ի սմա ազգի ազգի քանդակս խորանաձեւս և երկնամանացս և այլ մանրամասն ինչ ծաղկաւք՝ ըստ տուեցելոյ ինձ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ»:

Գրականութիւն՝ 49, 864-868, 57, 163-5. 60, 567-574, 55, I, 57-62, 57, 163, 31, 70-72, 127, 76-97, 58, 102-114:

10. 1232 թ., գրչուժյան տեղն անհայտ. Թարգմանչաց Աւետարան, Մատ. ձեռ. Հ^Գ 2743: Բնագիրը գրուել և խորանները նկարուել են, հաւանաբար, Կարինի շրջակայքում, թեմատիկ նկարները և աւետարանիչների դիմապատկերները՝ Արցախում:

Գրիչ՝ Տիրացու, ծաղկող՝ Գրիգոր, ստացող՝ Յովհաննէս: Մագաղաթ, 374 թերթ, 30×23: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմագարդ կաշի:

Մանրանկարչուժիւն. Թուղթ Եւսեբիոս՝ 1բ-2բ, խորաններ՝ 3բ-10ա, աւետարանիչներ՝ 11բ, 295բ, անուանաթերթեր՝ 12ա, 115ա, 185ա, 296ա: Թեմատիկ նկարներ՝ Քրիստոսի ծնունդը՝ 15ա, Մկրտուժիւն՝ 20ա, Իւղաբեր կանայք՝ 114ա, Խորհրդաւոր ընթրիք՝ 170ա, Դժոխքի աւերումը՝ 184ա, Աւետում՝ 188բ, Ննջումն Աստուածամոր՝ 294ա: Լուսանցազարդեր, սկզբնատառեր: Ձեռագրի թեմատիկ նկարները արուել են 1312 թուին, հաւանաբար Արցախում (Խաչենում): Լուսանցքներում աւելի ուշ աւելացուած են մանրանկարներ:

Գլխաւոր հիշատակարանը չի պահպանվել, կան փոքր հիշատակագրուժիւններ, 10ա. «ի թւիս ՈՁԱ. (1232) ծաղկագարդեցաւ սուրբ Աւետարանս բարեխաւս առ Քրիստոս Յիսուս...», 115ա. «Տէ՛ր Աստուած, ողորմեա՛ Գրիգորի ծաղկողի. ամէն, ամէն»:

Գրականութիւն՝ 45, 97, 57, 180-1, 58, 179, 347-356, 121, 32, 22, 167-170, 68, 102-114, 84, Ա.:

11. 1266 թ., Երզնկա. Գրիգորի Աստուածաբանի Առ նաւարկութիւնն ճառք, Մատ. ձեռ. Հ^Գ 823:

Գրիչ՝ Յովաննէս: Թուղթ, 290 թերթ, 16,8×12: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմագարդ կաշի:

Մանրանկարչուժիւն. գլխազարդեր, լուսանցազարդեր, սկզբնատառեր, սպանուած Յովաննէս վարդապետի պատկերը՝ թերթ 171բ:

Յիշ-ի հատուած՝ 172ա. «...գրեցաւ ձեռամբ իմով, նուաստ և անարժան... Յովանիսի... ի քաղաքիս, որ կոչ[ի]... Եզնկայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս, ի թուակաւութեանս Հայոց է՛ծ. ու ի ժե. (1266) ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ, եւ յարհիպիսկոպոսութեանն տեառն Սարգըսի Մարհասիայի մեծի, եւ ի քրիստոսապսակ իշխանին մերոյ պարոն Յոհանիսի... Արդ, աղաչեմ... յիշել զհոգևոր հայրն իմ՝ զուսու/172ա/ցիչն և վարդապետն զտեր Յո-

վաննէս... որ սպանեալ եղև յանաւրինաց սրով զինեալ, ո՛հ դառն տրտմութեան և անմխիթար ոգոյ... այլ աղաչեմ զքեզ, հայր, անմեղադիր լինել քեզ՝ ինձ, եթէ սխալանք ինչ կայ ի դմայ... զի դեռ առաջին գիրն այս է...»:

Գրականութիւն՝ 57, 339-40, 84, Ա.:

12. 1269-1270 թթ., Երզնկա. Աստուածաշունչ, Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան մատ. ձեռ. Հ^Գ 1925.

Գրիչներ և ծաղկողներ՝ Մխիթար, Յակոբ, Մովսէս: Ստացողներ՝ տէր Սարգիս և պարոն Յովաննէս: Թուղթ, 603 թերթ, 36×26: Կազմ՝ տախտակէ միջուկով դրոշմագարդ կաշի:

Մանրանկարչուժիւն. անուանաթերթեր՝ 9ա, 277ա, 300ա, 332ա, 335ա, 346ա, 352ա, 355ա, 358ա, 377ա, 381ա, 404ա, 470ա, 486ա, 496ա, 513ա, 526ա, 541ա, 547ա, 575բ, խորաններ՝ 459բ-469ա, Աւետարանիչներ՝ 470բ, 486բ, 496բ, 513բ, առաքեալներ՝ 265բ, 277բ, 300բ, 332բ, Մարգարէներ՝ 335ա, 337ա, 339ա, 341ա, 341ա, 342ա, 343ա, 344ա, 346ա, 349ա, 351ա, 381ա: Թեմատիկ նկարներ՝ Մովսէս մարգարէն պատուիրանաց տախտակներ ստանալիս՝ 8ա, Մովսէս մարգարէն գրում է գրքի առաջին տառը՝ 9ա, Քրիստոսը շրջապատուած քերովքներով և հրեշտակներով՝ 8բ, Յեսու Նաւեայ՝ 106ա, Գողոնիէլ, Գեղէոն, Սամսոն՝ 119ա, Սամուէլ՝ 193ա, Յոբը և նրան տեսութեան եկած կինն ու ընկերները՝ 241ա, Շուշանը և ծերերը՝ 404ա, Եզեկիէլի տեսիլը՝ 414բ, Պողոս առաքեալ՝ 541բ, Ղուկաս աւետարանիչ՝ 575բ: Ձեռագրի լուսանցքներում բացի զարդերից, կան նաև թեմատիկ նկարներ և մարգարէների ու առաքեալների պատկերներ:

Յիշ-ների հատուածներ՝ 290ա.

«Արդ, գրեցաւ պրակս աստուածային սուրբ մարգարէին Եսայիա հրամանաւ եւ արդեամբք տեառն Սարգսի սրբասէր եւ արհիական եպիսկոպոսի եւ նորին հարազատ որդւոյ՝ աստուածասէր եւ քրիստոսապահ իշխանին պարոն Յոհաննէսի ի վարժումն անձին իւրոյ եւ ի պէտս սրբոյ եկեղեցւոյ, եւ ի խրատ աստուածատուր եւ դեռաբոյս զաւակաց իւրոց՝ Ներսէսի եւ Գրիգորէսի», 307բ. «անցո՛ւ ամենակեցոյց փրկիչ, ի Մխիթարայ եղկելի գծուէ սորա...», 426ա. «զՅակովբոս գծաւղ սորին՝ զսուտանուն կրաւնաւոր, և զհոգեւոր եղբայրն իմ զՄխիթար՝

սրբասէր կրաւնաւոր, աղաչեմ յիշել ի Տէր...», 405բ. «... այլ եւ զանպիտան գրիչս զՄովսէս գրողս եւ զծնողսն իմ աղաչեմ յիշել ի Տէր...», 581ա. «Յիշեսջիք եւ զՄխիթրուկ դպիրն, որ զթուղթս կոկեաց բազում աշխատութեամբ եւ յօժարութեամբ սրտիւ»:

Գրականութիւն՝ 57, 374-7. 61, VIII, 401-416, 77, IV, 11-12, 28-39, 66, 260, 66, pl.84-86:

13. 1280 թ., Երզնկա. Սահմանք իմաստասիրութեան Դաւթի Անյաղթի, Մատ. ձեռ. Հ^{մբ} 1746:

Գրիչ՝ Մխիթար, ստացող՝ պարոն Յովաննես: Թուղթ, 277 թերթ, 18,7×13: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմագարդ:

Մանրանկարչութիւն. անուանաթերթ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի պատկերով՝ 2ա: Անուանաթերթեր, լուսանցագարդեր, սկզբնատառեր:

Յիշ-ի հատուած՝ 117ա. «...զՄխիթար դպիր սուտանուն գրիչ, ի սուրբ աղաւթս յիշեա՛ ի Քրիստոս աղաչեմ...», 196ա. «Ո՛վ, աստուածասէր իշխան, պարոն Յովհաննէս, անմեղադիր լեր սղալանացս, զի օրինակն սխալ էր եւ ես՝ տխմար»:

Գրականութիւն՝ 57, 909-910, 84, Ա.:

14. 1287 թ., Երզնկա՝ Ս. Աստուածածնի վանք. Աւետարան, Մատ. ձեռ. Հ^{մբ} 5247:

